

ԳՐԻԳՈՐ ՄԵՐՃԱՆՈՑ

ԻՍՍՈՎ

Պէյրուք  
1972

ALO

ԳՐԻԳՈՐ ՄԵՐՃԱՆՅՈՒ

ԻՄ ԿՏԱԿԵԼ



Պ Ե Ց Ռ Ո Ւ Թ

1972

AVO



---

ԳՐԻԳՈՐ ՄԵՐՃԱՆՅՈՒ

AVO

## ՎԱՍՆ ՑԱՌԱԶԱԲԱՆԻ

Միշտ չէ, որ նուիրումն ու առաքինութիւնը իրենց արժանի գնահատութիւնը ստացած են, դժբախտաբար :

Ունեցած ենք անձնուրաց մարտիկներ որոնք, համակ զոհարերութիւն դարձած, իրենց ամբողջ գոյութիւնը ընծայարերած են ազգային վեհ տեսլականի մը իրականացումին, եւ սակայն, իրենց վարձատրութիւնը եղած է անտեսումն ու մոռացումը :

Ունեցած ենք ինձինի քաջամարտիկներ, որոնք նախընտրած են ծառայել ու գործել ամենշմար եւ ստուերի մերժելու, մերժելով ինձնացուցաբաւմը եւ արդար գովեստն անգամ, եւ սակայն իրենց անչափ համեստութիւնը, կրկնակ փառաւրաւոմի փոխան, լոկ ուրացումի եւ անշբացումի արժանացած է :

Ունեցած ենք տիպար յեղափոխականներ, ժողովուրդի ու հայրենիքի ծառայութեան ցմահ կամաւրագրուած մարտիկներ, որոնք սրբազն պարտաւորութիւն եւ ուխտ նկատած են ընդհանրական նրապատակներու եւ գգուումներու կենսագործումին նուիրուիլը, որոնք առաջին գծի վրայ եղած են անձնուրացաւթեան մէջ, իսկ յետին շարքի վրայ՝ յիշատակութեան եւ անձնայարգութեան պահուն։ Բայց ազգային այն հայականութիւնը, որուն նակատը դափնեզարդող նուիրեալներ հանդիսացան այդ խոնարի հերոսները, փոխանակ լաւագոյն երախտագիտութեան ու մեծարանի արժանացնելու իր գաղափարանուէր գաւակնելը, իր անտարբերութեամբ քաջալերած է միայն քաջութիւնն ու զոհարերութիւնը մաքսանենգողները, որոնք եկած են սեփականացնելու վաստակ մը որուն կերտումին մէջ քըրտինիքի ու արիւնի ոչ իսկ կարի մը ունին, եւ պմնուելու փառքով մը որուն որքան անարժան, նոյնեան ալ օտար են եղած։

Եւ վերջապէս ունեցած ենք իրենց երդումին եւ սրբութեան անքակտելիօրէն կապուած հայրենասէրներ, որոնք, միջնու ետք, պահած են մաքուր իրենց խղնմտութիւնը, չեն դադրած ըսելէ ճըշմարտութիւնը եւ պաշտպանելէ արդարութիւնը բոլոր հանգամանքներու մէջ։ Արհամարհած են ամեն պատիս, գովէ ու պերճանք որպէսզի մնան համերաշխ իրենց մաքուր, անխարդախ սկզբունքներուն, ազգային ու մարդասիրական ներշնչումներուն հետ։ Անգոսնած են սպառնալիքն ու ննշումը, հանդուրժած բազում նենգամիտ վերաբերումներ, բայց երբեք չեն դրժած իրենց երդումը, չեն ատած ինչ որ կը պաշտէին երէկ, չեն ուրացած՝ նշմարիտ հայրենասիրու-

ALO

թիմն ու ազգասիրութիւնը, որոնց հետեւողական հաւատարմութիւն խռոսացեր էին:

Այսպիսի խռոսարի, իր ծառայութեանց մէջ անարդար վերաբերումի արժանացած, զրեքէ մոռացումի մատնուած տիպար մը եղած է հերոսը սոյն յուշագրին, որուն էջերէն կ'արտացոլայ օրինակելի նկարագրին ազնիւ հայուն, գաղափարական մարդուն եւ հայ ժողովուրդի ազատագրական պայքարի երախտաւորին:

Իր կեանքը եղած է, դեռ պատաճի տարիէն, մտասեւեռում մը, մշտավառ ձգումն իր ժողովուրդի ազատագրութեան, ազգային անկախութեան կերտումին, հայութեան նուիրական Դատին յաղթաճակին: Ծառայութիւնը իր մէջ եղած է կիրք, նուիրումը՝ նը-պատակ, որուն օտարութի են եղած փառքի ու վայելքի ակնկալութիւնը, իսկ խորշելի՝ սնապարծութիւնն ու իմքնագովութիւնը:

Արդար վրդովում եւ հետեւողական սկզբունքայնութիւն կ'արտայայտն անոր սուր քննադատութիւնները, գանձալով վկայութիւն նեպինակի բարձր նկարագրին, զիջումն ու դիմաշրջութիւնը ձաղկոզ ոգիին որ իր գաղափարին ու համոզումներուն նկատմամբ ուզզափառ հաւատարմութիւն ցուցաբերողինը կրնայ ըլլալ: Համեստ ու անշահախնդիր մարտիկն է ան, որ չի կրնար չարտայայտել իր ցասումը գաղափար եւ վստահութիւն չարշահեռներուն, ընդդէմ մարդոց՝ որոնք, անարժան ժառանգորդներն են դարձած յեղափոխական սութեղի մը վաստակին, այս մէկը մսիելով ու շահագործելով նախատակներու համար որոնք ոչ միայն անճնական ու խմբակային են, այլեւ, մանաւանդ, կը կազմեն ծիսումը կազմակերպութեան ոկրթնական ծրագրին ու գործունեութեան:

Ընթերցողը կրնայ չբաժնել, գուցէ, յուշագրքի հերոսին գաղափարական բոլոր հայեացքները, բայց ամէն տարակոյսէ վեր է որ, ընթեռնելէ ետք այդ էջերը, կը լեցուի յարգանեռով անոր հերոսի խռնարի ու անձնուէր անհատականութեան, իր սկզբունքայնութեան մէջ միշտ անշեղ մնացած հայու նկարագրին հանդէալ:

Այս յուշագրքի հրատարակութիւնը, անոր հերոսի բարեկամներուն կողմէ, յարգանեքի ու երախտագիտութեան համեստ տուրք մըն է ընծայուած Համեստ Հայուն, որուն հանդէալ եք ներկան գունուեցաւ պարտազանց, սակայն ապագան պիտի գիտմայ, անտառակոյս, զինք վարձատրել արժանաւորապէս հայ ժողովուրդի ազգային ազատագրութեան պատմութեան մէջ:

## ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՈԹԵՐ

Ծնած եմ Ա. Պոլիս (իտիրնէ), 25 Մարտ 1880-ին,  
ոռուսահպատակ ծնողքէ: Մեր ընտանիքը կը բաղկանար,  
բացի ծնողներէս, եօթ եղբայր-քոյրերէ:

Մինչեւ ութ տարեկան յաճախած եմ Պուլկարական  
վարժարան, իտիրնէի մէջ: 10 տարեկանիս զիս դրկած են  
Պուլկարիա, ամուսնացած քրոջս մօտ: Այստեղ մտայ  
պուլկարական Կիմնազիա եւ իմ կրթութիւնը, ընդհանուր  
առմամբ, եղաւ պուլկարերէնով որ եկաւ բռնելու մայրենի  
լեզուիս տեղը: Իսկ հայերէնը սորված եմ լոկ ինքնաշխա-  
տութեամբ, առանց երբեք տիրանալու նախնեացս քաղց-  
րաբարբառ լեզուին: Սակայն խոստովանիմ, որ պուլկարե-  
րէնի մէջ ունեցածս հմտութիւնն ալ եղաւ փրկարար: Շր-  
նորհիւ ասոր կրցի ճողովրիլ թրքական արիւնու թաթէն:  
Երեքուկէս ամիս զիս անլուր չարչարանքի ենթարկեցին  
բանտի մէջ: 72 անգամ ալ հարցաքննեցին մերթ տանջանք  
եւ մերթ համոզկեր լեզու գործածելով ինծի դէմ: Հակա-  
ռակ զիս խոստովանեցնելու բոլոր միջոցներուն կրցի պա-  
հել ինքնութիւնս, հայկական ծագումս: Պուլկարերէնի  
մէջ ունեցածս հմտութիւնը կասկած չթողուց պուլկար ա-  
ռեւտրական մը ըլլալուս մասին . . . :

Հ. Յ. Դաշնակցութեան շարքերը մտած եմ 1890-ին  
ազգիս ազատագրութեան ու վերելքին ծառայելու անդառ-  
նալի երդումով, զոր պահած եմ ու կը պահեմ հաւատար-  
մութեամբ: 1905-ին մեկնած եմ Կովկաս իմ մասնակցու-  
թիւնս բերելու հայ-թաթարական կոիւներուն, որոնց մէջ  
իմ ժողովուրդի Փիղիքական ապահովութեան սատարած  
ըլլալուս իրականութիւնը մեծ սիոփանք մը եղած է ազ-  
գիս ցաւով մրրկող հոգիիս: Դեռ համեմատարար փոքր  
տարիքէս փորձառական շրջան մը ապրած եմ պայթու-  
ցիկ նիւթերու պատրաստութեան մէջ: Քրիստափորի եւ

Քենտիրեանի փորձերուն անյաջողութիւնը, ինչպէս նաեւ Սուլթանի դէմ գործուած մահավորձին ձախողութիւնը խոր վէրք ձգեցին սրտիս մէջ: Ինքնարերաբար մղուեցայ ուսումնասիրելու, հասկնալու պատճառները այդ ձախողութեանց, եւ տիրանալու պայմթուցիկ նիւթերու պատրաստութեան գաղտնիքներուն, որպէսզի չկրկնուին նախկին սխալները եւ խնայուին թանկագին կեանքեր ու կորուստը անսգիւտ պատեհութիւններու: Առաքելութեան մը կատարումի ընթացքին վիրաւորուած եմ 32 տեղէ, քիչ թէ շատ ծանր վէրքեր ստանալով: Ինքզինքս վտանգի ենթարկելով չեմ ձգած որ անդամահատեն զիս սրունքէս, ամենաանյուսալի մէկ պահուն, երբ այսպիսի վիրահատութիւն մը փրկարար կը նկատուէր վերապրելու համար: Գանձակի ստիկանատան մէջ գտնուող 12 ստիկանները կորուստի մատնեցի: Նմանապէս օղահան ըրբ Ղարապաղի (Շուշի) հին պարսկական պալատը, ուր բոյն գրած թաթարները արգելք կ'ըլլային մեր Փետայիններու գործունէութեան: Շնորհիւ այս ահաբեկութեան յաջողութեան նոր սպանդ մը ինայուեցաւ Շուշիի բնակչութեան:

1909-ին մասնակցած եմ Հ. Յ. Դաշնակցութեան 9-րդ Ընդհանուր Պատգամաւորական ժողովին, ներկայացընելով Պոլիսը (Վիշապ): Ասիկա տեղի ունեցաւ Սահմանադրութեան հոչակումէն անմիջապէս ետք: Պիւրօ կառավարութիւնը, իւրաքանչիւր Պատգամաւորի ընդունակութիւնը նկատի առնելով, անոր համապատասխան առաքելութիւն կը թելադրէր: Ինծի առաջարկուեցաւ Երեւանի ստիկանապետի պաշտօնը, զոր մերժեցի առարկելով, որ այս մէկը իմ գործը չէր: Մանաւանդ որ կապուած էի Վիշապի կեղրոնին, որ ինծի վստահած էր չըջանի լրտեսները ահաբեկելու գործը: Ասոր համար Ամերիկայի կեղրոնտկան կոմիտէն ինծի դրկած էր 4006 տոլարի գումար մը, որ պիտի օգտագործուէր առաջադրուած նպատակի յաջողութեան համար:

Նոյն չըջանին Պիւրօ կառավարութիւնը առաջարկեց ինծի որ կազմակերպեմ Ղարապաղի պաշտպանութիւնը: Պայմաններ դրի եւ ինքնապաշտպանութեան միջոցներ ուղեցի: Գոհացում չտրուեցաւ: Ես ալ խորհուրդ տուի իրենց որ չառնեն քայլեր որոնք ժողովուրդի ջարդուելուն պատճառ կրնան ըլլալ: Զիս չլսեցին: Մեկնելէս ետք 12 մառվերիստներէ բաղկացած խմբակ մը կը դրկեն Ղարապաղ:

**Ամիս մը ետք լուր կը հասնի որ բոլորն ալ սպաննուած են, իսկ 4000 շուշեցիներ ալ սուրէ անցուած։ Պիւրոյի մարդոց ապիկարութիւնն ու անհեռատեսութիւնը իր պտուղը տրած էր։**

Հակառակ բոլոր գառնութիւններուն եւ յուսախարութիւններուն, երբ, 1918-էն ետք, ինձի առաջարկուեցաւ Պոլիս դանուող եւ թրքական իշխանութեանց հետ գործակցող հայանուն լրտեսներու հաշուեյարդարը կատարել, երկար չվարանեցայ։ Ընդունեցի այս առաքելութիւնը եւս որ յաջողութեամբ պսակուեցաւ։

Ազգիս հանդէպ մատուցածս վերջին ծառայութիւնը եղաւ հայակեր Սայիտ Հալիմի ահարեկումը, որուն մասին ընթերցողը երկարօրէն կը կարդայ յուշերուս մէջ։

Ասկէ ետք քաշուեցայ հասարակական ծառայութենէ։ Որովհետեւ տեսայ ու համոզուեցայ որ Հ. Յ. Դ. Պիւրոն ինկած է անսկզբունքայնական, կուսակցութեան հիմնական Ծրագրէն շեղած եւ կազմակերպութիւնը անձնական շահերու ծառայեցնող մարդոց ձեռքը։ Այս մասին եւս ընթերցողը կընայ գոհացնել իր հետաքրքրութիւնը թերթատելով յուշերուս հետագայ էջերը։

Այսօր երբ իմ մայրամուտի սեմին կը դտնուիմ, կ'ափսոսամ միայն որ փառաւոր կազմակերպութիւն մը, դարձած շահագործումի միջոց անարժան զեկավարներու ձեռքին մէջ, կը ծառայեցուի ճիշդ այն նպատակներուն դէմ, որոնց օգտին համար Զաւարեաններ ու Քրիստավորներ ծնունդ տուին Դաշնակցութեան եւ զոհուեցան ալ անոր համար։

**Թող Պատմութիւնը, ապագան հանդիսանայ արդար դատաւորը։**

## ԻՆՉՈ՞Ւ ՔԱՇՈՒԱԾ ԵՄ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵՆԵՆ

Երկար տարիներ անձնուիրաբար ծառայեցի Հ. Յ. Դաշնակցութեան դրօշին տակ, ունենալով այն համոզումը, որ Ազգիս ու Հայրենիքիս օգտակար ըլլալու, ժողովուրդիս ազատութիւն ու խաղաղութիւն բերելու լաւագոյն ճամբան էր անիկա: Իմ ուխտս եղաւ նուիրական, բոլորանուէր: Զնանչցայ երկիւղ ու վհատութիւն նոյն իսկ ծանրագոյն պահերուս: Համոզուած էի որ ազգին փրկութեան զինուրագրուողը պարտի տոկալ զոհողութիւններու գերագոյնին, ի պահանջել հարկին կեանքն ալ վրայ տալ: Առանց պայքարի եւ նուիրումի չէր կրնար ըլլալ յաղթանակ, եւ ես պատրաստ էի տալու, ընծայելու ամբողջ ունեցած:

Իմ մէջ առաջին ընկրկումն ու հիասթափութիւնը զգացի այն օրէն, երբ կրցի նշմարել տարբերութիւնը որ կար գործնական եւ ցուցական հայրենասիրութեան միջեւ: Երբ ծանօթացայ զեկավարներու, գործ ունեցայ անունով առաջնորդներու հետ որոնց գործը ժխտումն էր իրենց իօսսածին, որոնք ոչ միայն անկարող էին կենսագործելու կուսակցութեան ազգանուէր նպատակները, այլեւ, իրենց վարքագիծով ու սկզբունքային կեցուածքով, կեցած էին ժխտական դիրքի վրայ, հայրենիքի ու ժողովուրդի անունով կը ծառայէին ամէն բանի, բացի այդ ժողովուրդէն ու հայրենիքէն, որոնց նուիրուիլը Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիրներուն համար կեանքի նպատակ ու մեծագոյն վարձատրութիւն էր:

Կսկիծը սրտիս մէջ հետեւած եմ, ականատես եմ եղած իրենց պաշտօնին ու դիրքին անարժան շէֆերու գործունէկութեան: Արիւնած է սիրտս չափելով խորութիւնը աղէտներուն որոնց ենթարկուած է մեր ժողովուրդը զինք զեկավարել յաւակնողներուն ապիկարութեան եւ անհեռա-

տեսութեան հետեւանքով։ Բմբոստացած է հոգիս, անհանգստացուցած է զիս խղճմտանքի ձայնս, սակայն շարունակած եմ գործս այն յոյսով, որ դառն փորձութիւնները կրնան զգաստացնել մեծամիտներուն եւ անկարող մարդոց։ Այս սպասումը, սակայն, արդիւնք չէ տուած, ժամանակի սահանքին հետ նոր ճախողութիւններ ու վիշտեր կուտակուած են, որոնց դինը վճարողները եղած են Հայ Յեղափոխութեան զինուորագրեալ ազնիւ մարտիկներն ու մեր բարի եւ արի ժողովուրդը։

Կուսակցութեան շարքերէն ներս իմ մղած պայքարի երկար տարիներուն յաճախ գտնուած եմ մեր կուսակցական բարյականութեան հետ անհաշտ, անոր հակասող երեւոյթներու առջեւ որոնք ընդվեցուցած են զիս։ Բնաւ չեմ հանդուրժած գաղափարն ու սկզբունքը շահի ու փառքի հասնելու միջոց դարձնողները։ Միշտ դատապարտած եմ ընթացքը կեղծ ու շահածարաւ մարդոց, որոնք առաջին փախչողն են զոհողութեան առջեւ, բայց որոնք կը սիրեն, կը յաջողին պարծենալ ուրիշներու արեան ու քրտինքին վաստակով։

Որոշեցի քաշուիլ Դաշնակցութենէն երբ ալ համոզուած էի, որ անոր դրօշին ներքեւ աւելի երկար մնալը գործուած սխալներուն, ազգավճառ ու հայրենաքանդ արարքներուն մեղսակից ըլլալ պիտի նշանակէր։ Երբ ալ հետեւցուցած էի որ աւելի երկար պիտի չկրնայի չնչել ստեղծուած այդ ապականեալ մթնոլորտին մէջ։ Մարդիկ, ինքզինքնին Արամներու եւ Զաւարեաններու փառաւոր ժառանգութեան տէր նկատող այսպէս կոչուած չէֆեր, չէին ուզեր գիտակցիլ իրենց վնասակար ընթացքին։ Գիտակցարար կուրացեր էին, չէին ուզեր նշմարել որ կեանքի անիւը կը շարունակէր թաւալիլ, պէտք էր քայլ պահել անոր հետ, ետ չմնալ։ 32 տարուան փորձառութիւնը պէտք էր իրենց խելքը գլուխը բերեր որ անդրադառնային իրենց սխալներուն ազգային ու միջազգային կեանքի մէջ, ու որդեգրէին կեցուածք մը որ Հայ ժողովուրդի ներկայի շահերուն կը համապատասխանէ։

Քանի՛ առիթներով գրած եմ Հ. Յ. Դաշնակցութեան Վերին Արամիններուն եւ պահանջած կուսակցութեան ընդհ. գոյավիճակի եւ քաղաքականութեան վերաքընութիւն մը։ Քննադատութիւն չեմ ինայած ի սէր կուսակցութեան, Ազգին, Հայ ժողովուրդին, ի յարգանք

մեր բոլոր նահատակներուն որոնք տեսլականի մը համար զոհուեցան։ Բայց իմ բոլոր դիմումները, խնդրանքներն ու քննադատութիւնները անպատճառահան մնացին։

Դաշնակցութեան Պիւրոյին ղրկուած վերջին նամակիս մէջ երկու կարեւոր հարցեր գրի իրենց առջեւ։

Ա.՝ Մաքրագործում Դաշնակցութեան շարքերուն,

Բ.՝ Զանալ համաձայնութեան եզր մը գտնել ներկայ Հայաստանի Կառավարութեան հետ ու վերջ տալ շարունակուող անիմաստ եւ անօգուտ ընդդիմութեան։

Մինչեւ այսօր պատասխանի կը սպասեմ։ Եթէ հակառակ էին նամակիս բովանդակութեան, ընկերական տարրական քաղաքավարութիւնը կը պահանջէր որ պարզէին իրենց տեսակէտը եւ համոզէին զիս իմ կեցուածքիս սխալ ըլլալուն։

Ինչպէս ըսի՝ մարդիկ չբարեհաճեցան ուշադրութեան առնել դիմումս, որովհետեւ ես կուրօրէն հրամաններ գործադրողներ չէի, զիս կը նկատէին ըմբոստ եւ անկարգապահ, որովհետեւ չէի խուսափիր ըսելու ճշմարտութիւնը որ հաճելի չէր իրենց համար։ Դեռ փոքր տարիքէս սկզբունք դարձուցեր էի սեփական զատողութիւնը ուղեկից ունենալը։ Աչքերս փակ հետեւող չէի, ենթարկուելէ առաջ պէտք էր համոզուէի որ ինծի յանձնուող գործը իր յաջող արդիւնքը պիտի կրնար տալ։

Կուսակցական կարգապահութիւնը յարգող եղած եմ, առանց մոռացութեան տալու առաջարկի մը, որոշումի մը շուրջ վիճելու, վերաքննութիւն պահանջելու իրաւունքը որ նոյնքան նուիրական է։ Բայց այս մարդիկը կոյր հնագանդողներ կ'ուզէին կամ այդպիսիները կը նախընտրէին։ Կուսակցութեան 9-րդ Ընդհանուր Ժողովին, իմ կողմէ ներկայացուած տեղին ու վճռական առարկութեանս դէմ, Սիմոն Վրացեան տեղէն ցատկեց եւ գոչեց երեսիս սպառնական՝ «Քանի որ չես ընդունիր Վերին Մարմնին հրամանը, կը վոնտուի՛ս Դաշնակցութենէն»։ Խեղճը գեռ անծանօթ էր Գրիգորին անցեալին։ Զէր գիտեր որ իր երեխայ եղած ժամանակ Գրիգորը պատասխանատու գործերու մէջ էր Քրիստափորին եւ Ռոստոմին հետ։

Բնական է, որ ինծի կը մնար հեռանալ՝ բողոքելով Վիշապի կ. կ.ին։

Կարձ ատեն մը ետք կը ստանայի նամակ մը Ռուբէնէն որ կ'ըսէր.՝ «Գրիգոր, մենք քեզ չկրցինք ճանչնալ։

Մենք քեզմէ շատ գործեր կը սպասենք»: Այո՛, շատ ափսոս, որ մինչ այդ, մարդիկ գործադրութեան դրեր էին իրենց վտանգաւոր եւ նոյնքան մանկամիտ ծրագիրը, զայն վտահելով Տէլի Ղազարին ու Արսէն Միքայէլեանին: Հետեւա՞նքը՝ աղէտ: 24.000 հայերու ջարդ ու տեղահանութիւն: Բայց ո՞վ փնտուց կամ նուազագոյնը կախակայեց ասոր պատասխանատուները: Ո՞չ ոք: Մարդիկ, 32 տարիէ ի վեր բոլորուած փեթակին շուրջ, անոր մեղրը կը վայելիին: Թող ծծե՞ն, մինչեւ որ հատնի:

Կ'ուզեմ չեշտել կէտ մը – ես քաշուած եմ Դաշնակցութենէն եւ ոչ թէ հրաժարած: Կը շարունակեմ հաւատալ եւ իմ միջոցներով ծառայել Գաղափարին որ իմս եղած է դեռ պատանեկութենէս: Այդ գաղափարը չեմ կրնար ըմբռոնել անջատաբար հայրենիքիս եւ ժողովուրդիս անշահախնդիր ծառայութենէն, որ կը մերժէ ամէն անձնական ու հատուածական շահագիտութիւն, որ կուսակցութիւններու գոյութիւնը կ'ընդունի միջոց ծառայելու հայութեան, եւ ոչ թէ նպատակ որ ազգին ու հայրենիքին շահը կը ստորադասէ, կ'ուրանայ որպէսզի անձնական կեղտոտ ակնկալութիւնները բաւարարուին:

Ես այս կարգի Դաշնակցութիւն չեմ ճանչցած ու պիտի չճանչնամ:

Հետագայ էջերուն մէջ ես կը նկարագրեմ, թէեւ հակիրճ, այսուհանդերձ ամենայն հարազատութեամբ, Պիւրոյին եւ առանձին անհատներու հետ իմ ունեցած տարակարծութիւնները, վէճերը, որոնք զարգացան, խորացան եւ աստիճանաբար յանգեցան սկզբունքային հակասութիւններու, ստիպելով ինձի որ քաշուիմ Դաշնակցութենէն եւ ընդհանրապէս հանրային ամէն գործունէութենէ:

Իմ խիղճը հանգիստ է հիմա: Իմ համեստ միջոցներով, բայց հաւատքով ու ամբողջական նուիրումով ծառայած եմ ժողովուրդիս ու հայրենիքիս ազատագրութեան, ասոնց վերելքին: Եթէ աւելին չկրցի ընել, այդ մէկը իմ մեղքովը չէր: Մեղաւորները Ազգին Դատաստանին առջեւ թող բերէ պատմութիւնը:

## ԻՆՉՈ՞Ւ ԳԺՏՈՒԱԾ ԵՄ ՃԱՒԱՐԾ ՄԻՍԱՔԵԱՆԻ ՀԵՏ

Շաւարշի հետ անձնական բնոյթի որեւէ հաշիւ կամ հակառակութիւն չեմ ունեցած, եւ չեմ ալ կարծեր որ Շաւարշը ինձմէ աւելի լաւ ճանչցող մէկը գտնուի:

Իր բնութագիրը տալով յայտնեմ, թէ Շաւարշին մէջ քանի մը Շաւարշներ կան:

Առաջին նկատողութիւնս այն է, որ անիկա չէ եղած եւ ոչ ալ կրնար իրաւ յեղափոխական մ'ըլլալ: Իր նիւթապաշտ, շահադէտ ու սեւ-նախանձ բնաւորութիւնը ժըխտումը կը կազմէր ճշմարիտ յեղափոխականէ մը պահանջուող յատկութեանց: Մինչդեռ, այս մարդը, իր անչափ փառասիրութեամբ ու գոռոզամտութեամբ, սեփական կարողութիւնները գերազնահատելու անզուսպ մարմաջով չէր հանդուրժեր ոչ ոքի, մանաւանդ իրմէ կարող եղողները, որոնց նկատմամբ կը տածէր ատելութիւն: Զինք չափաւորութեան մէջ պահելու ճիգերը յաճախ ապարդիւն կը մնային: Հարկ էր հետեւիլ իրեն կրնկակոխ, եւ ամէն վայրկեան վար քաշել քղանցքը...:

Թուրքիոյ մէջ, Մահմանադրութեան հռչակումէն անմիջապէս ետք, թրքահայերու հոսանք մը սկսաւ դէպի Դաշնակցութիւնը: Ոգեւորութեան մզումով կուսակցութեան շարքերը մտածներուն մէջ կը գտնուէր Շաւարշը որ, իր մտաւորական կարողութեանց բերումով, աւելի շատ զեկավար եւ գիտակից ըլջանակներու մօտ գտնուեցաւ: Սկիզբ աշխատակցեցաւ «ԱԶԱՏԱՄԱՐՏ»ին, յետոյ ուղարկուեցաւ թրքահայաստան՝ «ՅԱՌԱՋ» թերթը խմբագրելու:

1915-ի արհաւիրքը եղաւ Շաւարշն ու զիս իրար մօտեցնողը: Սա յատկապէս այն օրերուն էր, երբ մեր գըլ-

խաւոր բոլոր ընկերները ձերբակալուած ու աքսորուած էին, իսկ մնացեալներուն եւ ընդհանրապէս պարզ շարքին վրայ ալ կախուած էր հաշուեյարդարի սպառնալիքը:

Աքսորէն դեռ ամիսներ առաջ ես կրցեր էի նախատեսել գալիք վտանգը: Զգուշացուցեր էի մեր բոլոր Ընկերներուն որ շուտով հեռանային Պոլիսէն քանի հնարաւորութիւն կար տակաւին: Հակառակ իմ թախանձագին պընդումներուս, գրեթէ մեծամասնութեամբ մերժեցին խորհուրդս, կարեւորութեան չառնողներ ալ եղան: Ոմանք ալ սպատափանացին անտեղի սկզբունքայնութիւն ցուցաբերելով, թէ՝ պիտի նախընտրէին ժողովուրդին հետ կրել ճակատագիր մը, որուն սահմանուած էին...: Շահրիկեանը ասոնցմէ էր. անդադար կը կրկնէր վեհանձնութեան հետ շփոթուող բարեմտութեամբ. «Մենք դասալիք չենք կրնար ըլլալ, Գրիգոր», կը բացականչէր ձեռքը սեղանին զարնելով:

Զգալով որ հետապնդումի տակ կրնամ ըլլալ, 15 օրը մէկ կը փոխէի բնակարանս: Մնայուն տեղափոխութեան մէջ ըլլալով կրցի հետքս կորսնցնել տալ: Ասիկա օգնեց օծիքս ազատելու:

Վրաս պուլկարական անցագիր կը կրէի: Պուլկարի հանգամանքով եւ պեխ ու մօրուք ածիլած՝ ինքզինքս կերպարանափոխած էի եւ կը շրջէի ազատ եւ աննկատ հետապընդող ոստիկաններէ՝ որոնք կը վիստային այդ օրերուն:

Շաւարշը երեք անգամ մահուրնէ ազատած եմ: Մէր Ընկերներու ձերբակալութենէն եւ աքսորէն ետք, սկսայ տենդագին փնտուտուքի մը: Արդեօք հետապնդումէ ու տարագրութենէ գերծ Ընկերներ մնացած չէին, որոնց կարելի ըլլար օգնել եւ փրկել: Իմացայ որ Շաւարշ դեռ չէ ձերբակալուած: Ամէն վտանգ աչք առնելով իսկոյն իւսկիւտար անցայ: Գացի տունը ուր կը բնակէր անիկա ինքզինք ձգած բախտին, տիսուր եւ յուսահատ, ամէն վայրկեան սպասելով ոստիկանի մը երեւումին որ պիտի գար ձեռնակալ անցընելու դաստակներուն եւ տանելու հոն, ուրկէ չվերադան ու ա'լ ետ պիտի չգային միւսները:

Գտայ Շաւարշը եւ յուսադրեցի զինք. թելադրեցի իրեն որ ինծի հետեւի. ըսի որ ապահով թաքստոց մը գըտած եմ իրեն համար, ուր կրնայ ապաստանիլ անվտանգ: Հետեւեցաւ առանց բառ մ'արտասանելու: Զինք տեղաւորեցի տուն մը որ իր յարմարութիւններով լաւագոյննե-

### ՐԵՆ ԷՐ:

Յարաբերութեան մտանք արտասահմանի հետ։ Տեղեկութիւններ կը ստանայինք զանազան աղբիւրներու միջոցաւ։ Կը պատրաստէինք տեղեկագիրներ եւ զանոնք կը յանձնէինք տարրեր դեսպանատուններու, որոնք կը տեղեկանային անցուղարձերուն եւ իրենց հերթին զանոնք արտասահման կը փոխանցէին։ Կ'աշխատէինք անդուլ որքան կը թոյլատրէին մեր նեղ պայմանները։

Դեռ Վարդգէսն ու Զոհրաալը աքսորուած չէին։ Միջոցը կ'ունենայինք խորհրդակցելու։ Ամէն կարելին կ'ընէինք արտասահմանն ու օտար տէրութիւնները տեղեակ պահելու թուրքիոյ ներքին կեանքին։ Առարկելով որ ճեռագիրները դժուար ընթեռնելի են՝ պահանջուեցաւ որ տեղեկագիրները մեքենագրեալ ներկայացնենք։ Ոչ գրամեքենայ ունէինք եւ ոչ ալ մեքենագրող։ Սակայն կրցի հարթել եւս այս դժուարութիւնը։

Յաճախ կ'երթայի Ռոպերթ Գոլէճ, ուր ունէինք ուսանողներէ եւ աշխատաւորներէ կազմուած խումբ մը, որուն անդամներուն ինքնապաշտպանութեան եւ զինավարժութեան դասեր կուտայի։ Խումբին մէջ կար Ընկեր մը, որ Գոլէճէն շրջանաւարտ ըլլալէ ետք, սոյն հաստատութեան մէջ կը պաշտօնավարէր։ Մեքենագրել գիտէր եւ կրնար տրամադրութեանը ներքեւ գրամեքենայ ունենալ։ Տրամադիր եղաւ գործակցելու։ Այսպէսով ունեցանք երրորդ աշխատակից մը։

Դեսպանատունները, որոնց հետ կը գործէինք՝ շատ գոհ էին մեզմէ։ Օր մը Շաւարչը գանգատեցաւ որ Ս. շատ տառասխալներ կ'ընէ։ անդլերէնն ալ տկար է։ «Շաւարշ, - ըսի, - եթէ դուն ամելի լաւը գիտես՝ զանայ ուղղել բոլոր սխալները։ Հազիր կրցեր ենիք գտնել մեր գործը դիւրացնող մէկը։ Պատճառ մի ըլլար որ կէս նամբան մնանք»։

Ս. ալ իր կարգին կը գանգատէր, թէ Շաւարշ լաւ վերաբերում չունի իրեն հանդէպ։ Կը ջանայի մեղմել առաջինին վանողական կեցուածքը եւ հանդարտեցնել երկրորդը որպէսզի գործը չտուժէ։

Երկու-երեք ամիս հազիւ անցած էր երբ Շաւարշը ըսաւ, խորհրդաւոր շեշտով, թէ Ս. յարաբերութեան մէջ է եղեր, իրը թէ, Ապահովութեան (Քըսմը Սիասի) Տնօրէն Ռիշատին հետ։ Պատասխաննեցի։ «Շաւարշ, ըսածդ ծանրակշիռ մեղադրանիք է, փաստեր ունի՞ս։ Եկուր հետեւինք

իր յարաբերութիւններուն: Եթէ իրականութիւն դուրս գայ վերագրումդ՝ այդ ատեն դժուար պիտի չըլլայ զինք մաքրելը»: **Շաւարչ չկրցաւ հիմնաւորել իր ամբաստանութիւնը, եւ մենք շարունակեցինք մեր գործը սովորականին պէս:**

**Ասիկա մէկ ապացոյցն էր իր նախանձու ու այլամերժ նկարագրին, որ կընար աւերներ գործել եթէ ժամանակին չճնշուէր:**

**Այսպէս սահեցաւ ամիսներ: Օր մ'ալ լուր առինք որ մեր ձերբակալուած բոլոր տղաներն ալ ջարդուած են: Տեղահանութեան կարգը Պոլիս գտնուողներուն պիտի գայ: Գիշերը ցերեկին խառնած թաղէ-թաղ կը պտըտէի մէկ կողմէ ինքնապաշտպանութեան միջոցներ թելաղրելու, իսկ միւս կողմէ պատրաստելու համար դիւրավառ նիւթեր: Նպատակս էր Պոլիսը իր արուարձաններով կրակի տալ, եթէ զանգուածային տեղահանութեան հրահանգը հոս եւս գործադրել փորձէին: Ետքէն հաստատեցի որ այս սպառնալիքը իր օգտակարութիւնը ունեցած էր: Բնական է, որ նման դիտաւորութիւններ ու որոշումներ գաղտնի չեն մնար: Լուրը մինչեւ կառավարութիւն հասած էր: Պատասխանատունները հաշուած էին պատահելիքին ծանրակըռութիւնը: Պոլիսը տեղահանութենէ զերծ կացուցանելու մէջ իր դերը ունեցած է նաեւ այս սպառնալիքը:**

**Մեր բնակած տունը յաճախ ոստիկաններու այցելութիւնը կ'ընդունէր: Բարեբախտաբար միշտ ալ իմ բացակայութեան: Բնական է զիս կը վնտոէին: Հօրս հարցուցեր էին, թէ «Ո՞ւր է զաւակդ»: Պատասխանը եղած է: «Շատոնց Պուլկարիա անցած է. ուր գտնուելին տեղեկութիւն չունիմ»: Կը ձերբակալեն հայրս: Խեղճը արդէն ծեր էր ու ձեռքերը կը դողային: Սնուելու պահուն իսկ օգնութեան կը կարօտէր: Առանց հաշուելու տարիքը՝ քաշկըստելով կը տանին որ իմ տեղ զինք աքսորեն:**

**Այդ օրերուն ոռւսական դիւրանագիտական գործերը կը վարէր Ամերիկեան Դեսպանատունը: Վոյրս կը շտապէ հոն իմաց տալու ծերունազարդ հօրս ձերբակալութեան շուրջ եւ խնդրելու որ խնայեն անոր արդէն հալումաշ վեճակին: Այդ շրջանի Մ. Նահանգներու Դեսպանը՝ Մորկընթառն, կը հաճի միջամտել եւ ազատ ձգել տալ հայրս որ տուն կը վերադառնայ:**

**Օր մը Շաւարչին հետ փափաք ունեցանք Թաքսիմի**

կողմերը երթալու։ Դէմյանդիման եկանք կոմիտաս Վարդապետին, որ նոր վերադարձած էր աքսորէն եւ քիչ մընալ շուարուն վիճակ ունէր։ Ճանչցաւ մեզ եւ սաստեց, ըստ, որ անխոհեմութիւն էր մեր ըրածը, եւ պատուիրեց որ մեր տուները վերադառնայինք։

Օրին մէկը Պուլկարական Դեսպանատուն գացեր էի տեղեկագիր մը յանձնելու։ Դեսպան Քոլոչեւը զիս տարաւ իր սենեակը եւ հարցուսկորձեց զիս, թէ ո՞ւր ծնած, եւ ո՞ւր սորված եմ պուլկարերէնը։ Յայտնելէս ետք, թէ տակաւին շատ փոքր հասակիս պուլկարական զպրոց յաճախած եմ եւ այս ժողովուրդի լեզուն բռնած է մայրենի լեզուիս տեղը, իսկ հայերէնը ինքնաշխատութեամբ սորված եմ, տեղեկութիւն ուզեց մէր աքսորեալ ընկերներուն մասին։ «Ես ալ ժամանակին Մակեդոնական յեղափոխական էի» - ըստ, եւ աւելցուց նկատելի դառնութեամբ՝ «Դեռ Ռոպերթ Գոլէճը յաճախած օրէս կը հետապնդէինք Մակեդոնիոյ ազատագրութիւնը որ տակաւին չէ իրականացած»։

Ցեսոյ շարունակեց.

«Գիտէ՞ք ինչու համար ձեզ մինչեւ սենեակս բերի»։

«Պիտի ուզէի սիրով իմանալ եւ ձեզ լսել» պատասխանիս վրայ յարեց. - «Գաղտնիք մը պիտի հաղորդեմ, եւ համոզուած եմ որ ձեզմէ զուրս մարդ պիտի չ'իմանայ։ Մենք, հակառակ մեր կամքին, մեր դարաւոր թշնամիին՝ Թուրքերուն հետ միատեղ պատերազմի պիտի մտնենք։ Ճամբաները պիտի փակուին եւ ասիկա շատ աննպաստ պիտի ըլլայ ձեզի համար։ Որով խորհուրդ կուտամ որ հեռանաք Տաճկաստանէն»։

Վայրեկեան մը մտածումի մէջ իյնալէ ետք պատասխանեցի. «Բայց ես առանձին չեմ։ Ընկերներ ունիմ։ Պարտաւոր եմ տեղեակ պահել զիրենք անցուզարձին։ պիտի ինդիքի նաեւ, որ նոյնքան ալ անոնց վրայ վստահիք»։

Պահ մը տատամսելէ ետք Դեսպանը վճռեց.

- Լաւ, բոլորիդ ալ անցագիր կուտամ։ Բայց շտապեցէք հեռանալու այս երկրէն։

Վրդովուած ու չափազանց ազդուած վերադարձայ տուն։ Ճամբան հարց կու տայի ես ինծի, թէ Պուլկարիա ինչպէ՞ս կրնայ ճակատ կազմել իր դարաւոր թշնամիին հետ ու կոռուիլ ուրիշներու դէմ։

Գացի Շաւարչին մօտ եւ պարզեցի կացութիւնը։

- Քանի այլպէս է, այլեւս ընելիք չի մնար մեզի

Հոս, անցնինք արտասահման, իսկ հոնկէ ալ՝ կովկաս: Հոն, կրնաս օգտակար ըլլալ քու ճիւղիդ մէջ, ես ալ՝ իմինին:

Այսպէս եղբակացուցի. սակայն Շաւարշը համամիտ չեղաւ:

– Ես չեմ երթար. եթէ կ'ուզես դուն գնայ – եղաւ պատասխանը:

Փորձեցի համոզել զինք որ ըրածը երեխայութիւն էր, անպէտ յամառութիւն: Մարդը անդրդուելի մնաց:

Ի՞նչ կրնայի ընել: Իրը յեղափոխական՝ չէի կրնար առանձին ձգել ընկերս ու մեկնիլ: Որոշեցի մնալ իր հետ: Մանաւանդ որ գիտէի բնաւորութիւնը, անոր բացասական կողմը: Ետեւէս պիտի ըսէր.

– Դասալիք եղաւ: Զիս առանձին թողուց եւ ինք կծկեց:

Վերստին գացի Դեսպանին մօտ: Պահ մը սպասման սենեակը մնալէ ետք, արտօնուեցաւ ինծի իրեն ներկայանալ: Առաջին հարցումը եղաւ.

– Ի՞նչ եղաւ ձեր որոշումը:

– Կը ցաւիմ – ըսի –, որ ընկերներս համաձայն չեն եւ որոշած են հոս մնալ:

– Կը կարծեմ, որ շատ մեծ սխալ մը գործած կ'ըլւաք մնալ յամառելով: Եթէ ձերբակալուելու ըլլաք այլեւս չեմ կրնար ձեզ պաշտպանել: Զանացէք զգոյշ ըլլալ:

## ԶԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

Դեսպանին պատուէրը ականջիս մէջ, դուրս եկայ Դեսպանատունէն: Յուզուած էի: Կը մեղադրէի Շաւարշը որ իր անմիտ վերաբերումով կրնար բոլորս կորուստի մատնել:

Եւ իրապէս ալ, ի՞նչ բանի ծառայեց այս արկածախընդրութիւնը: Պատերազմի հոչակումէն յետոյ ի՞նչ ըրբաւ Շաւարչ: Պարզապէս տունը նստաւ եւ Սիրանին հետ պատմութիւն կարդաց...: Անչուշտ ինք ալ ետքէն անդրադարձաւ կատարած սխալին, բայց շատ ուշ էր եւ երբ ընելիք չէր մնացած այլեւս:

Մինչ Շաւարչ իր տան պատերէն ներս փակուած կը

մնար, ես կը շարունակէի թափառումս արուարձանէ արուարձան, մշտապէս փոխելով բնակարանս, բայց շարունակելով գործս ինչքան որ հնարաւոր էր այդ պայմաններու մէջ:

Բայց ահա, տարածայնութիւն մը կը լսուի ընդհանրապէս կանանց շրջապատի մէջ: Իր թէ Հայկ Սերենկիւլեանը - որ կանանց շրջանակէն դուրս չէր ելլեր արդէն - յայտարարած է, թէ քանի որ Վարդգէսն ու Զոհրապը տարած ու սպաննած են, ինք ալ, որոշած է սպաննել թալաթն ու ինվէրը:

Անիմաստ ու սնամէջ յոխորտանք մը: Սերենկիւլեան կոչուածը տունէն դուրս ելլելու համարձակութիւն չունենալէ զատ, նման յանդգնութիւն մը ցուցաբերելու բոլորովին անատակ մէկն էր:

Սակայն, լուրը դուրս կ'ելլէ կանանց շրջանակէն եւ կը հասնի կառավարութեան ականջը: Լրտեսներու ցանցեր կը զետեղուին հայարնակ շրջաններու մէջ: Տուներ կը խուզարկուին եւ ամբողջ թաղամասեր հսկողութեան ներքեւ կ'առնուին տիւ ու դիշեր: Ոստիկանութիւնը կ'իմանայ «անծանօթ» ահաբեկիչին գտնուած վայրը: Կը պաշարէ բնակարանը եւ կը խուժէ ներս, բայց մարդ չի գտներ: «Անծանօթ»ը, որ Հ. Սերենկիւլեանն էր, օճիքը կ'ազատէ տան ջրամբարը իջնելով:

Հետապնդումները սաստկացան: Շատ չանցած, հաւանաբար լրտեսներու օգնութեամբ, սստիկանութիւնը կրցաւ զիս ալ ձերբակալել: Քսան օրէ ի վեր կը բնակէի տուն մը: Քսաններորդ օրը երբ կը պատրաստուէի տեղափոխուիլ ուրիշ վայր մը, տանտիրուհին գրեթէ աղաչեց, որ գոնէ վերջին անգամ ըլլալով միասին սուրճ մը առնենք: Տանտիրուհին գիտէր ով ըլլալս, բայց զիս Անթուան կը կոչէին: Ամուսինը՝ Յովհաննէս, զիս այդ անունով կը ճանչնար: Պատուիրած էի տնեցիներուն որ ամէն առթիւ որ դուռը զարնող մը ըլլայ, նախ իմացնեն ինծի: Նոյն օրը, երբ զանդը կը հնչէ, տանտիրոջ փոքր աղջիկը կը ըշտապէ, անդիտակ պատուէրիս, դուռը բանալու: Ոստիկանները պատեհութիւն չեն տար որեւէ հարցուփորձի. կը խուժեն ներս առաջնորդ ունենալով յայտնի լրտես Յարութիւն Մկրտիչեանը եւ գաղտնի սստիկանութեան հրամանատար Ալի Ռիզան:

Սուրճի բաժակը հազիւ շրթներուս տարած էի երբ

տանտիրուհին, այլայլած, վագեց իմ կողմը գոչելով՝ «Փախէք»: Իսկոյն խոյացայ ետեւի պատուհանը որ պարտէզի մը վրայ կը բացուէր, եւ ցատկեցի վար: Բայց շատու էր: Յարութիւն Մկրտիչեանը դէմս ցցուեցաւ եւ ըստ հեղնանքով.

- Ներիյէ քաջեօրսընըզ (ո՞ւր կը փախիք):

- Տեղ փախած չունիմ: Հոս հիւր եկած եմ - պատասխանելս ու վրաս գտնուող ատրճանակը պարտէզին թուփերուն մէջ նետելս մէկ եղաւ: Նետեցի որովհետեւ նախ անօգուտ էր ամէն դիմադրութիւն, յետոյ՝ կրնար դուռ բանալ բարդութիւններու եւ զոհ դարձնել Պոլսահայութիւնը որ, բարեբախտաբար, դեռ տեղահանութենէ զերծ կը մնար:

Սակայն շարժումս աննկատ չէր անցած: Ոստիկան մը գտաւ ատրճանակս. զիս վար իջեցուցին եւ լաւ մը խուզարկեցին վրաս-գլուխս: Բացի անցագրէս (պուլկարական) եւ Վիսիքայէ մը (պանիրի վաճառական) ուրիշ բան չգտան:

Զիս տարին Տոլապ Տերէի պահականոցը: Հոն բերին նաեւ տանուտէրը՝ Յովհաննէսը: Զիս վարը ձգեցին, իսկ Յովհաննէսը վեր տարին: Հակառակ որ մարդը Անթուան կը կարծէր անունս - այդպէս լսած էր անունս մաքատան մէջ - սակայն ծեծի տակ ստորագրել կու տան շինծու վկայութիւն մը թէ՝ ինք կը հաստատէ որ անունս ... Հայկ Սերենկիւլեան է: Յայտնի էր, որ մարդը փառաւոր ծեծի տակ առած էին այդ ... ճշմարտութիւնը բերնէն կորզելու համար: Հարցաքննութեան ժամանակ երբ դիտել տուի որ սխալ վկայութիւն էր կատարուածը, ոստիկանապետը պատասխանեց.

- Հիմա, պէտք եղած դասը կու տանք. եւ դուն չես ուշանար խոստովանելու որ Հայկ Սերենկիւլեան կը կոչուիս:

Զկորսնցուցի պաղարիւն վիճակս. խնդալով յարեցի.

- Ուզածնիդ ըրէք, եթէ յաջողիք:

Նոյն գիշեր զիս տարին Քարդա Փողոցի պահականոցը եւ վակեցին արտաքնոցին մէջ. դրան մօտ ալ պահակ դրին տարիքոտ ոստիկան մը: Մինչեւ առտու մնացի ոտքի, սպասելով ելքին:

Առաւօտուն կանուխ տեսայ Յովհաննէսը որ կ'երթեւեկէր բակին մէջ, գլուխը կախ եւ մտածկոտ: Կարեւո-

բութեան չառնելով պահակին ներկայութիւնը՝ ցատկեցի դուրս եւ երկու ոստումով հասայ Յովհաննէսին ու ակընթարթի մէջ հասկցուցի, որ պէտք է շարունակէ պնդել որ այդ թուղթը բռնութեամբ ստորագրել տուած են իրեն եւ թէ անունս Անթուան է, զիս կը ճանչնայ մաքսատունէն, ուր յաճախ կ'ըլլայի գործիս բերումով։ Հազիւ կրցեր էի հասկցնել միտքս երր պահակ զինուորը թեւէս քաշելով զիս վերստին արտաքնոց նետեց։ Յետոյ իմացայ որ Յովհաննէս կատարած է պատուէրս։ Երկրորդ հարցաքննութեան պահուն երդուած է որ անունս Անթուան է։ Ինք տարբեր անուն տուած էր, որովհետեւ սպառնացեր էին իրեն։

Նոյն օրը զիս տեղափոխեցին Քիւչիւք կալաքա Սերայի պահականոցը։ Նետեցին փոքրիկ սենեակ մը ուր քըսան հոգի հազիւ կրնար սեղմուիլ, բայց ուր 58 հոգի թրիմած էին։ Ամէն ազգէ մարդոց կարելի էր հանդիպիլ հոն։ Պատերուն վրայ արիւնով գրուած խօսքերու կարելի էր հանդիպիլ։ Կը յիշեմ անոնցմէ որ կէս երգիծական է։ «Հոս մտնողը էշ է, չմտնողը՝ էշուն մնծը»։

Կալանաւորները սեղմուած էին իրարու, կուշուկուշտիւ շարժելու գրեթէ տեղ չկար։

Առտուան ժամը 9-ին զիս հարցաքննութեան տարին։ Նրբանցք մանելու պահուն լսեցի ձայն մը։

— Կեքիրին շու 20 իսիմլի հերիփի։ Ակ տիօլլար՝ Անքուան, Միշէլ, Ապրահամ, Հրանդ Սերանկիւեան . . . (Հոս բերէք սա քսան անուն ունեցող մարդը։ Ի՞նչ կ'ըսէին՝ Անթուան, Միշէլ, Ապրահամ, Հրանդ Սերանկիւեան . . .)։

Պաշտօնաւոր մը ըլլալու էր, որ զիս տեսնելէ ետք դիմեց ինծի ակնարկելով ոստիկանի մը։

— Պու էֆէնտիյնէն Քըսմը Սիխախա կիտէնէսին։ (Այս էֆէնտիին հետ Քաղաքական Բաժանմունք պիտի երթաս)։

Մարդը վերցուց թղթածրար մը, ատրճանակս՝ որուն վրայ կար մէկ քանի արձանագրութիւն կրող տոմսակ մը, եւ դուրս ելանք պահակատունէն։

Դրան առջեւ ըսի, որ կառք պէտք է բռնենք որովհետեւ ոտքով չեմ կրնար երթալ, անյարմար էր ինծի պէս յարգելի վաճառականի մը։ Մարդը համաձայնեցաւ։ Հա-

սանք Քըսմը Սիասի: Հազիւ ոտք դրած էի ներս, երբ կից մը ստացայ ետեւէս եւ՝

— Ալ պիրքանէ տահա: (Առ հատ մը եւս):

Ինծի ընկերացողն էր, որ, մինչ այդ քաղաքավար թուած էր: Զիս նետեցին խուց մը ուր ասեղ ձգելիք տեղ չկար: Ներսինները շրջապատեցին զիս ու սկսաւ հարցումներու տեղատարափ մը, թէ ո՞վ եմ, ի՞նչ ազգի կը պատկանիմ, ի՞նչ բանի համար ձերբակալուած եմ:

Ընդհանրապէս լուր կը մնայի կամ խուսափողական պատասխան կու տայի: Գիտէի որ նման տեղեր լրտեսներ կը վխտան: Տեսայ երկու թուրք երիտասարդներ որոնք պուլկարերէն կը խօսէին: Մօտեցայ իրենց: Բոմաքներ (ծնունդով թուրք պուլկարներ) էին: Տարտանելէն փախելու պահուն բռնուեր էին ճամբան եւ հոս նետուած: Տեսայ Միհրան Մերենտելեանը, ջութակահար, Մազրի գիւղի մեր ընկերներէն: Վախնալով որ կաֆ մը կ'ընէ, մօտէն անցնելու պահուն թեթեւակի ու աննշմար զարկի թեւին զգացնելով որ հետեւի ինծի արտաքնոց երթալ ձեւացնելով: Հարկ եղաւ կրկնել մէկ քանի առթիւ որ դիտաւորութիւնս հասկնայ: Ներսը ակնթարթի մէջ փսփսացի ականչին, որ անտարբեր մնայ ինծի հանդէպ, ծանօթ ըլլալը բնաւ չզգացնէ:

Այդ գիշեր, Բոմաք թուրքերը իրենց վերարկուները փուեցին եւ հրաւիրեցին զիս որ օգտուիմ «հանգստաւէտ» ութենէն: Զմերժեցի: Բաւական զրուցելէ ետք ընկերներս քնացան: Զեւացուցի որ քուն մտած եմ: Կոպերս խուրչ՝ կը մտածէի յաջորդ օրուան հարցաքննութեան մասին: Ի՞նչ կրնային հարցնել եւ թէ ի՞նչ պէտք էր ըլլար պատասխանս:

## ԱՌԱՋԻՆԸ 72 ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

Առտուն տեսայ որ ոջիլները ողողած էին մարմինս: Անդադար կը քերուըտէի: Ժամը 10-ին դուրս կանչուեցայ: Զայն մը կ'ըսէր.

— Միհայիլ Ապրահամով կելսին: (Միհայիլ Ապրահամովը թող գայ):

Դուրս ելայ: Զիս առաջնորդեցին Քըսմը Սիասիի

ընդարձակ սրահը, ուր նստած էին Ռեշատ Պէյը, Ալի Ռիգան, Յարութիւն Մկրտիչեան, Հետաեթ - ուրիշ հայ լըրտես մը, շատ վտանգաւոր:

Սկսաւ հարցումներու տարափ մը - Ե՞րբ եւ ո՞ւրկէ եկած եմ: Ի՞նչ է գալուս նպատակը: Ո՞ր շոգենաւով եկած եւ ո՞ր պանդոկը իջած եմ: Վերջերս ընդհանրապէս ո՞ւր դտնուած եմ:

Կրցի արագ ու սահուն պատասխանել, քիչ թէ շատ տրամաբանական բացատրութիւններ ընկերացնելով: Օր մը առաջ մտածեր էի ըսելիքներուս մասին:

Առաջին հարցաքննութենէս ետք, տասն անգամ ըստորագրութիւնս գրել տուին, որ զայն բաղդատեն անցագըրիս մէջ եղածին հետ: Տարբերութիւն պիտի չգտնէին: Անցագիրը առած ատենս ստորագրութեան տեղը պարապէր. ես ստորագրած էի, որով սպասելիք չունէին զիս հակասութեան մէջ բռնել յուսացողները:

Սակայն, քիչ անց, յայտնուեցաւ անակնկալ դժուարութիւն մը:

Ալի Ռիզան ընկալուչը վերցնելով հեռածայնեց Կալաթայի մաքսատունը եւ հարցուց, թէ այսինչ թուականին Միհայիլ Ապրահամով անունով մէկը եկա՞ծ է Պոլիս, շոգենաւով. ո՞ր պանդոկը իջած է, անկէ ո՞ւր գացած է, ի՞նչ է տարիքը, եւայլն: Տարիքի խնդրին մէջ զիս բռնցին: Անցագրին մէջ 39 արձանագրուած էր, զայն 29-ի վերածեր էի:

Ալի Ռիզան հետեւցուց գոհունակութեամբ.

- Ահա՝ բռնեցի: Այս անցագիրը հրեայի մը անցագիրն է: Մարդը 39 տարեկան է, զայն 29 ըրած ես:

Առանց ինքզինքս կորսնցնելու եւ հանդարտ շեշտով պատասխանեցի.

- Կրնան սխալած ըլլալ արձանագրութեան պահուն: Սա իմ անցագիրս է: Արդէն ստորագրութիւնը շատ պարզ է:

Հարցաքննութիւնը տեւած էր մէկ ժամէն աւելի:

Ռեշատ Պէյը հրամայեց պահակներուն որ զիս բանս վերադարձնեն: Առարկեցի ըսելով, որ ինծի պէս յարգելի եւ ունեւոր մէկուն չի վայելեր գտնուիլ ոջիլներով լեցուն սենեակ մը: Եւ նոյն պահուն թեւիս վրայ յուլօրէն շարժող երկու ոջիլներ բռնելով նետեցի սեղանին վրայ, որուն առջեւ բազմած էր Ռեշատ Պէյ:

- Նէ եաբեօրսընըզ (ի՞նչ կ'ընէք), ըսաւ, տեղէն լնդոստ ցատկելով։

- Վրաս հազարաւորներ կան։ Թող մէկ հաս ալ ձեր վրայ ըլլայ - պատասխանեցի հեղնանքով։

Մարդը զգուանքէն թէ քիչ մը խղճի գալով պառուիրեց Ալի Ռիզային։

- Միհայիլը վերի սենեակներէն մէկուն մէջ փակեցէք։ Սակայն ուշադիր եղէք որ մարդու հետ յարաբերութեան մէջ չմտնէ։

Զիս տարին սենեակ մը ուր զոյգ անկողիններ կային՝ դարակի ձեւով, ինչպէս շողենաւերու մէջ կ'ըլլայ։ Երկու օր ետք բերին արար հօնա մը՝ 60-70 տարեկան։

Այդ թուականներուն, այսինքն 1916-ի ժամանակները, հալածանք սկսած էր նաեւ ընդդէմ Արաբներուն։ Կոձերբակալուէին Օսմանեան պետութենէն անջատուելով անկախ կեանք ունենալ ցանկացողները, ինչպէս Սուրիայիներն ու Լիբանանցինները։ 15 օր մնաց մեզի հետ։ Պատերուն վրայ շարունակ արաբերէն բաներ կը գրէր։ Պարապտեղ չէր ձերեր։ Նկատեցի որ գրածներն ալ մուսխայի ձեւով բաներ էին։ Նախապաշտումներու շատ հաւատացող չէի, բայց չեմ գիտեր ինչո՞ւ, այդ պահուն հաւատքս կարծես զօրացաւ մէջս։ Արդարեւ, զգացի որ աչքս շարունակ կը «խաղար»։ Վիճակիս մասին երբ արար հօճային հարցուցի՝ պատասխանեց։

- Սպասէ հինգ վայրկեան։ պիտի մեկնեմ իմաստը։

Սկսաւ նորէն բաներ մը գրել։ պահ մը ետք դարձաւ իմ կողմը եւ համոզումով ըսաւ։

- Դուն պիտի փրկուիս։ Քեզ ազատ պիտի ձգեն։ Աքսոր պիտի չերթաս։

Օր մը ետք զինք աքսորեցին։ Ես մնացի կալանաւոր։

## ՀՈՖԻ ՈՃՐԱՓՈՐՁԻ ՀԵՂԻՆԱԿԻ ԻՄ ՎՐԱՑ ԼՐՏԵՍ

Կէս գիշեր մը, դրան ծինիները ճռնչեցին։ Հսկայի երեւոյթով մարդ մը ներս չպրտեցին։ Գնաց անկիւն մը եւ Հոն կծկուեցաւ։ Սկսաւ ինքնիրեն մոլտալ։ Հետաքրքրութենէ մղուած մօտեցայ իրեն տեսնելու համար թէ ինչպիսի մէկն է։ Հարցուցի։

— Հայրը օլա էֆէնտիմ, նասըլ օլտու տա պուրայա  
տիւշտիւնիւզ: (Բարին ըլլայ էֆէնտիս, ինչպէս եղաւ որ  
հոս ինկաք):

Մարդը վեր առաւ գլուխը եւ խուզարկու նայուածք  
մը նետելով վրաս պատասխանեց, թէ գինով վիճակի մէջ  
զինք ձերբակալած եւ հոն բերած են:

Իր հերթին սկսաւ հարցումներ ուղղել ինծի: Մըտ-  
քէս ըսի որ հարկ էր զգոյշ ըլլալ: Արդէն վտանգաւոր մէկը  
ըլլալը շուտ կուահեցի: Ծնթացքը կը մատնէր ինքզինքը:  
Հարցումները խորը կ'երթային: Կը յամառէր մանրամաս-  
նութիւններու վրայ: Շաբաթ մը չանցած՝ տեսայ որ պա-  
հակները զարմանալի թոյլտուութիւն կը ցուցաբերէին:  
Մարդը գիշերները գուրս կ'ելլէր եւ առաւօտեան առաջին  
ժամերուն ետ իր խորցը կը վերադառնար միշտ գինով վի-  
ճակի մէջ: Միշտ նոյն հարցումները կ'ուղղէր ինծի, ինչ  
որ կը հիմնաւորէր կասկածս:

Օր մըն ալ ըսաւ, դիմելով ինծի.

— Սենին քանընտա իրմենի քանը օլանաֆ: Պուլկար-  
լար պէօյլէ էյի թիւրքնէ բնուուշմազլար: (Արեանդ մէջ  
Հայու արիւն ըլլալու է: Պուլկարները այսպէս լաւ թրքե-  
րէն չեն խօսիր):

Պատասխանեցի ինչ որ ըսած էի Փըսմը Սիասիի  
մէջ, հարցաքննութեան ժամանակ – Ֆիլիպէի թրքական  
թաղը կը բնակէի: Բարեկամներէս շատեր թուրքեր էին:

Մարդը չհամոզուեցաւ: Կրկնեց, թէ պուլկար մը  
այսքան սահուն թրքերէն չի կրնար խօսիլ:

Մինչ մարդը կը շարունակէր պնդել իր համոզումին  
վրայ, ես կը խորհէի զինք սիրաշահելու եւ լեզուն բանա-  
լու մասին . . . :

Թուրքերը որկրամոլ կ'ըլլան: Եթէ կուշտ ու կուռ  
եւ մէկ քանի անգամ կերցնեմ այս մարդը, կրնամ մտեր-  
մութիւնը չահիլ – հետեւցուցի, եւ յաջորդ օրն իսկ գոր-  
ծադրութեան դրի մտադրածս:

Կերակուրը տունէն կը ստանայի աննկատելի եղա-  
նակով: Կերպով մը լուր հասցուցի որ թրքական ճաշեր  
զրկեն: Բերողը Գալֆայեան որբանոցէն որբուհի մըն էր:  
Զինք իբր քոյր կը խնամէինք մեր տան մէջ:

Մարդուն վստահութիւնը չահեցայ սպասածէն աւե-  
լի շուտ: Օր մըն ալ խոստովանեցաւ որ զինք լրտես նշա-  
նակած են իմ վրաս: Անունը Հասան Պիւրհանէտտին է՝ սի-

վել քոմիսէր մը: Ինք եղած է Հոփը մահափորձի ենթարկողը Ռումանիոյ մէջ: Հոփ եւ Վեսթենենկ, ինչպէս գիտենք, Մեծ Տէրութեանց կողմէ ներկայացուցիչ նշանակուած էին հայկական գաւառներու համար բարենորոգչական ծրագիր մը մշակելու առաքելութեամբ: Անոնց ծրագիրը շետուածօրէն հայանպաստ էր: Ա. Համաշխարհային Պատերազմը ջուրը ձգեց այս ծրագիրն ալ: Սակայն Թուրքերը մնացին վրէժինդիր: Հասան Պիւրհանէտտին ղրկուած էր Հոփը մահափորձի ենթարկելու:

Օր մըն ալ մօտեցաւ եւ գաղտնիք մը հաղորդողի զգուշաւորութեամբ ըսաւ.

— Այս գիշեր մեծ դէպք մը պիտի կատարուի: Վաղը կ'իմանաս ըլլալիքը:

Պնդումիս վրայ լեզուն բացաւ.

— Գահաժառանգ Եռևուժի իզզէտտին պիտի սպաննուի էնվէրի վատահելիներուն կողմէ:

Իրապէս ալ, յաջորդ օր, թերթերը գրեցին եւ մունետիկներ տարածայնեցին, թէ Գահաժառանգը յիմարացեր է: Դաստակներուն երակները կտրելով անձնասպան եղած է:

Ամէն օր Փրանսերէն «ՀիլԱլ» թերթը կ'առնէի: Հարկ էր Շաւարչին հետ յարաբերութեան մտնել: «Փորձ մը ընենք» ըսի, «տեսնենք ինչ արդիւնք կու տայ»:

Թերթին գրութեանց բոլոր վերջակէտներէն ետք բաց մնացած մասերուն մէջ տպագիր տառերով կը գրէի ինչ որ պէտք էր, եւ լուացուելու զրկուելիք սպիտակեղէններս ալ անոր մէջ փաթթելով զայն կը դրէի ուր որ պէտք է:

Առաջին փորձս կասկած ստեղծած էր: Բանտին քոմիսէրը վար դնել տուած էր ծրարս, որ երեք օր պահուած էր: Յետոյ տեսներով որ թաքուն բան չի պարունակեր՝ յանձնած էին ծրարը: Ամբողջ երեք օր անձկութեան ու տագնապի մէջ ապրած էի:

Այսպիսով կրցայ յարաբերութեան մէջ մտնել:

Երկու ամիս ետք, զիս եւ Պիւրհանէտտինը տեղափոխեցին կողքի մեծ սենեակը, որ կը կոչուէր աքսորի սենեակ, որ բաւական մեծ էր եւ ունէր 15-20 յարկածեւ անկողիններ եւ խոչոր լուացարան մը: Ամէն օր մարգանք կ'ընէի եւ պաղ ջուրով լոգանք կ'առնէի: Ինձ հետ բան-

տարկեալները, իրենց անկողիններուն մէջ նստած, զարմանքով կը դիտէին բժախնդրութիւնս :

Մեզ տեղափոխեցին որովհետեւ թշնամի պետութեանց դեսպաններու կամ հիւպատոսներու քարտուղարներն ու թարգմանները ձերբակալուած ըլլալով հոն պիտի տեղաւորուէին : Ակսած էի ձերբազատուիլ ոջիլներէս : Մասամբ մաքրուած էի, իսկ Հասան կը զայրանար որ լեցուն էր վրան :

Հոն տեսայ իրանոսեանը, տեսայ նաեւ Սիւնին, որ քարտուղարն էր, եթէ չեմ սխալիր՝ Պատրիարքարանին : Շուտով աքսորեցին իրանոսեանը, երկու օր ետքն ալ՝ Սիւնին, որ ամբողջ օրը կուլար : Այդ օրերուն մեր բանտին ժամանակաւոր բնակիչները դարձան շատ յոյն քահանաներ եւ դեղագործներ, արար հօճաներ ու ազդեցիկ մարդիկ, որոնք իրար ետեւէ աքսորուեցան :

Երեքուկէս ամիս բանտը մնացի : Այս միջոցին 72 անգամ հարցաքննութեան ենթարկուեցայ : Սովորաբար զիս հարցաքննութեան կը կանչէին կէս զիշերէն յետոյ, ժամը 1-ին կամ 2-ին : Կը ջանային զիս շփոթեցնել քունի ազդեցութեան տակ եւ ճշմարտութիւն մը կորզել : Բայց, ի զո՞ւր : Հանրատան բոլոր աղջիկները կարգով առջեւէս անցուցին : Գուցէ հոն գացած կ'ըլլայի եւ անոնցմէ մէկն ու մէկը կրնար ճանչնալ զիս : Մարդիկ ամէն միջոցի դիմեցին, առանց յաջողելու իրենց փնտուածին մէջ : Ինքնութիւնս մնաց անծանօթ իրենց համար :

Հարցաքննութեան պահուն մէկ քանի առիթներով հարցուցին, թէ կը ճանչնայի՝ Մերձանօֆը : Բնական է, ապուշ կը ձեւանայի : Իմ հերթին հարց կու տայի այդ անունի տիրող ազգային պատկանելիութեան մասին : Հայ ըլլալուն հաւաստումէն ետք կը պատասխանէի .

— Հայերու հետ յարաբերութիւն չեմ ունեցած որ ճանչնամ :

Ինչ գիտնային մարդիկ որ որսը իրենց ձեռքն էր : Բարեբախտաբար տիմարներ էին զիս հարցաքննողները, այլապէս կրնային շուտով երեւան հանել ինքնութիւնս, եւ միջոցներ չէին պակսեր :

Օրինակի համար, յայտնած էի որ ես Մերձանօֆներու տան մէջ սենեակ վարձած էի : Մարդիկ չէին հարցըներ թէ այդ տան վարձակալն ըլլալով ինչպէ՞ս կրնայ չճանչնալ տանտիրոջ երիտասարդ տղան :

Ուրիշ պարագայ մը, որուն վրայ ծանրանալով կըր-նային կեղծիքը երեւան հանել:

Հսած էի, թէ պանիրի վաճառական եմ: Մարդիկ կընային պարզապէս հարց տալ, թէ ո՞ր թուականին պանիր հանած եմ մաքսատունին եւ ո՞ր վաճառականին ծախած: Վերջապէս՝ այս եւ ուրիշ մանրամասնութիւններու վրայ ծանրանալով դժուարութիւն պիտի չունենային ճիշդ ինքնութիւնս երեւան հանելու:

Օրին մէկը Պուլկարական Դեսպանատան Խավազը տեսայ սենեկիս դրան առջեւ: Հսաւ, թէ եկած է զիս պահանջելու:

— Մենք հոս մարդ մը ունինք Մ. Ապրահամով անունով, եկած եմ խնդրելու որ ինծի յանձնէք, ըսած է ոստիկանապետին:

Ասիկա պատասխանած է դժգոհելով.

— Դեռ հարցաքննութեան մէջ է: Աւարտենք, յետոյ կը նայինք...

Մարդեկ չէին յուսահատած:

Պուլկարիայէն թուրք մը բերել տուին որ զիս հարցուփորձէ: Մարդը շատ հարցումներ ըրաւ, զանազան քաղաքներու անունները, պետական հաստատութիւններու ուր գտնուիլը, բժիշկներու եւ փաստաբաններու անունները եւ հանրային պարտէզներու վայրերը հարցուց:

Պատասխաններս եղան արագ ու ճշգրիտ: Մարդը համոզուեցաւ հարազատ պուլկար մ'ըլլալուս: Քովը կեցող երկու պաշտօնեաններուն դառնալով ըսաւ.

— Այս մարդը պուլկար է: Զգեցէք որ իր երկիրը երթայ:

## ԱԶԱՏՈՒՄ ՊՈՒԼԿԱՐ ԴԵՍՊԱՆԻՆ ՕԳՆՈՒԹԵԱՄԲ

Ուրիշ օր մըն ալ մեր գտնուած բանտը բերին պուլկար երիտասարդ մը՝ երկի անունով, կովարած մը, որուն կովը սահմանին մօտ արածելու պահուն, փախած ու մտած է թրքական սահման՝ երիտասարդն ալ անոր ետեւէն: Զինք բռներ ու բերեր էին մեր մօտ: Ամէն օր կուլար: Մերիններուն միջոցաւ լուր դրկեցի Պուլկարական Դեսպանատուն: Երկու օր ետք եկան ու ազատ ձգել տուին:

AVO

**Երեք ու կէս ամիս յետոյ, առաւօտ մը, Ռեշատ Պէ-  
յը զիս կանչեց եւ ըսաւ.**

— Սենին նէ պօֆ օլտուղուն պելլի օլմատը, քաֆ  
սիֆթիր կեթ էվինէ: (Քու ինչ ք ու ըլլալը յայտնի չեղաւ:  
Ել ու կորսուէ առւնդ):

**Այսինքն պիտի զրկուէի Պուլկարիա: Ես գիտմամբ  
կ'աղաչէի որ զիս Պուլկարիա չղրկեն:**

— Իբր փախստական՝ զինուրական ծառայութենէ՝  
ծանր պատիժի պիտի ենթարկեն զիս այնտեղ:

**Մարդը անողորմ գտնուեցաւ... Կրկնեց վերի ու  
քնքոյշ բառերը, եւ քոմիսէրին դառնալով հրամայեց.**

— Տարէք անգամ մը եւս ձեռքին մատներուն չափե-  
րը առէք, նկարը քաշեցէք, օճիքին փակցուցէք եաֆթա  
մը որ ասիկա վտանգաւոր մարդ է եւ որեւէ սահմանէ  
անցնելով թուրքիա մտնելու իրաւունք չունի:

**Այդպէս ալ ըրին: Գացինք Փոլիս Միւտիւրիէքի,  
կատարեցին ինչ որ հրահանգուած էր: Նկարուելու պա-  
հուն խնդրեցի որ օրինակ մըն ալ ինծի տան:**

— Էյլենեօրարն պիզիմլէ — ըսաւ պաշտօնեան իբր թէ  
սրտնեղած: (Մեզ կը հեգնես):

**Զիս վերապարձուց բանտ: Նոյն սենեակը մնացի  
դեռ երեք օր եւս: Առաջին անգամ ըլլալով զգացի անզուսպ  
անհամբերութիւն: Դիմեցի Հասան Պիւրհատնէտախինին  
թէ՝ այս ի՞նչ բան է, դեռ որքա՞ն հոս պիտի պահեն զիս  
անիրաւ կերպով:**

— Ինչո՞ւ կը կասկածիս: Գործդ վերջացած է: Պուլ-  
կարիա պիտի վերադառնաս — Հանդարտեցուց խօսակիցս  
ու ու վրաս լրտես կարգուածը:

**Երեք օր ետք կրկին կանչեցին.**

— Հայտէ, էվինէ կիտէնէքսին: (Ել, առւնդ պիտի  
երթաս):

**Մինչ կը վերադառնայի խուցս, ետեւէս թելադրե-  
ցին.**

— Ծուտով հաւաքէ հագուստներդ ու գոյքերդ. կ'եր-  
թաս Հիւպատոսարան, ուր կը մնաս մինչեւ յաջորդ օր:  
Առտուն կը ստանաս անցագիրդ եւ անմիջապէս ճամբայ  
կ'ելես Միրքեճիի կայարանէն:

**Մէկ սիվիլ ու մէկ համազգեստաւոր ոստիկան հե-  
տեւեցան ինծի մինչեւ նախ մեր բնակարանը: Տնեցիները  
յուղուեցան իմանալով որ յաջորդ օր Պուլկարիա կը մեկ-**

նէի: Զգուշացուցի զիրենք որ զուսպ մնան. ըսի որ ուրախ պէտք է ըլլան մեկնելու համար...

Գացինք Հիւպատոսարան: Հիւպատոսը՝ Բեթրով, կեղծ խստութեամբ յարեց, դիմելով ինծի.

— Տուր նայիմ հարիւր փարայ, անցազրի ծախք:

Յետոյ, դարձաւ ինծի ընկերացող ոստիկաններուն եւ ըսաւ.

— Դո՛ւք, դուրս ելէք:

Երբ առանձին մնացինք եկաւ ու մտերմօրէն ողջագուրուեցաւ հետո: Ծնորհաւորեց որ կրցի լաւ պահել ինք-զինքս: Ծուտով պատրաստել տուաւ անցագիրս եւ ափիս մէջ դնելով պատուիրեց, որ ժամ առաջ հեռանամ թուրքիայէն:

Հակառակ Դեսպան Գոլուչֆի այն պնդումին որ նոր դժբախտութեան մը պարագային պիտի չկրնայ այլեւս օդնել ինծի, կրկին իր միջամտութեան ու պնդումին շը-նորհիւ է, որ կրցի օճիքս ազատել:

Յաջորդ առտու առաջնորդուեցայ Սիրքեճի կայարանը: Ընկերացող գաղտնի ոստիկանը զիս մինչեւ Ուզուն Քէօրիւ սահմանագլուխ հասցուց:

Սահմանապահ պուլկար զինուորներ զիս ստանձնեցին: Պետին առաջին խօսքը եղաւ, ստուգելէ ետք անցագիրս:

— Ինչո՞ւ, մինչեւ հիմա, զինուորական ծառայութեան կոչին չես պատասխանած: Սպասէ հոս, քիչ ետք հազարապետին պիտի ներկայացուիս:

Զիս տարին հազարապետին մօտ որ շատ խիստ մէկը կը թուէր: Նոյն իսկ մտիկ չուզեց ընել բացատրութիւններս եւ խնդրանքս: Ըսի իրեն, որ ես պուլկարահպատակ չեմ, այլ՝ հայ յեղափոխական: Թրքական բանտէ եւ աքսորէ փրկուած եմ Դեսպան Գոլուչֆի օգնութեամբ:

— Դուն կրնաս խաբած ըլլալ Դեսպանը: Քեզ եկած տեղդ պիտի զրկեմ — եղաւ պատասխանը:

— Այդպիսի բան չէք կրնար ընել: Աւելի լաւ է որ զիս սպաննէք, քան թէ ետ թուրքերուն յանձնէք — ըսի յուզուած, բայց վճռական չեշտով:

Հազարապետը պահ մը լուր մնաց: Կարծես աղդուած ըլլար ըսածէս: Յետոյ շարունակեց.

— Լա՛ւ, ո՞վ կը ճանչնաս Սոֆիայի մէջ:

— Հոն շատ բարեկամներ ունիմ: Օրինակ՝ փաստա-

բան Կրիկոր Վասիլիեւը որ Մակեղոնական Յեղափոխական կուսակցութեան Վերին Մարմնի անդամ է:

Հազարապետը, տարակուսալի նայուածքը վրաս պահեց պահ մը եւ, ի վերջոյ, հետեւցուց.

- Քանի այլպէս է, պիտի տեղեկագրեմ Սոֆիա: Եթէ թոյլատրեն՝ կը մնաս, այլապէս՝ քեզ վերստին Թուրքիա կը ճամբեմ:

Երեք օր Ուզուն Քէօբրիւ մնացի: Անձկալի օրեր անցուցի: Թէեւ վստահ էի որ պիտի հաստատուէր անկեղծութիւնս, բայց, ո՞վ գիտէր, մանաւանդ այդ օրերուն...

Երեք օր ետք եկաւ պատասխանը, որ դրական էր:

Զիս ճամբայ հանեցին զինուորի մը ընկերակցութեամբ: Հասանք Սոֆիա, ուր զիս արգելափակեցին կեղրոնական բանտին մէջ: Զարհուրելի բանտ մը: Հարիւր հոգի հազիւ առնող փոքր սրահի մը մէջ չուրջ հինգ հարիւր մարդ թխմուած էինք: Ասոնք զինուորութենէ փախստականներ, բանակատեղի վերադառնալու մէջ ուշացածներ եւ կամ ալ կասկածելի օտարներ էին:

## ՊՈՒԼԿԱՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ Կ'ՕԳՆԵՆ

Այստեղ մնացի 12 օր: Այս միջոցին աւելի տառապեցայ, քան երեքուկէս ամիս թրքական բանտի մէջ անցուցած շրջանիս: Զիս հարցնող-փնտողը չկար: Սրահին անկիւնները թիթեղներ դրուած էին ուր բանտարկեալները իրենց պէտքը պիտի գոհացնէին: Գարշահոտութիւնը բռնած էր ամբողջ սրահը, որ նեխած էր արդէն մարդկային շունչով:

Դրան մօտ կը մնար զինեալ պահակ մը: Ինչ որ կը հարցնէի, կը մնար անպատասխան:

Օր մը, դիպուածով տեսայ սպայ մը, որ ուսանող էր իրաւաբանական ֆաքիւլթէի մէջ: Ա՛ն ալ բանակատեղի երթալու ուշացած ըլլալով՝ զինք հոն բերած էին: Բանտի վերահսկիչի պաշտօն տուեր էին առժամաբար: Մօտեցայ իրեն եւ անունը հարցուցի: «Կրիկորիեւ է» ըսաւ: Զէի սիսալած: «Զիս ճանչցա՞ր» ըսի եւ աւելցուցի:

- Միատեղ մարզանք կ'ընէինք Թրաքիսիսի Բունաք Միութեան մէջ»:

Երիտասարդին դէմքը պայծառացաւ: Ճանչցած էր: Իրարու փաթթուեցանք: Իրեն պատմեցի գլուխէս անցածը:

- 12 օրէ ի վեր հոս եմ: Զիս հարցնող-վնտոռող չըկայ - ըսի:

- Քանի այդպէս է, գրէ նամակ մը որ Կոմիսարին տանիմ - առաջարկեց, եւ խոստացաւ ձեռքէն եկածը ընել զիս հոսկէ դուրս հանելու:

Իրապէս ալ, քանի մը ժամ չանցած, զիս մեծաւորին տարին: Հարցաքննութեան ատեն ըսին.

- Ո՞վ կը ճանչնաս այս քաղաքէն, որ քեզի երաշխաւոր ըլլայ:

Տուի շրջանի կեղրոնական Կոմիտէի երկու անդամներու անուններ - Գրիգոր Յովհաննէսեան եւ Ղուկաս Մինասեան: Երկուքն ալ Քեմախցի սրճարանատէրեր էին: Երկուքն ալ կանչուեցան շրջանի հրամանատարին կողմէ, երաշխաւորագին վճարուեցաւ եւ ես կրցի դուրս գալ բանտէն: Սակայն ստորագրած էի յանձնարարութիւն մը - դուրս պիտի չելլէի Սոֆիայէն:

Օր մը իմացայ որ Դեսպան Քոլոշեւը Սոֆիա եկածէ: Շտապեցի իր մօտ, գտայ զինք եւ չնորհակալութիւն յայտնեցի իր մարդասիրական ու փրկարար ծառայութեան համար: Առիթէն օգտուելով խնդրեցի իրմէ որ բարեխօս դառնայ, որ կարենամ Ֆիլիպէ երթալ եւ տեսնել հոն բնակող քոյրս, որուն կարօտը կը զգայի տարիներէ ի վեր: Խոստացաւ կատարել խնդրանքս: Երկու օր ետք արտօնուած էի Ֆիլիպէ երթալու:

Քանի մը ամիս յետոյ, Պուլկարիա ապաստանած բոլոր օտարահպատակները զինակոչի ենթարկուեցան: Ես նախընտրեցի հիւանդանոցի մէջ ծառայել: Ինձ նման շատ հայեր նոյն ձեւով շարժեցան: Ինծի հետ էր նաեւ Յ. Տեւեձեանը, որ աքսորուած է Սիպիր:

Հոս կը փակեմ Յուշերուս (1914-1916) այս մասը:

## ՈՒՐԻՇ ՄԱՆՐԱՎՀԵՊԵՐ ՇԱԽԱՏՈՒԹՈՒԹԻՒՆՆԵՐԵՆ

**Այժմ վերստին պիտի խօսիմ Շաւարշի քաջագործութեանց մասին:**

Ֆիլիպէ չմեկնած՝ ամբողջ ժամանակս կ'անցնէի գ. Յովհաննէսեանի սրճարանը։ Առիթով մը դ. Յովհաննէսեանը մօտս եկաւ եւ հեռուէն ցոյց տուաւ ծերուկ, կարճահասակ մարդ մը որ Մակեդոնիացի էր եւ ունէր խաւազի պաշտօն Պոլսոյ Պուլկարական հիւպատոսարանին մէջ։

— Իրեն շաքար եւ սուրճ պիտի տամ։ Փոխարէն կը խոստանայ Շաւարշը ազատել — ըսաւ։

Ուշադրութեամբ դիտեցի ցոյց տրուած մարդը եւ պատասխանեցի։

— Ես Պուլկար Հիւպատոսարանի եւ Դեսպանատան բոլոր խաւազները կը ճանչնամ շատ մօտէն։ Այս մարդը երբեք տեսած չեմ։ Վտանդաւոր գործ է ըրածդ։ Զըլլայ որ նման գործի մէջ մտնես, ասիկա կրակի հետ խաղալ է։

Խոստացաւ կապը խզել այդ մարդուն հետ։

Սակայն, իմ մեկնելէս ետք եւ կերպով մը որ ինծի անձանօթ կը մնայ, նախկին կապը կը վերահաստատուի։ Շաքարի ու սուրճի փոխան մարդը կը խոստանայ օգնել Շաւարշի փրկութեան։ Գ. Յովհաննէսեան նամակ մըն ալ կը դնէ մակեդոնացիին ձեռքին մէջ, յանձնելի Շաւարշին։ Արդիւնքը կ'ըլլայ այն, որ Շաւարչ կը ձերբակալուի եւ բանտ կը մնայ մինչեւ զինադադար։ Աւելի ուշ՝ ազատուելով եկաւ Սոֆիա եւ սկսաւ տարածայնել որ իմ կողմէ զրկուած նամակ մը պատճառ եղած է իր ձերբակալութեան։

**Շաւարշի անհեթեթ ու ապիկար ընթացքը նայեցէք թէ ուր հասած է։**

Պուլկար խաւազը կ'ըսէ, թէ Շաւարշը կալաթայի մաքսատունէն չոգենաւ պիտի նստեցնէ, եւ զինք կ'առաջնորդէ յիշեալ մաքսատան սալօնը։ Շաւարչ իր վերարկուին գրպանին մէջ ունէր իր նօթագրութեանց տետրը։

Պատկերը, իրապէս որ, զարմանալի է։ Շաւարչ չէ՞ր գիտեր որ շոգենաւով երթեւեկը շատոնց կանգ առած

էր այդ զըջանին մէջ: Իսկ եթէ չէր գիտեր՝ այս մէկն ալ աւելի մեծ ապիկարութիւն: Այս բոլորէն ետք ի՞նչ գործ ունէր նօթագրութեան տետրը գրապանին մէջ: Արդեօք կը կարծէր որ ամէն վտանգ անցած է եւ ինք ազատութի՞ւն կ'երթայ:

Արդէն ըսած եմ յուշերուս սկիզբը թէ՝ Շաւարչ յեղափոխական չէ եւ չի կրնար ըլլալ: Իր սեփական ապիկարութիւնը ծածկելու համար էր, որ Սոֆիա գալէ ետք, զիս ամբաստանեց ըսելով, որ իրը թէ իմ կողմէ իրեն ուղղուած նամակ մը պատճառ եղած է իր ձերբակալութեան: Ատենին ալ ըսի երեսին... Անխելք մարդ, խելքով գլուխդ ժողուէ, նախ լաւ մը ուսումնասիրէ ըսածներդ եւ յետոյ միայն ամբաստանէ դիմացինդ:

Եւ առանձին-առանձին թուեցի իր անմտութիւնները ու զինք լաւ մը սաստեցի:

Կրցի վկայութեան բերել նաեւ Գ. Յովհաննէսեանը, որ իր երեսին ըսաւ.

- Գրիգորը հակառակեցաւ ձեռնարկիս: Ես էի շաքար ու խահուէ տալով մարդուն զինք քեզի ուղարկողը, որ քեզ ազատէ:

Տեսնելով որ զիս ամբաստանելու իր նենգամտութեան մէջ ձախողեցաւ, այս անդամ ալ ուրիշ մեղադրանք մը շպրտեց երեսիս.

- Գացիր հետքդ կորսնցուցիր զիս մինակ ձգելով... կ'ակնարկէր Պոլսոյ մէջ ձերբակալութեանս եւ հազար դժուարութեամբ ազատումիս:

- Բնական է, ուրիշ ի՞նչ կրնայի ընել: Քու ինչ աստիճանի յեղափոխական ըլլալդ հասկցայ, եւ անկէ ետք չուղեցի գործակցիլ հետդ - եղաւ պատասխանս:

Մարդը խիզախութիւն ալ վերագրեր է իրեն, չուրծինները տպատրելու համար:

Իրը թէ ինքզինք բանտին մէկ պատշգամէն վար նետել ուղած է անձնասպան ըլլալու համար: Սակայն, իր չար բախտէն, ոտքը սայթաքեր է, կամ պահակ մը թեւէն բռներ է մետասաներորդ պահուն...:

Աւելորդ է ըսել, թէ անոնք սուս ու փուտ բաներ էին: Իր աքսոր չերթալը կը պարտէր իր կաթեղբօր՝ Ռեշատ Պէյին, որ Քրամը Սիասիի տնօրէնն էր: Իր աղամանդէ մատանին, նուրիրուած Ռեշատին, անշուշտ բարերար դեր ունեցաւ Մնացորդացի փրկութեան համար:

## ԿՐԿԻՆ ՊՈԼԻՍ ԵՒ ՎԱՏԵՐՈՒ ՀԱՅՈՒԵՑԱՐԴԱՐԸ

**Երկու տարի Պուլկարիա զինուորութիւն ընելէ յետոյ,** 1918-ին վերադարձայ Պոլիս։ Վիշապի կեդրոնական կոմիտէն պատրաստեց ցանկը բոլոր այն լրտեսներուն, որոնք աւեր գործած էին օգնելով ձերբակալութեան, աքսորուելուն եւ ջարդուելուն մեր աննման ընկերներուն ու ազգի զաւակներուն։

Այդ ցանկին վրայ իրենց արժանաւոր տեղը ունեցան Ալի Ռիզան, Յարութիւն Մկրտիչեանը, Հիտաէթը - որ ատեն մըն ալ վարդապետ եղած է, իսկութեան մէջ՝ վըտանգաւոր օձ -, Վահէ Եսայեանը, Փոլիս Կարապետը, Մակեդոնացի Կեղծ Շաւարշը եւ ուրիշներ։ Ասոնց մեծ մասը հաշուեյարդարի ենթարկած եմ ամիսներ շարունակ տքնելով եւ ուսումնասիրութիւններ կատարելով։ Բժախընդրութեամբ ընտրած եմ գործակիցներս։

Երբեմն պէտք կ'ըլլար շարաթներ շարունակ հետապնդել Յուղան, լաւագոյն պատեհութեան սպասել։

Օրինակի համար շատ չարչարուեցայ գլուխ հանելու համար հաշուեյարդարը Պուլկարին։ Ասիկա տունէն դուրս չէր ելլեր։

Իր տունը տանող փողոցներուն մէջ կ'ըլլայի այն պատրուակով, որ Պուլկարիայէն եկած իսղճ մըն եմ եւ կ'ուզեմ զինք տեսնել։

Տեսնելով որ մարդը գլուխը դռնէն դուրս հանած չունի, մէկ-երկու առթիւ գացի եւ բնակած տան դուռը թակեցի։ Կամ պատասխանող չէր ըլլար եւ կամ ուրիշ մըկու գար ըսելու, որ խնդրուած անձը կը բացակայի։

Ճարահատ՝ որոշեցի վարձել Պուլկարին բնակարա-

նին դիմաց գտնուող սրճարանին մէկ խուցը եւ հոն տեղաւորել Բաղէցի Արշակն ու Շապին Գարահիսարցի Շմաւոն Ասլանեանը:

Առաջու մը, ժամը 5-ին, դեռ աստղերը չմարած, մարդը գուրս կ'ելլէ սափորը ձեռքին եւ կ'երթայ «Ազատամարտ»ի չէնքին դիմացի եկեղեցիէն ջուր լեցնելու: Արշակ կը հետեւի անշուկ, առանց տեղեակ պահելու ընկերը. կը մօտենայ լրտեսին ասոր ջուր լեցուցած պահուն եւ հրազէնը կը պարպէ...

Վազելով եկաւ տուն: Զինք փակեցի թաքստոցին մէջ մինչեւ որ խնդիրը «պաղի»:

Այս տղան դեր ունեցաւ նաեւ Արամեանցի խնդրին մէջ:

Փոլիս կարապետը նախապէս Քում-Քափու կը բընակէր: Փախաւ եւ Թոփ-Քափու հաստատուեցաւ: Սակայն արդարութեան պատուհասող ձեռքէն չվրիպեցաւ: Իր հաշիւը մաքրողը եղաւ Չենկիլեցի Վարդանը, հրաշալի տըղայ մը, սակաւախօս, կտրիճ ու ճկուն: Վահէ Եսայեանը եւս իր արդար պատիժը ստացաւ առտուան ժամը 6-ին, տունէն դուրս եկած պահուն: Շատ վտանգաւոր լրտես մըն էր, որուն քովէն զոյգ ատրճանակներ գտնուեցան: Ճամքան, քալած միջոցին, ստէպ ետին կը դառնար որ հետեւող չըլլայ իրեն: Չեռքը ամէն վայրկեան ատրճանակին վրայ կը պահէր: Սայիտ Հալիմի գործը մաքրեց Արշաւիրը, որ խնամքիս ներքեւ մեծցած էր սկսեալ 12 տարեկանէն, իսկ Պէհաէտինի պատուհասո՞՝ Արամը, Շահանի միջոցաւ:

Ալի Ռիզան զգետնողը եղաւ Յովհաննէսը: Ծխախոտի մաքսանենդը իր կնոջ հետ տունէն դուրս ելած միջոցին վճարեց իր ոճիրին գինը...

Հիտաէթը փախցնողը եղաւ Բանթիկեան Արմենակ անունով անգլիական լրտես մը: Թէեւ այս գործին մէջ մեծ յանցանք ունի Ամատունին: Բանթիկեանը անոր հաւատացուցեր է, որ, իբր թէ, պիտի երթայ էնվէրը գըտնելու եւ զայն մաքրելու: Այսպիսով ձեռքէ փախցուցինք: Ո՞ւր անյայտացաւ, ա'լ չկրցանք գտնել:

## ԿՈՎԿԱՍԻ ՄԵԶ

Ա. - ԳԱՆՁԱԿԻ ՈՍՏԻԿԱՆԱՏՈՒՆԸ ՕԴԱՀԱՆ

1906 Յունուար 17-ին, Ռուսակամ զիս ուղարկեց Գանձակ, ուր կը շարունակուէին հայ-թաթարական կը-ոիւները:

Հոն, հետս ունենալով քանի մը Պուլկարահայեր՝ գործի լծուեցանք: Այստեղ էին Վառնացի Յարութիւնը (թոթովախօս), Ֆիլիպեցի Տիրան Մինասեանը, Զուլագործ Միքայէլը (Խենթ), Գրիգոր Պուլկարացին, Խարբերդցի Կարօն, Զանգեզուրցի Զարեհը: Միասնաբար եւ խանդավառորէն աշխատանքի ձեռնարկեցինք: Մեզի տըրուած առաքելութիւնն էր՝ ոռոմքեր պատրաստել եւ հասցընել ճակատի կոռուող ուժերուն:

Օր մը Միքայէլը (Խենթ), ծխախոտը բերնին, կը մտնէ տարրալուծարան, ուր կային դիւրավառ նիւթեր եւ ուր կը կատարուէին բաղադրութիւնները: Ինքզինքը հազիւ դուրս նետելու առիթ ունեցեր է: Սենեակին առաստաղը օդը ելաւ: Ծխախոտէն կայծ մը դիւրավառ նիւթի Տը փոխանցուած էր: Դէմքին ծանր այրուցքներ ստացած է՞:

Լուրը բերին Գիւլխանդեանի մօտ, ուր գացեր էի հաշիները ներկայացնելու: Շտապեցի տարրալուծարան: Արդէն փճացած էր 20 քլ. կրամ թանկագին նիւթ: Բարեբախտաբար կեանքի կորուստ չկար:

Գանձակի կայարանը ընդհանրապէս թաթարներէ բնակուած մասին մէջ կը գտնուէր: Այստեղի ոստիկանները կաշառելով միայն կրցեր էինք հոն հասած ուազմանիւթը ապահով մեր կողմը անցնել: Թաթարներու բողոքին վրայ հոն գտնուող 20 ոստիկանները փոխուեցան: Անոնց

տեղը մուժիկներ բերին։ Անկարելի եղաւ կաշառել անոնց։ Մեր ապրանքները յաճախ անոնց ձեռքը կ'իյնային։

Որոշեցինք ոստիկանատունը օդը հանել։ Պատրաստեցինք մեքենայումը մը՝ 16 ֆունտանոց։ Ոստիկանները կը բնակէին կայարանին մօտ գտնուող ֆարվանարայի մէջ։ Դանձակեցի Արամը հետո առի եւ մէկ հարուածով մաքրեցինք բոլորը (12 ոստիկան)։ Արամը ոտքէն վիրաւորուեցաւ։ Իսկոյն հիւանդանոց փոխադրեցինք։ Ստացաւ պէտք եղած խնամքը եւ երկու-երեք օրէն ոտքի ելաւ։ Մինչ այդ՝ մնացեալ ոստիկանները իրենց պաշտօնը լքելով հեռացեր էին։ Մերժած էին աշխատիլ։

Սակայն, սկսան լայն չափի խուզարկութիւնները։ Կոլիցինի տեղակալը՝ Լոլացէն, զարմանալի յանդուզն մարդ էր։ Բնակարաններու պատուարներն ու պարտէզներն անդամ փորել տուաւ։ Բայց չկրցաւ բան մը ձեռք ձգել։ Որովհետեւ մեր պահեստանոցները փողոցներու ներքեւ շինուած էին։ Տուներու պարտէզներէն հոն տանող փապուղիներ բացած էինք։ Բարկութենէն պարպել տուաւ բոլոր գրադարանները, գիրքերը փողոցները թափելով զանոնք այրեց։ Զինք մաքրելու գործը վստահուեցաւ Զինուորական Մարմնին։ Մեկնումի օրը նախ կառքին ձիերը, իսկ յետոյ զինք հրացանազարկ ըրին։ Առաջին համազարկէն ետք, ատրճանակը ձեռքին կառքէն վար ցատկեց։ Գնդակ մըն ալ գլխուն պարպելով զինք պառկեցուցին ձիերուն քով։ Ասոր դէմ «արեան տուրք» գանձուեցաւ բոլոր Գանձակեցիներէն։

Այստեղ պատրաստեցի հրթիռ մը, որուն գլխամասին մէկ քլ.կրամ ոռումը զետեղելով կարելի կ'ըլլար զայն արձակել մինչեւ հինգ հարիւր մեթր հեռաւորութիւն։ Կը պայթէր թէ՛ ջուրի եւ թէ՛ ցամաքի վրայ, տեսակ մը գերմանական Վէ-Լի ձեռով, սակայն՝ անոր մանրատեսակը։ Փորձին ներկայ գտնուելու համար Խոստոմը Թիֆլիսէն Գանձակ եկաւ։ Գացինք հեռու յեռնադաշտ մը, քանի մը խմբագետներով՝ Սեպուհը, Վարժապետ Մարտիրոսը, Կայծակ Առաքելը, Կոբեցի Մուշեղը, Ասքարիցի Սագօն եւ ուրիշներ։ Փորձը շատ յաջող անցաւ, թէեւ ես ալ ձեռքէս վիրաւորուեցայ։ Թեւս մորթագերծ եղաւ այրուցքներու հետեւանքով։ Յատուկ եռոտանի մը շինել տուած էի որ հարթակի դեր կը կատարէր։ Հրթիռը անոր վրայ կը զետեղէի։ Մոռցեր էին զայն միասին առնելու։ Մտիպուեցայ

ձեռքով ուղղութիւն տալ հրթիռին։ Անակնկալ ցնցումի հետեւանքով դարձաւ ձեռքիս մէջ եւ թափեց ամբողջ մորթըս։ Բայց պէտք էր տեսնել Ռոստոմի ոգեւորութիւնը։ – Ասոնց շնորհիւ կրնանք Վանի վրայ արշաւել – հետեւցուց, սքանչացած աչքերով։

Թէեւ, այսուհետեւ ալ, կառավարական խստութիւնները շարունակուեցան։ Խուզարկութիւնները կանգչառին, կոխեցին մեր արհեստանոցը բայց չկրցին բանդտնել։



## ԳԱՆՉԱԿԵՆ ԲԱՍԵՆ՝ ՆՈՐ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՄԲ

**Այսուհանդերձ օղակը երթալով կը սեղմուէր եւ չնչելու հնարաւորութիւն չէր մնար:**

Ընկերներս մեկնեցան Վան, իսկ Ռոսսաոմը զիս Բասէն ուղարկեց նոր առաքելութեամբ։ Ինծի վստահուած նոր առաջադրութիւնն էր պատրաստել նոր հրթիւններ եւ ընտրել փորձարկման դաշտ մը։ Գացի Ղարսի ճամբով։ Սոսկալի ցուրտ կ'ընէր, նուազ 40 աստիճան։ Սարըզամիշի ճամբուն վրայ հանդիպեցայ Տուրպահին (Կեկլի Ահմէտ)։ Սահնակով կը ճամբորդէի։ Զիս վար դրաւ, քանի մը ժամ զրուցեցինք քիչ մը ամէն բանի մասին, յետոյ շարունակեցի ճամբաս, հասայ Սարըզամիշ։ Յարմար վայր մը չգտայ։ Անցայ Պայլարա, Սէօկիւտլիւ եւ անկէ ալ Պայլուրտ գիւղերը։ Վերջին վայրը ունէր որոշ յարմարութիւն։ Կար 80 տունէ բաղկացած աւան մը ուր կրնայի աշխատիլ աննկատ։ Գիւղացիները համաձայն եղան եւ օդնութիւն խոստացան ինծի։ Շտապեցի վերադառնալ թիֆլիս։ Ռոսսաոմին զեկուցեցի որ նպատակայարմար շրրջան մը գտած եմ Բասէնի մէջ։ Շրջանի բնակիչներն ալ պիտի գիւղացնէին գործս։ Կը մնար հաւանութիւն տալ եւ տրամադրութեանս ներքեւ դնել քսան երիտասարդ։

Ռոսսաոմ թելադրեց որ սպասեմ քիչ մը։

— Մի քիչ ապասիր, անմիջական եւ շատ անյետաձրգելի անելիք ունես — եղաւ առարկութեանս կտրուկ պատասխանը։

Ի՞նչ էր ընելիքս։

Ամէն օր խուզարկութիւններ տեղի կ'ունենային։ Պիտի պատրաստէի յապաղիչ ոռոմբեր որոնք պիտի գե-

տեղուէին պահարաններու մէջ՝ որոնց կափարիչը հազիւ բացուած՝ պիտի պայթէին:

Ռոստոմը բացատրեց որ ռստիկանութեան հակա-հարուած տալու համար կեղծ մատնութիւններ պիտի կա-տարուէին: Աստիկանները պիտի գային խուզարկելու այս կամ այն տունը, ուր նախօրօք զետեղուած պիտի ըլլային յապաղիչ ռումբ պարունակող պահարաններ: Զէնք, պայ-թուցիկ կամ արգիլեալ գրականութիւն ձեռք ձգելու հա-մար երբ կափարիչը բանալ պիտի փորձէին . . . պիտի րս-տանային իրենց փնտուածը:

Շուտով գործի անցայ եւ պատրաստեցի երեք ժա-մացուցաւոր-յապաղիչ ռումբեր: Առաջինը զետեղուեցաւ Արմիանսք Ուլիցա (Հայկական Փողոց) կոչուած վայրին մէջ գտնուող տուն մը, երկրորդը Մոլլա Ճալու՝ թաթա-րական թաղ բնակող հայու մը բնակարանը, իսկ երրոր-դը՝ համեմատաբար հարուստ թաղի մը մէջ՝ կալավինսքի Պրոսպեկտ:

Երեք փորձերն ալ յաջողութեամբ պսակուեցան: Այ-նուհետեւ ոչ մէկ ռստիկան կը համարձակէր հայու մը տունը խուզարկել: Կը նախընտրէին դասալիք ըլլալ, քան թէ խուզարկութիւն կատարել:

Գիշեր մը, 1906-ի Դեկտեմբերի գիշեր մը եղայ Ռոստոմի բնակարանը՝ թիֆլիս: Օր մը առաջ Ռոստոմը ըսած էր.— «Վաղը գիշեր քեզ կը սպասեմ մեր տունը: Տա-րեգարձս է, կու գաս, էլիզն ալ կը տեսնես»: Էլիզը իր կո-ղակիցն էր, շատ զնահատուած հոետոր եւ մանկավարժ մը: Զինք կը ճանչնայի Պուլկարիայէն:

Նոյն գիշեր եղայ Ռոստոմի Տունը: Սեղանակից էին մայրն ու քոյրը: Հազիւ սեղան նստած էինք երբ տանտի-րուհին՝ էլիզը, թանապուրը լեցնելու պահուն, չերեփը կաթսային մէջ ձգելով դարձաւ Ռոստոմին ու ըսաւ.

— Ստեփան, այսօր քու 46-րդ տարեդարձն է: Խոս-տացեր էիր որ 46 տարեկանիդ պիտի քաշուիս կուսակցա-կան աշխատանքէ:

Վէճ մը ծայր տուաւ էրիկ-կնկայ միջեւ, որուն ան-խօս վկաներն էինք:

Ռոստոմը քիչ մը քմծիծաղով կը պատասխանէր Տի-կին էլիզի դառն խօսքերուն: Տանտիրուհին երբ համոզ-ուեցաւ որ Ռոստոմը տեղի տալու նպատակ չունի, դարձաւ ինծի օգնութիւնս ապահովելու նպատակով.

— Հսէ, Գրիգոր, իրաւունք չունի՞մ նեղանալու:

Ռոստոմ միջամտեց, դէմքին տալով լրջութիւն եւ անկէ վանելով ժախտը.

— Հասկցի՛ր, էլիզ, այսպիսի կրիտիկական ժամանակներուն ինչպէ՞ս կ'ուզես որ Ռոստոմը մեկուսանայ: Բոլոր հայերը պայքարի մէջ են Թաթարներու հետ: Կարելի՞ բան է որ Ռոստոմը դասալիք ըլլայ երբ հայութեան ճակատագիրը Ռոստոմին ձեռքն է:

— Այն ատեն չ'ամուսնանայիր, — եղաւ էլիզի պատասխանը:

Ընթրիքէն ետք քաշուեցանք անկիւն մը, ուր առինք մեր սուրձը: Այդ պահուն Ռոստոմը ըսաւ.

— Գրիգոր, կուսակցութիւնան ամենէն վտանդաւոր առաքելութիւնները քեզի վստահեցանք, եւ դուն արժեցուցիր ինքզինքը: Բաւական յոզնած ըլլալու ես: Քեզ զրկեմ ծնողացդ մօտ որ քիչ մը հանդսատանաս:

— Զէ — կտրեցի զինք կտրուկ —, դեռ նոր աշխատանքի սկսանք եւ ընելիք շատ կայ: Հիմա տեղ չեմ երթար:

Աւելի չպնդեց, եւ տեսնելով վճռակամութիւնս, զիս նոր պարտաւորութիւններու տակ դրաւ:

Երկու ամիս ետք, քսան տղաներ միասին վերցուցած, մեկնեցայ Պայպուրտ գիւղը: Ռոստոմը կը հետեւէր մեր գործունէութեան եւ պարբերաբար մեր աշխատանքին անհրաժեշտ նիւթեր կ'ուղարկէր:

Կարճ ժամանակէն պատրաստեցինք հարիւրաւոր հրթիւններ:

Այս միջոցին լուր բերին թէ Հեսօ Պէկը, իր քսան խոլամներով, գիւղի Քզիր Յարութիւնին տունը իջեր է: Տղոց հրահանգեցի որ տունը պաշարեն եւ սպասեն տալիք վերջին հրամանիս: Հետո էր Համզօ անունով քիւրտ մը, որ հայերէն լաւ կը խօսէր: Տասնոցս մէջքիս կապելով եւ Համզօն ալ միասին առնելով իջանք Քզիրին տունը: Տեսայ քսան խոլամները, զէնքերը ձեռքերնին, սետիրի վրայ նստած, միւս կողմն ալ՝ գիւղացինները: Իսկ կեղրոնը տեսայ հսկայ, գեղադէմ մէկը. Հետեւցուցի անոր Հեսօ Պէկն ըլլալը: Զինք բարեւեցի եւ գացի նստելու իր մօտ.

— Հայր օլա, Պէկ էֆէնտի, նասրի օլտու տա պէօյլէ խոլամլարա պիր-պիր սիլահ վերմիշսինիզ ... նէ սեպեպտէն տօլայը: (Խեր ըլլայ, Պէկ էֆէնտի, ի՞նչպէս կ'ըլլա

որ այս խոլամներուն մէկ-մէկ հրացան տուած էք... ի՞նչ  
է պատճառը) :

Մարդը որ ծալլապատիկ նստած էր, ծնկաչոք ձեւ  
առաւ եւ յարգալիր կերպով հարցուց, թէ որո՞ւ հետ կը  
խօսի: Պատասխանեցի, թէ Դաշնակ Կոմիտէի ներկայա-  
ցուցիչն եմ:

Համզօն բացատրեց գեղ գալուն նպատակը:

- Քղիր Յարութիւնին եղբայրը՝ Կարօն, մեր գիւ-  
ղին Քղիրին իր հնդը մէկ մեծիս ամսականով կապալի  
տուեր է: Եւ սակայն փոխանակ չորս մուրհակի, անհատ-  
նում մուրհակներ մէջտեղ կ'ելեն: Մինչդեռ մեր Քղիրը  
միայն չորս հատ կնքած է:

- Ուրեմն եկած էք այս խնդիրը կարգադրելու, -  
հետեւցուցի ես, եւ աւելցուցի. - Եթէ ուզէք դատաւոր ըլ-  
լամ եւ լուծեմ խնդիրը - առաջարկեցի:

Հեսօն հաւանութիւն տուաւ:

Դիմեցի երկու կողմերուն՝ հողատիրոջ եւ պարտա-  
տիրոջ որ պատմեն թէ ինչ էր իրենց սկիզբի համա-  
ձայնութիւնը: Պահանջեցի որ ցոյց տան մուրհակները:  
Բացի չորսէն մնացեալ մուրհակներն ալ կնքուած էին նոյն  
Քղիրին կնիքով: Հարցուցի քիւրտին, թէ կը հաստատէ՞  
բոլոր մուրհակներուն իր կնիքով կնքուած ըլլալը: Մար-  
դը հաստատեց, բայց սկսաւ լալահառաչ պնդել, որ կնիքը  
թէեւ իրն է, սակայն ինք չէ կնքած բոլոր մուրհակները:  
Հաղար երդում ըրաւ: Դիմեցի Կարոյին եւ բացատրու-  
թիւն պահանջեցի: Կմկմաց եւ խուսափողական պատաս-  
խան տուաւ: Տղոց հահանգեցի, որ խուզարկեն Կարոն:  
Վրային եւս 11 հատ մուրհակ գտնուեցաւ, բոլորն ալ Քր-  
ղիրին կնիքով կնքուած:

Շուտով հաստատեցի որ գողցեր է Քղիրին կնիքը եւ  
անով կնքած կեղծ մուրհակները:

Դառնալով Պէկին վճռեցի.

- Երկուքն ալ յանցաւոր են: Մէկը իր կնիքը գող-  
ցուցեր է, իսկ միւսն ալ կնիքը գողնալով զայն շահագոր-  
ծեր է: Երկուքն ալ պէտք է պատժուին:

Պէկը համաձայն գտնուեցաւ.

- Ես քեզի կը թողում: Դուն որոշէ պատիժները -  
ըսաւ:

Նախ անվաւեր յայտարարեցի կեղծ մուրհակները,  
յետոյ պահանջեցի Կարապետէն որ կնիքը գողցած ըլլա-

լուն համար իսկոյն 10 մեծիտ նուիրէ գիւղին դպրոցին: Նաեւ, պահանջեցի Քզիրէն որ կնիքը գողցուցած ըլլալուն համար 5 մեծիտ նուիրէ նոյն դպրոցին:

Ներկաները գոհ մնացին այս կարգադրութենէն, որ տեղւոյն վրայ գործադրուեցաւ:

Պէկը չնորհակալութիւն յայտնեց եւ հրաւիրեց զիս որ զինք այցելեմ: Պատրաստակամ եղաւ ոչխար մը մորթելու:

Փոխադարձեցի չնորհակալութեան: Բսի, թէ յարմար ատենին կը հանդիպիմ (թէեւ պատեհութիւն չներկայացաւ): Թելադրեցի սակայն, որ ուրիշ առթիւ, եթէ նման պատահարներ ըլլան, զինեալ մարդիկ վերցնելով գիւղ չմտնէ: Կրնայ թիւրիմացութեան տեղի տալ: Եթէ նախօրօք լուր զրկէ, շուտով կը լուծուին դժուարութիւնները առանց զինեալ մարդոց ներկայութեան պէտքը ըզգալու:

Օրն ի բուն պայթուցիկ նիւթերով զբաղած ըլլալուս՝ գրեթէ թունաւորուած էի: Գրեցի Ռոստոմին որ քիչ մը հանգիստ տայ թէ՛ ինծի եւ թէ՛ տղոց: Արտօնեց ինծի որ երթամ Պաթումի մօտ գտնուող Մախանճաւոր գիւղը: Ծովահայեաց եւ սիրուն Լեզկի գիւղ մըն էր:

Հազիւ քսան օր հանգստացեր էի այստեղ, երբ հասաւ կկ.ի քարտուղար Մանասը ըսելու համար, թէ Թիֆլիս պէտք է մեկնիմ շուտով, քանի Ռոստոմը զիս կ'ուզէ:

Հրահանգը երկրորդել չտուի: Անցայ Թիֆլիս եւ ներկայացայ Ռոստոմին:

— Պատրաստուէ շուտով ճամբայ ելլելու: Պուլկարիոյ վրայով պիտի մեկնիս Ժընեւ: Հոն պիտի ջանաս կատարելագործել մասնագիտութիւնդ հրթիոներու եւ յապաղիչ ոռմբերու պատրաստութեան մէջ: Մեծ յոյսեր դրուած են վրադ:

## ԴԵՊԻ ԺԸՆԵՒ

Ճամբայ ելայ դէպի Պուլկարիա, եւ հոնկէ ալ անցայ ժընեւ: Մտայ գործարան մը ուր հեռաձիգներ կը պատրաստէին արդիական մեթոսով: Մեծ տարրերութիւն չկար թէպէտ անոնց եւ իմիններուս միջեւ: Գլխաւոր եւ միակ տարրերութիւնը կը կայանար այն բանի մէջ, որ անոնք կ'օգտագործէին ջրաճնշումի գործիք մը: Մինչդեռ իմ գործածած պարզունակ եւ նախնական բան մըն էր:

Ամբողջ ուշքս կեդրոնացուցած էի որպէսզի իւրացընեմ այդ գործիքի պատրաստութեան ձեւը, եւ տիրանամ արդի միւս մեթոսներուն:

Նպատակիս հասած էի: Կրնայի առանձինս պատրաստել արդիական հրածիգ մը: Պէտք եղած նիւթերը ապահովելով պատրաստեցի զէնքը:

Այդ օրերուն ժընեւ էին՝ Դրօն, Մարտիրոսը՝ որ նահատակուեցաւ Պարսկաստանի կոփւներուն մէջ, Եփրեմին հետ, Վարդանը, Մանղալը Զարեհը որ Սուլթանին մահափորձին Ռուալինային հետ կառքը Երլուրզ տարաւ: Այդ նոյն Զարեհն է, որ Պանքայի գրաւման մասնակցած էր, Օր. Սիրանոյշ՝ էս. էս.ներու կողմէ ուղարկուած որ ձեռնառումը նետել (մասնաւորաբար յատուկ գործիքով) սորվի:

Օր մը, ժընեւէն դուրս՝ Կրան Սալեւի մօտերը փորձի գացինք: Փորձարկման պիտի ենթարկէինք մեր պատրաստած նոր ձեռնառում բերը, ինչպէս նաեւ հեռաձգութեան նոր դրութեան մը ճշգրտութիւնը:

Փորձը յուսացածէս աւելի արդիւնք տուաւ: Հեռաձրգութեան մեքենան շատ լաւ գործեց: Ռումբ արձակեց մինչեւ 5 հազար մեթր: Ինկած է Ֆերնիկ կոչուած Փրանսական սահմանագլուխի պահակատան մօտ:

Զեռնառում բին մեքենայով պայթեցումը, Սիրանոյշի եւ Մարտիրոսի միջոցաւ, նմանապէս յաջող անցաւ:

Ետքէն իմացանք որ Ա. ռումբին պայթիւնը խուճապ ըստեղծած է:

Արդարեւ, նոյն երեկոյեան ոստիկաններ եկան մեր դուռը բաղնելու: Լրտեսուած էինք անշուշտ: Մեզ հրաւիրեցին պահականոց՝ հարցաքննութեան: Հետո եկաւ Ակնունին: Առաջին հարցուփորձէ մը ետք մեզ ազատ ձգեցին պատուիրելով, որ հետեւեալ օրն վերստին ներկայանանք: Զանց կ'ընեմ մանրամասութիւններու նկարագրութիւնը:

Նոյն գիշեր իսկ ճամպրուկս կապեցի եւ հեռացայ զուխցերիական սահմանէն: Յետոյ իմացայ որ զիս դատած են ի բացակայութեան եւ երկու տարի բանտարկութեան դատապարտած:

Մեկնելիս ետք Դրօն եւ Մարտիրոսը արտաքսած են Ֆրանսա, իսկ Սիրանոյչին մէկ ամիս բանտարկութիւն տուած են:

Ժընեւի մէջ պատասխանատու մարմնի անդամ ընտրուեցանք՝ Անդրանիկը, Վահագն Տաթեւեանը, Ակնունին, Դրօն, Գիւլիսանտարեանը, ես եւ Հրաչեայ Մարալը, որ Հնչակեան գործիչ էր եղած, յարեցաւ մեզի: Քիմիագիտութիւն սորված էր Անգլիա:

Անդրանիկը մերժեց իր մասնակցութիւնը ըսելով, թէ Ակնունին յարմար չէ այդ գործին: Դրոյին համար ալ նոյն առարկութիւնը ըրաւ ըսելով, որ թուրքերէն լաւ չրդիտնալը զինք անյարմար կը դարձնէ այդ պաշտօնին: Գիւլիսանտարեանը նոյն իսկ չուզեց մասնակցիլ:

Մնացինք չորս հոգի: Եկանք ֆիլիպէ (Պուլկարիա) եւ պատրաստութիւն տեսանք անցնելու Վիշապ:

Հակառակ իմ դէմ գոյութիւն ունեցող դատապարտութեան վճիռին, մէկ քանի առիթներով անցայ Եւրոպա եւ յատկապէս Ժընեւ, պես-մօրուք ածիլելով եւ ամէն անդամին ալ կեղծ անցագիր կրելով: Ժընեւէն 50 քիլոկրամ պայթուցիկ առի եւ փոխադրել տուի Պուլկարիա եւ անկէ՝ Վիշապ: Տղաքը իրար անցան եւ անխոհեմութիւն կոչեցին ըրածու: Կարեւորութիւն չտուի: Լեցուցի ճամպրուկներս եւ անցայ Վիշապ: Այս անդամ Սահմանադրութենէն ետք էր: Ամէն տեղ կը տիրէր ոգեւորութիւն: Դաշնակցութեան շարքերը կ'ընդլայնէն: Կրկին հրապարակի վրայ էր Շաւարչ Միսաքեանը, որ ինքզինք կը ներկայացնէր որպէս ներկայացուցիչ Յեղափոխ. անցեալի մը, սերունդի մը:

## ԻՆՉՈ՞Ի ԶԱԽՈՂԵՑԱԻ ՍՈՒԼԹԱՆԻՆ ԴԵՄ ԿԱՏԱՐՈՒԱԾ ՄԱՀԱՓՈՐՁԸ

Սուլթանին դէմ կազմակերպուած մահափորձը ձախողեցաւ պարզապէս մասնագէտ քիմիագէտի մը պակասին հետեւանքով:

Որո՞նք էին մահափորձին մասնակցողները՝ Ա.- Սաֆօ, Բ.- Ռուպինայ Ֆայն - որ դեռ ողջ է եւ կը բնակի եգիպտոս, Գ.- Սեւ Աչոտ, որ ելեկտրագէտ եւ մասնագէտ է, Դ. - Թորդոմ եւ Քրիս Ֆեներձեան (Սիլվիո Ռիչի), որո՞նք փոխադրական գործերով կը զբաղին, Ե.- Մանկալճը Զարեհը, որ ժամանակին Պանք Օթոմանը գրաւողներէն մէկն էր եւ իբր կառապան Սուլթանին կառքը քշող, Զ.- Սինմերի պաշտօնեայ պելճիքացի մը, որ թղթակցութիւններ կը կատարէր:

Զախողութեան առաջին պատասխանատուն թիւֆէնկչիւն էր, Մակեղոնական Կուսակցութեան Բիւրոյի անդամ, որ ետքէն առարկեց, թէ պայթուցիկ նիւթ պատրաստող գործարանը խարդախած է իր արտադրութիւնը, վասնզի փիւրօքսելինը գեղնորակ փոշի մըն է, որ կարելի է խարդախել զայն ամէն տեսակի փոշիով եւ ծանրութիւն տալ:

Ասոր առաջքը կրնար առնուիլ եթէ ժելաթին պայթուցիկը ընտրուէր: Ասիկա լոքումի նման խմոր մըն է, զոր խարդախել կարելի չէ:

Կառքին ձիերը ապսպրուած էին Աւստրիայէն: Երկու հրաշալի երիվարներ որո՞նք պիտի քաշէին կառքը, որուն անիւները բառչուկով պատուած էին:

Կառապանին նստարանը պիտի լեցուէր փիւրօքսելինով եւ 50-60 քլ. կրամ պայթուցիկով: Եթէ անխարդախ,

100 առ 100 ուժականութիւն ունեցող փիւրոքսելին ըլլար մինչեւ իսկ կրնար հիմնայատակ ընել մզկիթը ուր աղօթելու եկած էր Սուլթանը:

Մէկ քանի առթիւ կառքին նստարանին ձեւը փոխուեցաւ, որպէսզի կարելի ըլլայ զայն նստարան-ականի վերածել: Սեւ Աշոտը, իբր ելեկտրագէտ, յարմար գտաւ կարգադրութիւնը: Ժամացոյց մը զետեղեց որ ուզուած պահուն կայծ պիտի հաղորդէր ոռում թին: Բազմիցս փորձեց եւ համոզուեցաւ որ կայծ փոխանցելու յատուկ մեքենականութիւնը լաւ կը բանի:

Յետոյ կատարուեցաւ հարկ եղած ուսումնասիրութիւնները: Սուլթանը ո՞ր ժամուն կ'երթայ մզկիթ, ո՞ր ժամուն կը մեկնի մզկիթէն: Վստահ ըլլալէ ետք ճիշդ ժամադրութեան՝ կ'որոշուի մահափորձի օրն ու ժամը:

Ուրբաթ օրը կառքը կը զետեղուի ճիշդ վանդակապատին առաջ ուրկէ կ'անցնի Սուլթանը:

Ռուպիինան կը սպասէ որոշուած ժամուն որ կոճակը սեղմէ: Ռուպիկանները կը նկատեն կառքը եւ Ռուպիինան որ մէջը նստած է: Կը ստիպեն որ կառքը 50-60 մեթր հեռու փոխադրուի: Ռուպիինան անդրդուելի կը մնայ, միայն կը ձեւացնէ որ տրամադիր է ենթարկուելու ոստիկաններու հրահանգին: Նոյն իսկ քանի մը մեթր անդին կը տանի, բայց միշտ անհամբեր կը սպասէ կոճակը սեղմելու երկվայրկեանին, եւ ասիկա՝ հակառակ կառապան Զարեհի պնդումներուն: Կ'ուզէ որ անպայման ինք ըլլայ կոճակը սեղմողը:

Գործողութիւնը կը կատարուի յաջող կերպով, բայց արդիւնքը՝ ոչինչ: Եթէ նոյն իսկ կառքը հեռացուած չըլլար, կրկին Սուլթանը անվնաս պիտի մնար, քանի որ ոռում թին փիւրոքսելինը միայն 40 առ հարիւր ոյժ ունէր:

Այն տարածայնութիւնը թէ՝ Սուլթանը, այդ օր, չարաբախտ զուգադիպութեամբ մը խօսակցութեան բրոնուած է Շէյխ Խուամին հետ եւ 1-2 վայրկեան ուշացումով դուրս եկած է մզկիթէն իր կառքը մտնելու համար, ամբողջութեամբ յերիւրանք է:

Իր ապիկարութեան ու պնդաճակատութեան փոխան չպատժուեցաւ Ռուպիինան, որովհետեւ կը նկատուէր Քրիստոափորին աղջիկը:

Չպատժուեցաւ Թիւֆէնկճիեւը, որովհետեւ կարելի չեղաւ կտրուկ կերպով հաստատել թէ ո՞վ եղած է պայ-

թուցիկ նիւթը խարդախողը՝ թիւֆէնկճիեւ՞ը, թէ այդ նիւթը պատրաստող գործարանատէրը:

Միայն Սաֆոն կախակայուեցաւ ձեռնառումքը կառքի վերածած ըլլալուն համար:

Մահափորձին ձախողելէն շաբաթներ ետք նիկոլը քննութիւն բացաւ, անալիզի ենթարկեց գնուած փիւրոֆսելինը եւ հաստատեց անոր անզօր ըլլալը: Ձեռնարկը ոչ միայն ձախողեցաւ, այլ միլիոններ արժեց:

Սուլթանի մահափորձի ժամանակ դեռ նոր երիտասարդ էի, սակայն, թէ՛ Քրիստովորի եւ Երուանդի մահացու ոռումքի փորձը եւ թէ՛ Սուլթանին դէմ կատարուածին ձախողիլը զիս բաւական յուզեցին: Բնականէն մղեցին զիս որ մասնագիտանամ պայթուցիկներու պատրաստութեան մարզի մէջ:

Համոզուած էի որ Սուլթանի դէմ եղած մահափորձին ձախողութիւնը, հակառակ ծով գոհողութիւններու վատնումին, հետեւանք է ապիկարութեան եւ տգիտութեան, գոնէ՝ մասնագէտի մը չգոյութեան:

Այս անյաշողութենէն ետք խնդրեցի Ռոստոմէն որ գրէ Ֆիլիպէ (Պուլկարիա) եւ բերել տայ պայթուցիկի մասնագէտ մը, որ պէտք եղած ծանօթութիւնները տայ մեղի, վարժեցնէ անոնց գործածութեան, պայթուցիկներու տեսական յատկութեանց:

Լսաւ, թէ կը ճանչնայ Ղարաբաղցի նիկոլը որ նոր աւարտած է Քիմիական Համալսարանը: Սակայն թոքախտաւոր է, եւ եթէ ընդունի գալ՝ ինք ամէն միջոց պիտի տրամադրէ:

Ռոստոմի հրաւէրին ընդառաջելով նիկոլ Վիշապ եկաւ: Ես եւ Ընկ. Մկրտիչ Սանտալճեան սկսանք տեսական ու գործնական դասեր առնել, եւ 3-4 ամսուան ընթացքին կարող եղանք առանձին առաքելութիւններ յաջողութեամբ գլուխ հանել:

Ահա ա՛յս միջոցին է, որ նիկոլ հաստատեց ողբերգութիւնը Սուլթանի մահափորձին շատ գէշ կազմակերպուած եւ գործադրուած ըլլալուն:

Եթէ նախօրօք ճանչցած ըլլալինք նիկոլը, Քրիստոափորի ծրագիրը չէր ձախողեր: Ինք եղաւ գոնողը, որ գործածուած մենելիթին 60 առ հարիւրը խարդախուած է:

Պայթուցիկներու պատրաստութեան եւ անոնց յատկութեան տիրանալէ ետք է, որ խնդրեցի Ռոստոմէն որ զիս

ուղարկէ Թաթարական կոիւներու մասնակցութեան։ 1905-ի Դեկտեմբեր 5-ին զիս ուղարկեց Թիֆլիս, ուր ծանօթացայ այնտեղի բոլոր ընկերներուն, յետոյ անցայ Գանձակ, Գիւլխանտարեանի մօտ։ Առաջին բաղխումները եղած էին։ Զինուորական հրամանատարութիւնը Համագասպին ձեռքն էր, յետոյ փոխուեցաւ եւ Սեպուհ Արշակին յանձնուեցաւ։ Իմ պատրաստած ոռոմբերը յանձնուեցան։ Իմ պատրաստած ոռոմբերը նպաստեցին կարեւոր յաջողութիւններու։ Վրէժինսդիլ մեր ուժերը մէկ շաբթուան մէջ շատ գործ տեսան։ Թաթարները մեծ կորուստներ կրեցին։



## ՍԱՅԻՏ ՀԱԼԻՄԻ ՀԱՅՈՒԵՅԱՐԴԱՐԸ

Երբ Պոլիս հասայ, արդէն տրամադրութիւնս փճացած, չուզեցի մասնաւոր զեկուցումը ընել Ղարաբաղի աղիտալի դէպքին մասին, իբր ժողովէն եկող Պատգամաւոր. քանզի որոշած էի այլեւս ոչ մէկ աշխատանքի լծուիլ: Կ. կ.ի անդամները, որ զայրացած էին արդէն Ղարաբաղի քաթասթրոֆէն եւ իրենց բողոքը հասցուցած երեւան, բուռն կերպով կ'աշխատէին զիս գործին կապուած պահել: Նամակ գրեցին Պիւրօ, «անկէ դատ յարմար մէկը չունինք» ըսելով:

Այդ օրերուն նամակ մը կը ստանամ Ռուբէնէն (Ռուբէն Փաշա), որ ի մէջ այլոց կ'ըսէլ:- «Գրիգոր, մենք քեզ չկրցինք լաւ ճանաչել: Քեզմէ դեռ չատ կարեւոր գործեր կը սպասենք, մեզ մի ձգեր եւ խոստումդ կատարէ»: Զի կրցայ մերժել այս անդամ, կրկին մտայ ահարեկչական աշխատանքին մէջ:

Ամերիկայի Կ. կ.ի իմ անունիս զրկած 4006 տոլարը իր նպատակին յատկացնելու սկսելով, Պոլսոյ մէջ Վեց ԳՈՐԾԵՐ կատարելէ ետք (որոնց մասին խօսած եմ), քանի մը ամիս յետոյ անցայ Պերլին, երբ Սողոմոնը (Ս. Թեհլիրեան) բանտէն ելած էր: Հոն էին Զամալեան եւ ուրիշներ, բայց չկար Շահանը (Շ. Նաթալի), որուն գրած էի ժամանակին թէ գործս վերջացնելէ յետոյ Պերլին պիտի դայի, ուր բազմաթիւ եւ ծանօթ ջարդարար թուրք փաշաներ ապաստանած էին եւ որոնց կրնայինք բոլորը միասին մաքրել: Դժբախտաբար փոխանակ նկատի առնելու իմ թեղադրութիւնները եւ քիչ մը սպասելու, վերջապէս առիթ տրուած էր անոնց, որ իրենց օձիքը ազատեն ու անհետանան:

Ուրեմն, ինծի կը մնար վերսկսիլ հետապնդումնե-

րը, երեւան հանելու համար թուրք ջարդարար փաշաներուն նոր թաքստոցը:

Որոշեցի սկսիլ իտալիայէն, որուն համար հետո առնելով Արշաւիրը՝ անցայ Հռովմ: Արշաւիրը նախընտրելուս պատճառը մասնաւրապէս այն էր, որ ան իր Փիգիքականով ու արտաքին տեսքովը ուշադրութիւն չէր գըրաւեր, կասկածելի չէր երեւնար կատարուելիք հետազօտութեանց ընթացքին: Բաւական ճարպիկ եւ ուշիմ էր: Սակայն, որո՞ւ մտքէն կ'անցնէր թէ ան քիչ յետոյ պիտի մոլորէր, թերանար իր պարտականութեանց մէջ ու ես ըստիպուած պիտի ըլլայի շառաչուն ապտակով մը զինք ըդգաստութեան հրաւիրելու...: Արդէն այդ ապտակը պատճառ դարձեալ կարծեմ, որ ան տարիներ յետոյ անոր վրէժը լուծելու համար հնարեց Փանթասթիկ պատմութիւնն մը, զիս վարկարեկելով եւ գործի յաջողութիւնը ամբողջութեամբ իրեն վերագրելով, երբ իրականութեան մէջ ինքը տեղեակ անգամ չէր մինչ այդ կատարուող աշխատանքներուն ներքին ծալքերուն, քանի որ՝ նման պարագաներուն միայն ղեկավարն է, որ կը պատրաստէ ու կը դասաւորէ ընդհանուր գործը եւ ես պէտք ալ չունէի իրեն պատմելու ամէն բան, որովհետեւ իրեն նմանները շատ անգամ անպատասխանատու մարդիկ կ'ըլլան, միայն պէտք է զինքը ձեռքը տաս ու «գնա՛, զարկ» ըսես, ուրիշ ոչինչ: Բայց մենք շարունակենք, որ եղելութիւնը ինքնին պարզուի...:

Հռովմ համելուս պէս, առաջին գործս եղաւ երթալ Մ. Վարանդեանը գտնել, պարզել անոր իմ ծրագիրս եւ ուզել իրմէ անունները մի քանի վստահելի ընկերներու, որոնք կարող ըլլան ի պահանջեալ հարկին մեր պաշտպանութիւնը կամ փախուստը ապահովելու Գործի կատարուելին յետոյ: Վարանդեանը զիս ներկայացուց իր քովը աշխատող Ա. Ս. ի եւ բժշկական ուսանող – վերջը Տոքթ. Արզումանեանի:

Մենք սկսանք մեր հետապնդումները: Մեծ եւ պրզտիկ օթէլներու մէջ քանի մը օրեր մնայով անոնց ճաշարաններուն եւ սպասման սրահներուն մէջ գտնուող մարդոց խօսակցութեանց ուշադրութիւն ընելով, եւայլն: ի վերջու, սրճարաններու մէջ թէ մայթերուն վրայ դրուած սեղաններու շուրջ հաւաքուած ու բարձրաձայն թրքերէն խօսողները տուին մեզի մեր փնտռած թելին ծայրը: Այդ

ձեւով կրցանք հասկնալ, որ բացի էնվէր եւ ձեմալ փաշաներէն, մնացեալ բոլոր իթթիհատական պարագլուխները չոռվմ հաւաքուած էին ու իրենց հերթական հանդիպումները եւ ժողովները կ'ունենային մայրաքաղաքէն մօտ երկու ժամ հեռաւորութեան վրայ գտնուող ֆրաստաթի ըսուած գիւղին մէջ, իրենց համար յատկապէս վարձուած տուն հաւաքատեղիի մը մէջ։ Առ այժմ այդքանը ինծի կը բաւէր, որպէսզի ես այլեւս կատարուելիք գործին ընդհանուր փլանը պատրաստէի։ Նախ ըսեմ, որ իմ նպատակն էր բոլորը միասին մաքրել այս անդամ եւ թոյլ չտալ որ կրկնուի Պերլինի սխալը։

Այս գործին համար սակայն պէտք ունէի աւելի յարմար օգնականի մը, ուստի անմիջապէս նամակ գրեցի Վիշապ, պարզելով խնդրին էութիւնը եւ խնդրելով որ ինծի դրկեն Արամը, ազնիւ ու փորձառու տղան, որ ժամանակին հետա էր երր Գանձակի մէջ օդը հանեցի պահականոցը 12 ոստիկաններով։ Ան քաջատեղեակ էր իմ պայթուցիկներու վերաբերեալ մասնագիտութեանս եւ լաւագոյնս գիտէր գործադրել իր պարտականութեան բաժինը։

Նախ, նամակիս կը պատասխանէ Դաւիթիսանեանը, ըսելով թէ՝ «Անոր տեղը ուրիշ տասը գլուխ պանիր ուզէ, իսկոյն կը դրկեմ»։ Յետոյ երր ես կը պնդեմ Արամի մասին, երկրորդ նամակով մը ինծի կ'ըսեն, թէ՝ «Մենք համաձայն չենք քու ծրագրիդ, այդքանը հսկայական աղմուկ կը հանէ», եւայլն։ Կարծես տարբեր ըլլար յարուցուելիք աղմուկը եթէ մէկ հատի փոխարէն 5-6 ջարդարաներ միասին ճամբուին անդի աշխարհ։ . . .

Պատասխանեցի Վերին Մարմինի նամակին, ըսելով թէ՝ «Զերինը պարզապէս վախկոտութեան արդիւնք է։ Այդ աթոռները ձեզի չեն վայելեր. ձգեցէք զանոնք աւելի արժանաւորներուն։ Եթէ ողբացեալ ՌՈՍՏՈՄը ողջ ըլլար հիմա՝ վազելով կուգայ այս գործին մասնակցելու»։

Այդ օրերուն Հոռվմ եկած էր Շահան Նաթալին։ Անոր ալ բացատրեցի իմ ծրագիրը, որ կ. կ. կողմէ վրտանգաւոր նկատուած ու ինծի պէտք եղած օգնականը գըլացուեր էր։ Միեւնոյն ժամանակ յայտնեցի իրեն, թէ ես Հոռվմէն չեմ ուզեր հեռանալ առանց թուրք փաշայ մը մէջտեղէն վերցնելու։ Որով, սկզբնական փլանս մէկո՞ի գնելով, որոշեցի մահափորձը կատարել Մայիս Հալիմ փաշայի վրայ գոնէ, որը թէեւ ցանկին մէջ չկար, սակայն

որպէս վարչապետ ստորագրած էր Հայոց տեղահանութեան որոշումը: Եւ իսկոյն սկսայ քանի մը հաւանական միջոցները ուսումնասիրել եւ այդ ուղղութեամբ գործի բաժին տուի այլեւս Արշաւիրին:

Մինչեւ այստեղ, տեղի ունեցող անցուդարձերուն եւ առնուած որոշումներուն բացարձակապէս անտեղեակ էր Արշաւիր Շիրակեանը, որուն ժամերը գրաւած էր արդէն Հելենան յոյն աղջիկը...: Եւ այս բոլորը լաւ գիտէին Հրովմ գտնուող ընկերները:

Սայիտ Հալիմը մէջտեղէն վերցնելու իմ ծրագրիս յաջողութեան համար կային միայն երեք յարմար պատեհութիւններ. առաջինը հանրային պարտէզին մէջ, ուր ան յաճախ կուգաք պառյոտի իր թիկնապահին հետ: Այդ ուղղութեամբ իմ կատարած քննութիւնները ցոյց տուին, որ հարուածը տալէ ետք փախուստի միակ միջոցը 4-5 մեթր բարձրութիւն ունեցող երկաթեայ վանդակաւոր դռներէն մագլցելով պատին միւս կողմը ցատկին էր: Այդ դռները միշտ գոց կ'ըլլային շարթուայ օրերուն, իսկ բաց պահուող մէկ հատ գուռն ալ կրնար պաշարուիլ աղմուկը երլելուն պէս: Ուստի թելաղբեցի Արշաւիրին որ այդ մագրցումի փորձերը ընէ մի քանի անգամ, սակայն տեսայ որ 4-5 վայրկեանի կորուստ կ'ունենայ այդ ձեւով, ինչ որ բաւական է օձիքը ձեռք տալու համար: Այդ չեղաւ:

Երկրորդ միջոցը անոր հանրակառքով գացած ատենը հարուածելն էր: Սակայն պէտք է շատ ճկունութիւն ունենալ այդ բանին համար: Մանաւանդ անհրաժեշտ էր հանրակառքին արագ քայլած ատենը վար ցատկել ու անհետանալ դեռ «շամաթան» չսկսած: Որով, ատոր փորձն ալ ընելու համար կանչեցի Արշաւիրը եւ իրեն դիտել տուի նախ, թէ հոս հանրակառքերը ձախէն կ'երթան, ուրեմն պէտք է ձախ ոտքի վրայ ցատկել:

— Այդ բանը լաւ գիտեմ. ես Պոլսոյ մէջ հանրակառքի պաշտօնեայ եղած եմ, ըստ մեծիսակիրը:

Բայց ես ալ խօսքերէ աւելի գործին միայն հաւատացող մըն եմ, ուստի ստիպեցի իրեն, որ այդ փորձերն ալ ընէ: Կարճ կապելու համար ըսեմ, որ ատոր մէջ ալ չի յաջողեցաւ. հրաշքով մը ազատեցաւ կառքին անիւներուն տակը ճզմուելէ...:

Կը մնար ուրեմն երրորդ միջոցին դիմել: Ալսինքն, ձիու կառքով իր տունէն դէպի քաղաք գացած կամ վերա-

դարձած ատեն կատարել մահափորձը, իր բնակարանին մօտակայ փողոցի մը քիչ թէ շատ ամայի տեղ մը։ Ասոր համար պէտք էր շատ լաւ տեղեակ ըլլայի թուրքին իւրաքանչիւր շարժումին, անոր ելքի եւ վերադարձի ժամերուն, կառքին մէջ թիկնապահին ո՞ր կողմը նստելուն, քաղաք երթալու համար ո՞ր մէկ փողոցներէն անցնելուն, եւայլն։ Ուստի այդ հետապնդումները կատարելու եւ վերջնական ու ճշգրիտ տեղեկութիւններ ձեռք ձգելու համար պարտականութիւն տուի Արշաւիրին, որ ինձմէ երկու փողոց անդին, ուրիշ դիտարանէ մը ինքն ալ իր կարգին հետեւի անոր շարժումներուն, որպէսզի ունենանք ամբողջական տուեալները։

Օրերը կը սահէին առանց որ կարենայի ամբողջացընել ինծի պէտք եղած տեղեկութիւնները։ Որովհետեւ Արշաւիրին բերածները ընդհանրապէս կը տարբերէին իմ քաղած տուեալներէն։ Այս առթիւ սկսայ հսկել այս անգամ Արշաւիրին վրայ, առանց զգացնելու իրեն։ Անմիջապէս հասկցայ անոր բերած հակասական լուրերուն պատճառը, մարդը երբեք իր պարտականութեանը վրայ չէր։ Իր ժամանակը կ'անցընէր քանի մը փողոց անդին, յոյն աղջկան՝ Հելենայի հետ եւ ո՛չ թէ իրեն տրուած գործով։ Հակառակ իմ կրկնակ թելադրութիւններուս, խրատներուս եւ ազդարարութեանս, Արշաւիր Շիրակեան կարծես չէր կրնար ըմբռնել, թէ մենք իտալիա եկած ենք կարեւոր գործի մը համար եւ ոչ թէ թեթեւ կիներու ետեւէն վագելու, ծախսելու մեր բերած դրամը, որուն պէտք ունէինք տարբեր նպատակի համար։ Ի վերջոյ, համբերութիւնս հատաւ, մանաւանդ երբ վերջին անգամ զինքը նորէն տեսայ յոյն աղջկան հետ սիրաբանած պահուն ու յետոյ եկաւ նոր սուտերով զիս խաբելու։ Այդ վայրկեանին բան մը չըսի իրեն։

Երբ վերջացուցինք մեր ճաշը ու միւս յաճախորդները - երիտասարդ ուսանողներ - սկսան պարզել սրահը եւ ինքն ալ կը պատրաստուէր երթալու, ըսի։

- Արշաւիր, սպասէ, խօսելիք ունիմ։ Եւ իջանք պարտէզ միասին։ Անմիջապէս հարցուցի նորէն - «Արշաւիր ո՞ւր էիր երէկ»։

- Նշանակուած անկիւնը, գործիս գլուխը, ստեց աներեսը։

Ալ չկրցայ համբերել ու շառաչիւն ապտակ մը իջե-

ցուցի երեսին։ Պահանջեցի որ չուտ մը ինծի վերադարձնէ ատրճանակը եւ պատրաստուի անմիջապէս Պոլիս վերադառնալու։ «Քեզի պէս անպատասխանատուի մը չէ կարելի գործ վատահիլ» ըսի։

Ծունկի եկաւ ու սկսաւ աղաչել, որ այդ պատիժը չտամ, ներեմ իրեն։ Երդում պատառ ըրաւ, որ այլեւս պիտի չի թերանայ իր պարտականութեանց մէջ։

— Քանի որ այդպէս է, կը ներեմ քեզի, բայց մէկ պայմանով։ որ՝ վաղն իսկ պէտք է կատարուի ԳՈՐԸՇ։ Այլպէս կը վերադառնաս Պոլիս, ըսի։

Ընդունեց պայմանը։ Ուստի հրաւիրեցի զինք որ ուշադրութեամբ մտիկ ընէ վերջին թելադրութիւններս եւ գործադրէ զանոնք առանց սխալելու։ 5 Դեկտեմբեր 1921։

— Վաղը առտուն պիտի գաս որոշեալ տեղը, առանց հետդ բերելու վերարկուդ եւ գլխարկդ՝ որոնք արգելք կ'ըլլան փախուստիդ։ Միասին պիտի հետեւինք կառքին, մինչեւ որ ան մօտենայ թուրքին ապրած փողոցը եւ դանդաղեցնէ ընթացքը։ Պիտի ցատկես կառքին աջ կողմէ զսպանակին վրայ, զէնքը պիտի պարպես ճիշդ գլխուն եւ վար ցատկես ու վագես գէպի ետեւ՝ իմ գտնուած կողմը, որպէսզի ես ուղղութիւն տամ փախուստիդ եւ արգելք րյամ պատահական հետապնդումներու։ Այժմ գնա պանդոկ եւ կանուխ պառկէ։

Այս վերջնական փլանի մասին տեղեակ ընելէ ետք Հռովմ գտնուող միւս ընկերները, որպէսզի պատրաստ րլան իրենց բաժինը կատարելու ի հարկին, յաջորդ օրը որոշեալ ժամուն գացի Արշաւիրը սպառելու նշանակուած մեր տեղը։ Եկաւ ան, բայց ... ծանր գլխարկը եւ վերակուն հագած։

— Ծօ, ի՞նչ ըրիր, քեզի չպատուիրեցի՞ առանց գըլխարկ-վերարկուի գալը։ Զըսի՞ թէ ոստիկանութեան ձեռքը եթէ իյնան այդ իրերը դիւրաւ քեզ կը ձերբակալեն։

— Հոգ մի ըներ, չեմ նետեր պատասխանեց։

Այլեւս ուրիշ կարգադրութիւն մը ընելու հնարաւորութիւն չկար. արդէն թուրքին կառքը կը մօտենար։ Մենք իրարմէ բաժնուեցանք ու մեր դիրքերը բռնած սպասեցինք, երբ կառքը մեր հաւասարութեան հասաւ, Արշավիրը ոստումով մը զսպանակի վրայ ելաւ, զէնքը պարպեց եւ ... սկսաւ կառքին առջեւէն վազել, փոխանակ գէպի իմ կողմը գալու։ Եւ իրարու ետեւէ վրայէն հանեց ու փո-

դոցը նետեց գլխարկը եւ վերարկուն։ Մինչ այդ Սայիտ Հալիմի թիկնապահնը երբ սթափեցաւ անակնկալէն ու տեսաւ որ զէնքը պարզողը կառքին գացած ուղղութեամբ կը փախչի, իսկոյն հրամայեց կառապանին՝ «Բրէսթօ, Բրէսթօ...» եւ ձին մտրակելով սկսան Արշաւիրի ետեւէն վազել արագութեամբ։ Մօտակայ չէնքի մը աշխատաւորը գետնէն վերցուց գլխարկը եւ ան ալ սկսաւ իր ետեւէն երթալ. իսկ ես ալ վերարկուն վերցուցի, վանդակաւոր պատի մը վրայ «աչքէ հեռու» տեղաւորեցի ու սկսայ իրենց ետեւէն վազել, որպէսզի ի հարկին կարենամ միջամտել ձեւով մը ու դիւրացնեմ Արշաւիրին փախուստը։ Այսպէս իրարու ետեւէն վազելով հասանք նեղ ու ամայի փողոցին մէկ դարձուածքին մօտ, ուր երկու հոգի կ'աշխատէին ինքնաշարժի մը պայթած անիւը փոխիւլ։ Այդ եղաւ Արշաւիրին փրկութիւնը մասամբ, որովհետեւ զինք հետապնդող կառքը չէր կրնար շարունակել ճամբան։ Տեսայ որ մեր տղան արդէն անյայտացաւ ու թուրք թիկնապահն ու իտալացիները կը վիճին առանց իրար հասկնալու, իսկ գըլիսրկը վերցնող բանուորն ալ մէջտեղ չկայ։ Ես ետ դարձայ, հանդարտութեամբ գացի պատին վրայ պահածս վերարկուն առի եւ քայլերս ուղղեցի դէպի սենեակս։ Փողոցը դարձած ատենս դէմս ելան երկու «Գարապիններ», ոստիկաններ որոնք հարցուցին թէ ի՞նչ է պատահեր՝ «Զեմ գիտեր» ըսի, «կարծեմ թէ օթօն եւ կառքը իրարու զարնուեր են»։ Ոստիկանները գացին «արկած»ին կողմը եւ ես ալ անցնող հանրակառքը առնելով հասայ պանդոկս ու վերարկուն պահեցի բանալիի տակ։

Նոյն միջոցին արդէն հաղորդումներ կը տարածուէին։ Ոստիկանութիւնը կ'ըսէր թէ՝ «Խումբ մը անծանօթներ մահափորձի ենթարկած են Սայիտ Հալիմ փաշան եւ ինքնաշարժով մը սահմանէն դուրս ելած են», եւայլն։ Սակայն փողոցը նետուած վերարկուին եւ գլխարկին պարագան մանրամասնութեամբ կուտար։

Քիչ յետոյ, երբ ես գացի նախապէս մեր համաձայնած ժամադրավայրը, գտայ որ Արշաւիրը գոյնը նետած եւ դողալով կը պատմէ Տոքթ. Արզումանեանին, թէ իր տանտիրուհին (Մարիան՝ որուն հետ ինք մտերիմ յարաբերութիւն ունէր) նշմարած է վերարկուին եւ գլխարկին պակասը եւ ոստիկանութեան հաղորդումներէն իմացած ըլլալով այդ բաներուն մասին, այժմ կը կասկածի իրմէ ու

Կը սպառնայ լուր տալ ոստիկանութեան։ Զափազանց մը-  
տահոգուած էր։ Կ'ուզէր որ անմիջապէս երկրէն ելլելու  
ձեւ մը գտնենք։

— Տեսա՞ր հետեւանքը քու անկարգապահութեանդ,  
ըսի։

— Կ'աղաչեմ, մի յիշեցներ այլեւս իմ տիսմարու-  
թիւններս. Հիմա է որ ըմբռնեցի քու համբաւիդ ու արժէ-  
քիդ մեծութիւնը։ Միայն խնդրեմ զիս ազատեցէք, ըստ։

— Հանդարտէ, եթէ պաղարիւնդ պահես՝ ամէն ինչ  
կը կարգադրուի, ըսի։ Հիմա վերադարձիր սենեակդ։  
«Քիչ մը անհանգիստ եմ» ըսէ «բարեկամուհի»իդ ու ան-  
կողին մտիր։ Իսկ վերարկուիդ մասին ալ ըսէ, թէ մաքրե-  
լու տուած ես եւ վաղը պիտի բերեն։ Արգումանեանն այ-  
հանեց իրեն տուաւ հին գլխարկ մը եւ բաժնուեցանք ի-  
րարմէ։

Հետեւեալ օրը վերարկուն հետո տարի ճաշարան եւ  
ուսանողներուն հագուստին քովը կախեցի։ Քիչ յետոյ երր  
Արշաւիրը եկաւ ու մեր ճաշը աւարտեցինք, դուրս ելլելու  
ատեն ըսի իրեն։ Արշաւիր, վերարկուդ հոն կախուած է,  
գնա վերցուր»։ Ուրախութենէն ընելիքն ալ մոռցաւ, վրաս  
վագեց զիս գրկելու, համբուրելու։ Իսկոյն սաստեցի։ «Տր-  
դայ մի ըլլար, ըսի, անխոհեմ շարժում մը կրնայ մեղ  
մատնել։ Բնական երեւցիր»։

Ինքը ամէն գնով կ'ուզէր անմիջապէս Հռովմէն  
փախչիլ։ Բացատրեցի իրեն որ այդ օրերուն անկարելի է  
փորձել սահմաններէն դուրս ելլելը, քանի որ բոլոր քոնթ-  
բոնները խիստ հսկողութեան տակ պէտք է առնուած ըլ-  
լան։ Դժուարաւ կրցայ զինքը համոզել եւ 18 օր եւս պահել  
հոն, մինչեւ որ ոստիկանական հետապնդումները մեղմա-  
ցան։ Ապա, զինքը ճամբայ հանեցի դէպի Վիեննա, որպէս  
զի այնտեղէն յետոյ Արամին միանալով երթան Պերլին,  
ուր ուրիշ ընելիքներ ունէինք։ Սակայն, անպիտանը ճամ-  
բան կը փոխէ եւ փոխանակ Պերլին ուղղուելու, կ'երթայ  
Պոլիս, իր ապագայ կինը տեսնելու։ Եւ հոն Վերին Մար-  
մինին բողոքելու իմ մասին, թէ՝ շատ խիստ վարուեր եմ  
իր հետ, ծեծեր եմ, ու չուզեր այլեւս իմ հետ աշխատիլ։

## ՏՂԱՅԱԿԱՆ ԶՔՄԵՂԱՆՔՆԵՐ

Տարիներ յետոյ, Արշաւիր ինքը կը խոստովանէր,

ինծի ուղղած իր նամակին մէջ թէ՝ «Մեզագրանքը, որ  
արժանի է ուշադրութեան, աղջիկներու վերաբերեալ ակ-  
նարկութիւնդ է, բայց Գրիգոր, ատ ալ շատ մի տեսներ:  
Առ տարիքիս մէջ ըրածս քիչ էր նոյն իսկ . . .»:

ABRAHAM BENJAMIN  
60-01 BLOOR STREET  
TORONTO, ONTARIO, CANADA

Digitized by srujanika@gmail.com

卷之三

## ՏՈՒԺ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆԻ ԽՈՒՍԱՓՈՂԱԿԱՆԸ

«...Այդպիսի հարցերը պէտք է մնան իրենց բիւրեղային մաքրութեան եւ իՄԱՍԻ կԱԽԱՐԴԱԿԱՆ բարձրութեան վրայ...»:

Աւելի լաւ պիտի չըլլա՞ր, Պիւրոն նախընտրէր ձԼՇ-ՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆԸ, քան թէ՝ խմբակցական շահերը:

Արշաւիրի մեկնումէն ետք, ես հաշիւներս կարգադրեցի դրամատան հետ ու անցայ Պերլին տեղեակ ըլլալու համար ցարդ հոն կատարուած աշխատանքներուն։ Եւ հոն առաջին անգամ ըլլալով ես լսեցի Արշաւիրին իմ դէմներկայացուցած գանգատաները։ Նաեւ Արարատեանի դի-

\* \* \*

Dr. Med. Y. M. AGBUZHANAS  
• ISLAND •

BB-<sup>15</sup> 15 Aug. 1957

• ፳፻፲፭ ዓ.ም. ቅዱስ

۳۰۰۰ پا در یک ساعت  
۱۵ کیلومتر می‌رسد

Digitized by Google

տողութիւնը, թէ զիրենք ծաղրեր եմ կ. կ.ի գրած նամակին մէջ: Այդ պարագային ես կրկին չեշտեցի իմ համոզումը այն թէ կ. կ.ի անդամները եթէ վախկոտութեամբ չի մօտենային հարցին ու ինծի պէտք եղած օգնականը զրկէին, վստահաբար մենք Թրանսգաթի թուրք ջարդաբարներուն հաւաքատեղին օդը կը հանէինք, 6-7 փաշաներ մէկ անգամէն մաքրելով: Սակայն հիմա այդպիսի յանդուգն քայլեր առնող ՌՈՒՏՈՒՄը չկայ այլեւս ձեր մէջ...: Ապա, ներկայացուցի դրամական հաշիւներս: Նաւասարդեանին յանձնեցի աւելցած 32 հազար իտալական լիրէթ-

AVO

ները եւ պահանջեցի որ ստորագրեն հաշուեցուցակին ճըշ-  
դութիւնը։ Թէեւ «աւելորդ ձեւակերպութիւն» է ըսին այդ  
բանը, սակայն իմ պնդումի վրայ զայն վաւերացուցին եւ  
ստորագրեցին։ Ատկէ յետոյ գործնական ոչ մէկ պարտա-  
կանութիւն առի վրաս։ Ապրուստս ապահովելու համար մը-  
տայ փեթրոլի գտարան մը, ժամը 2,50 (երկուքուկէս)  
Փրանք շահելով։ Յետոյ, երբ վրայ հասաւ Երկրորդ Աշ-  
խարհամարտը եւ մեր ղեկավարները դարձան ԳԵՐՄԱՆԻ-  
ՖԻԼՆԵՐ, պատրաստուելով Կովկասի վրայ յարձակելու,  
շատ աւելի յստակ դարձաւ ինծի համար ՊիիրՈՅԻ ԱԶ-  
ԳԱՎՆԱՍ դիրքը ու ես հեռացայ այդ ծախուածներէն . . . :



## ՊԻՒՐՈՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹԻՒՆԸ

**Արշաւրի Շիրակեանի** յանցագործութեան համար հաւասար չափով պատասխանատու պէտք է բռնել Ռուբէնն ու Վահան Նաւասարդեանը, որոնք որոշում կուտային հապճեպօրէն, առանց արմատական քննութեան ենթարկելու խնդիրները:

Օրինակ կարելի է վերցնել Ղարաբաղի պաշտպանութեան հարցը: Երբ կ'ուզէին ինծի յանձնել ասոր կաղմակերպումը, զիրենք զգուշացուցի ըսելով, թէ վտանգաւոր ու ծանրակշիռ որոշում կու տային, անհրաժեշտ էր ձեռք առնել բոլոր զգուշութիւնները: Հակազդեցութեանս վրայ փոխանակ զգաստանալու եւ հարցը վերաքննութեան ենթարկելու՝ կը գիմեն Տէլի Ղազարին եւ զինք պատասխանատու կը նշանակեն, եւ 12 մաուզէրիսթներով Արսէն Միքայէլեանը կ'ուղարկեն Ղարաբաղ, ուր, երկու շաբաթ ետք, 12 մաուզէրիստները կը զոհուին, Արսէնը մազապուրծ կ'ազատի: Բայց պատճառ կ'ըլլան 4000 հոգիի ջարդուելուն՝ անմեղ ժողովուրդէն: Այս իրողութիւնը պատմեց Ա. Միքայէլեանը Երբ, 1922-ին, Փարիզէն կ'երթար եգիպտոս: Երեք օր տունս մնացեր էր: Ինք եղաւ հետեւ ցընողը վերի եղելութիւնը պատմելէ ետք.- «Քեզ մտիկ ըլրին, եւ ահա՛ հետեւանքը»:

**Պիտի ուզեմ քիչ մը մանրամասնութեամբ նկարագրել այս ողբերգութիւնը:**

1918-ին Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէն իմ անունիս դրկած էր 4006 տոլարնոց չէք մը՝ յատկացուելու համար իմ զեկավարութեամբ առաջ տարուելիք աշխատանքներու: Ես այդ գումարը ստացայ ճիշդ այն օրերուն, երբ Պատգամաւոր նշանակուած էի ու կը պատրաստուէի Երեւան երթալ Արսէն Միսաքեանի հետ, մասնակցելու

Համար Հ. Յ. Դաշնակցութեան 9-րդ լնդհ. Ժողովին: Ո-րով, քանի որ պարտաւորուած էինք քանի մը օրով բացա-կայիլ Վիշապէն, Ամասունիին թելադրեցի որ այդ գու-մարը տանինք Լիոնէզ Պանքան դնենք երկուքիս անունով, որպէսզի իմ բացակայութեան ինքն ալ կարենայ տրամա-դըրել զայն ի հարկին:

Մենք գացինք Երեւան: Երբ՝ Պատգամաւորական Ժողովը վերջացաւ, Պիւրոյ Կառավարութիւնը վար դրաւ արտասահմանէն եկած քանի մը Պատգամաւորներ, իւրա-քանչիւրին կարողութեան համաձայն պաշտօններ տալով անոնց: Ինծի առաջարկեցին նախ Ուստիկանապետի պաշ-տօնը, զոր մերժեցի, դիտել տալով թէ՝ ես այդ գործէն բան չեմ հասկնար եւ մանաւանդ որ պարտաւոր եմ Վիշապ վերադառնալ ու ընթացք տալ Ամերիկայի Կ. Կ. ի ինծի վստահած ահարեկչական գործերուն: Զուգեցին լսել զիս.

— Մենք՝ Պիւրօ Կառավարութիւնս աւելի կարեւոր գործերու համար յարմար մարդոց պէտքը ունինք հոս: Դուն պէտք է մնաս, ըսին: Եւ անմիջապէս առաջարկեցին, որ ստանձնեմ ՂԱՐԱԲԱՂԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ պատաս-խանատուութիւնը: Թէեւ ես այդ շրջանին ծանօթ էի թա-թարական կորիւներու ժամանակէն, սակայն պէտք է յիշել որ անկէ ասդին անցեր էին 15 տարիներ, համաշխարհային պատերազմը, եւայլն: Ուստի, երեք օր պայմանաժամ ու-ղեցի, կացութիւնը քննելու եւ ըստ այնմ պատասխանելու համար: Բնա՛ւ կողմնակից չեմ եղած հապճեպով որոշում առնելուն: Իմ բովանդակ կեանքիս մէջ հետեւած եմ տասը չափէ, մէկ կտրէի փիլիսոփիայութեան:

Երեք օր յետոյ, պէտք եղած բոլոր քննութիւնները կատարելէ եւ Ղարաբաղի Պատգամաւորներուն ալ կարծի-քը առնելէ ետք, Ժողովին հաղորդեցի իմ եղրակացու-թիւնները, թէ՝

— Շատ անխորհուրդ գործ մըն է ծրագրուածը, ո-րովհետեւ Ղարաբաղի մէջ ոչ զէնք կայ եւ ոչ ալ զէնք բըռ-նող: Եւ որպէսզի ես կարենամ գլուխ հանել ինծի առա-ջարկուած պարտականութիւնը, անհրաժեշտ են, Արսէնէն զատ ուրիշ 50-60 փորձառու մարտիկներ, 2-300 զէնք 300 փամփուշտով ամէն մէկը, 100 քիլօ պայթուցիկ, 5-6 հատ ելեկտրական տինամօներ, թելեր, քապսիւներ, եւայլն:

— Կառավարութիւնը քու պահանջածներէն ոչ մէկը ունի, ըսին:

- Այդ պարագային Զեղի խորհուրդ կու տամ, որ չի ձեռնարկէք նման գործի մը, եթէ ոչ՝ դուք պատճառ կ'ըլլաք այդ ժողովուրդի ջարդուելուն:

Յանկարծ ոտքի ելաւ Ս. Վրացեան եւ պոռաց.- Եթէ չես հնազանդիր Պիւրօ Կառավարութեան որոշումին, մենք քեզ կը վոնտենք Կուսակցութենէն:

- Տեղդ նստէ, ըսի, խելքդ չհասած բաներուն մի խառնուիր: Դուն դեռ մէջտեղ չէիր, հաւանաբար, երբ ես արդէն նման գործեր կը կազմակերպէի:

Եւ գլխարկս առած զուրս ելայ, չափազանց յուղուած եւ մանաւանդ մտահոգուած էի Ղարաբաղի ժողովուրդին գլխուն գալիքով: Անզլիական պարտէզը եկան ու զիս գտան քանի մը վայրկեան ետք Արսէնը եւ Զամալեանը համոզելու համար ըսելով թէ՝

- Դուն ստանձնէ այս պարտականութիւնը եւ ճամբայ ելիր. Պիւրօ Կառավարութիւնը կը խոստանայ քեզ, ետեւէդ զրկել բոլոր ուղածներդ:

Զընդունեցի: Վատահ էի որ խարուսիկ խոստում մըն էր եղածը: Յաջորդ օրը ճամբայ ելայ դէպի Թիֆլիս: Հոն, նորէն ետեւէս եկան Արշակը եւ Արսէնը ու ամէն ինչ ըրին զիս համոզելու համար, բայց իմ փորձառութիւնը ուրիշ բան կը թելադրէր:

- Արսէն ըսի, մի պնդէք: Դուն ալ մի երթար. այդ անհեռատես մարդիկը գաղափար չունին, թէ ի՞նչ գաթաքրովի առջեւ կը դնեն ոչ միայն գացողները, այլ նաեւ պատճառ պիտի ըլլան այնտեղի ժողովուրդին ըստոյդ կոտորման:

Ահա Պիւրօ Կառավարութեան ապիկարութեան մէկ փաստը: Եւ Արշաւիր Շիրակեանի մը միջոցաւ յետագային իմ վրայ թափուող զրպարտութիւններուն ու լուտանքներուն առջեւ լուր մնացողներուն պատճառ-շարժառիթներէն մին:

Նոյն հապճեպ որոշումը տուած են Արշաւիր Շիրակեանին յանձնելով 400 հազար ռուբլի եւ 3 հատ ադամանդ, որոնց արժէքին մասին որոշ բան մը չըսէր Արշաւիր իր յուշերուն մէջ: Արշաւիր պիտի երթար Պաքու, Արամին (Հրաշալի տէռօրիստ, որ վերջերս մահացաւ Հարաւ. Ամերիկայի մէջ) հետ, տէրորի ենթարկելու ինվէրը Թիւրքիստանի մէջ: Սակայն, հոն չհասած, Զարդարաբը կը սպաննուի հայ զինուորի մը կողմէ, ոմանց պնդումով՝

Խորհրդային Ռուսաստանի Կառավարութեան դրդումով՝ Նկատելով որ ինվէր կը ջանար ըմբոստացնել շրջանի թըր-քութիւնը ընդդէմ Խորհրդային նորակազմ Կառավարու-թեան:

Ա. Շիրակեան իրեն տրուածին տէր կը դառնայ: Թուբէնը, Փարիզ վերադարձին, փոխանակ այդ հաշիւր պահանջելու Արշաւիրէն, լուսութիւն կը պահէ այդ մասին: Թող Ա. Շ. ցոյց տայ վաւերաթուղթ մը թէ քննուած է ի-րեն յանձնուած գոհարեղէններուն հաշիւր, այս կամ այն կուսակցական օրկանին կողմէ:

Թիֆլիսի բանտին պատմութիւնը իր կողմէ հնար-ուած սուտ մըն է: Իբր թէ զինք ձերակալած եւ տանջած են վրացական մայրաքաղաքին մէկ բանտին (Մետեխ) մէջ, ձեռքէն առած են դրամն ու գոհարեղէնները, ի վեր-ջոյ զինք ազատ ձգած տկլոր վիճակի մէջ:

Բացայայտ կեղծիք է պնդածը, քանի որ Վիշապի կ. Կոմիտէն դրամ չէր դրկած Պաթում՝ Արշաւիրին: Իմ կողմէ կատարուած քննութիւնները – կ. կ.ի տետրակնե-րը ունեցած եմ տրամադրութեանս տակ – եւ Ամատունին խոստովանութիւնը թէ մեզմէ դրամ ուզող չեղաւ որ մենք դրամ ուղարկէնք Պաթում՝ իբր ճանապարհածախս Արշա-ւիրին ու Արամին, կը հաստատեն որ Արշաւիր դրամ ու-նէր քովը, եւ Պոլիս եկած էր պարզապէս մօտը եղող ոուր-լիները (զոր 400 հնչիւն անգլիականի վերածեր էր) եւ ա-դամանդները ձգելու իր սիրածին քով: Ս. Հալիմի գործէն ետք փոխանակ Պերլին երթալու, վերադարձաւ նշանածին մօտ՝ Պոլիս, եւ անկէ ալ Ամերիկա անցաւ: Երկու տար-ուան մէջ տեղւոյն եւ անոր լեզուին անծանօթ մարդը մի-լիոնէր կը դառնայ: 40-50 հազար արժող տուն կ'ունենայ, 3-4000 արժող ինքնաշարժի կը տիրանայ: Մինչ իր հաշ-ուեցոյցը, իրեն վստահուած գումարներու եւ գոհարեղէններու դիմաց – կը մնայ անծանօթ ու անվաւեր: Կրնայ ժխտել: Թող ցոյց տայ վաւերագիր մը, ինչպէս ես ըրի եւ ստացայ Վ. Նաւասարդեանէն, ինծի վստահուած գումար-ներուն փոխան, իմ վրայ մնացող 30.000 լիրը վերադար-ձընելով կ. կ.ի ներկայացուցիչն:

Ամերիկա այցելութեանս տեսայ իր տունը եւ կառ-քը: Կառաստունին դռները ելեկտրականութեամբ կը բաց-ուէին:

Բնականաբար պատասխանատուն տեղւոյն կեդրոնական կոմիտէն էր, որ փոխանակ հաշիւ ուզելու՝ տարուած էր շարլաքանին հնարած պատմութիւններէն:

Ժամանակին խնդրեցի պատկան Վերին Մարմինէն որ «ՀԱՅՐԵՆԻՔ»ի մէջ մէկ քանի սիւնակներ տրամադրեն ինձի որպէսզի դիմակագերծ ընեմ Ա. Շ.ին առասպելները: Զբարեհաճեցան ընթացք տալ: Գուցէ հաշուեցին որ նման յերիւրանքներ պէտք են ժողովուրդին երեւակայութիւնը յուզելու եւ ։ գրպանը պարպելու համար: Փոխանակ խնդրանքիս գոհացում տալու պատասխանեցին, թէ լաւ կ'ընեմ գրի առնելով յուշերս որոնք կրնային պահուիլ «արխիւի մէջ»: Գրեցի իրենց. «Եթէ Զաւարեանը եւ Ծոստոմը ողջ ըլլային ձեր բոլորին ալ ականջներէն բռնելով դուրս կը նետէին»:

Վերջերս այս մասին պատմեցի կարեւոր անձնաւորութեան մը որ ըսաւ, թէ Արշաւիրի - որ հիմա Կ. Կ.ի անդամ ալ եղած է - յուշագիրքը լաւ սպառում ունի: Ի՞նչ, ի՞նչ գիտնան խեղճ շարքայինները թէ իրենց «Հերոս»ը պարզապէս ձեռնասունն էր Մերձանօֆին, որուն ապտակները միայն զինք զգաստութեան բերին, ստիպեցին որ գիտակցի իր պարտականութեան փոխանակ սայթագելու եւ կանանց ու աղջիկներու ետեւէն վազելու: Ի՞նչ գիտնային որ Արշաւիրը, զինք Պոլիս զրկելու սպառնալիքիս առջեւ, ծնկաչոք խնդրեց որ խնայեմ, ներող ըլլամ իր անբարոյ ընթացքներուն հանդէպ եւ խոստացաւ շարժի պատուէրներուս համաձայն:

Ինչ որ կը գրէ իր յուշերուն մէջ, գրեթէ ամբողջութեամբ սուտ են: Տարեցոյցի մը մէջ մէկը կը գրէր, թէ իբր թէ իմ մասիս լաւ չէր խօսեր Արշաւիրը: Զեմ զարմանար: Մերձանօֆը անշուշտ թէ պիտի չ'կլեր իր նետածները, եւ պիտի զրպարտուէր մեծամիտ երեխային կողմէ:

Երկու կուսակցական դէմքեր ելեր գովք կը հիւսեն Արշաւիրին: Անոնցմէ առաջինը Կ. Սասումին է, որ աւելի լաւ կընէ եթէ մաքրէ նախ իր կեղալը, եւ յետոյ միայն ուրիշը զնահատելու, գովելու պարտականութիւն ստանձնէ: Երկրորդը՝ Ս. Վրացեան, որ ելեր երազային բաներ կը գրէ առանց մօտէն տեղեակ ըլլալու անձին ու անոր գործունէութեան:

Ուրիշին ի նպաստ վկայելէ, այլոց մըոտ երեսները ճերմկցնել փորձելէ առաջ, լաւ պիտի ըլլար որ Սասունին հաշիւ տար իր դէմ եղող ամբաստանութեանց չուրջ: Թող պատասխանէր, թէ ի՞նչ ըրած է Կուսակցութեան կողմէ իրեն տրուած ոսկեդրամները:

Ժամանակին Ռոստոմը, Տոքթ. Պօղոսեանը եւ Մուրար էրզրումի մէջ գոյացուցեր էին ֆոնտ մը: Այս թուրքերը կամ Քիւրտերը, որոնք մէկ հայ կը բերէին Բասէնի սահմանը եւ շրջանի հայ պատասխանատուներուն կը յանձնէին, փոխարէն կը ստանային 1 ոսկի՝ մէկ ոսկի մէկ հայու փոխան:

Դատավարութեան ժամանակ Սասունին չկրցաւ համոզիչ պատասխան մը տալ երբ ըսուեցաւ իրեն, թէ ի՞նչ ըրած է մօտը գտնուող ոսկեդրամները:

Որպէս թէ, խորհելով որ ճամբու վրայ անակնկալի կրնան գալ եւ կողոպտուիլ պատահական թուրքերէ եւ Քիւրտերէ, այդ կարեւոր գումարը թաղած են տեղ մը:

Դատական կազմին մէջ ես ալ կայի: Վայրը ուր որպէս թէ թաղուած էր գումարը, թշնամիներու տիրապետութեան ներքեւ էր: Ուստի կարելի էր մարդ զրկել եւ ստուգել ըսուածին ճիշդ ըլլալը: Այդ խնդիրն ալ այդպէս առկախ մնաց, իսկ տիրահռչակ հերոսը այդ խնդրէն ետք նախարար եղաւ, Փրկութեան Կոմիտէի անդամ Ս. Վրացեանի հետ ... ի վերջոյ քայքայելու համար Հանրապետութիւնը եւ քայքայելով կազմակերպութիւնը իրենց հետ:

Ես որոշեցի իմ յուշերս հրապարակ հանել առանձին միջոցներով, առանց դիմելու Դաշնակցութեան լրագիրներուն, պարզապէս որպէսսպի ճշմարտութիւնը, անսեթեւթ ու անխարդախ վիճակով, փոխանցեմ ամպագայ պատմաբաններուն: Թող իմանան ճշմարտութիւնը Դաշնակցութեան 80 տարուան գործունէութեան գլխաւոր շրջաններուն մասին: Ինչ գրեց եւ խօսեցաւ այս Կուսակցութիւնը, իր ղեկավարները, ազատագրական պայքարի ճամբուն վրայ, ինչ գործեց եւ ուր հասան անոնք շուրջ մէկ դար ետք:

Ուրիշներ հարստութիւն դիզեցին չնորհիւ Կուսակցութեան: Ես տուի ունեցածիս լաւագոյնը՝ կեանք, արիւն, երիտասարդութիւն:

Եկաւ ժամանակ ուր կուսակցական շրջանակը, մըթնոլորտը անշնչելի եղաւ ինծի համար: Հոն, տեղ մնացեր

էր շահամոլ, անձնասէր ու բախտախնդիր մարդոց համար: Հետեւցուցի որ ինծի համար տեղ չէր մնացած այդ մարդոց մէջ:

Դաշնակցութենէն դուրս եկայ խիղճս մաքուր, ճակատս բաց եւ առանց մեղանչած ըլլալու յեղափոխականի կոչումիս, բարոյական սկզբունքներուս:

Սայիտ Հալիմի հաշուեյարդարը եղաւ վերջին գործըս: Ասկէ ետք քաշուեցայ կուսակցութենէն եւ մտայ գործարան մը ապրուստս հոգալու: Ժամական 3 1/2 Փրրանք կը ստանայի: Գործս ծանր էր, ընտանիքի, զանոնք կերակրելու, անոնց ուսումը հոգալու պարտքը կը նեղէր զիս: Տարիներու զոհաբերութենէ ետք երկու չոր ձեռքեր կը մնային ինծի, երբ ուրիշներ...

Որոշեցի ժամագործութիւն սորվիլ: Կարճ ժամանակի մէջ կրցի որոշ վարպետութեան տիրանալ: Իմ կողմանէ որոշ վճարում մըն ալ ըրի: Շնորհիւ կամքիս, համարձակութեանս, կրցի խնայել 5000 Փրանք: Բացի խանութ մը եւ ապրեցայ օրը օրին, առանց բեռ ըլլալու մէկուն, առանց ակնկալելու ոեւէ մէկէն: Այսքանը՝ անձնական կեանքիս չուրջ:



## ԴԺԳՈՉՈՒԹԻՒՆ ՊԻՒՌՈՅԻՆ ԴԵՄ ՃԱԻԱՐԾ ԵՒ ՄԱՐՏԿՈՑԱԿԱՆՆԵՐԸ

Կուսակցութենէն քաշուելէս ետք, Շաւարչ յաճախ կայցելէր զիս, գալով խանութիս: Կը գանգատէր կուսակցութեան վերին մարմիններու գործունէութեան շուրջ: Կը մեղադրէր առանձին ընկերներ որոնք կամայական վերաբերում ունին, մենատիրութիւն կը փորձեն եւ կազմակերպութիւնը անձնական շահերու կը ծառայեցնեն:

Օրէն մէկն ալ եկաւ առաջարկելու որ Մարտկոցական շարժման պարագլուխ դառնամ, գլխաւորեմ Պիւրոյի վնասակար գործունէութեան դէմ սկսած շարժումը: Մերժեցի: Թելադրեցի իրեն.

— Շաւարչ, գնայ տեղդ եւ հանգիստ ըրէ. յայտնէ Ընկերներուդ որ նոյն կերպով շարժին: Այս ձեւով դուք չէք յաջողիք տապալել Պիւրոն, որուն արմատները տարածուած են ամէն կողմ եւ կ'երթան շատ հեռուները: Մանաւանդ պայքարի այդ մեթոսով կարելի չէր սարսել Պիւրոյի մենատէրերը:

Ցիշեցի Կովկասի երիտասարդ Դաշնակցականներու ըմբուտութիւնը, 1907 թուին, նախագծի հարցը, որուն շուրջ փոթորիկ բարձրացաւ եւ որուն գլուխն անցած էր Աթարէկեանը: Սա մեծ պատրաստութիւն ունեցող, քանի մը բարձրագյն վկայականներու տէր բժիշկ էր, միաժամանակ՝ փաստաբան, ընկերաբան եւ քիմիագէտ: Շատ անգամ Վարանդեանն ու Խաժակը կը վարանէին իրեն հետ վիճաբանութեան մտնելու: Այս մարդն անգամ չկրցաւ գլուխ ելլել, հակառակ որ բոլոր երիտասարդ ու մտաւորական զանգուածը իրեն միացած էր:

Եւ հետեւցուցի.

- Դուք եւ քեզ նման հազար հատ Շաւարչ ու Նաթալի չէք կրնար յաջողիլ:

Անգամի մը համար զիս մտիկ ըրաւ ու չմիացաւ ընդդիմադիր շարժումին որ, կանխաւ գիտէի, թէ պիտի չկրնար դրական արդիւնքի հասնիլ:

Մարտկոցականները զինք դաւաճան կոչեցին: Շատ չանցած իրենք ալ վտարուեցան կուսակցութենէն: Շաւարչը վրիպեցաւ այդ մահացու հարուածէն: Շատ գոհ մնաց: Իր մէջ կը խօսէր, վերջապէս, պատեհապաշտր:

Մտերմիկ զրոյցի մը ընթացքին ըսաւ.

- Մեզէ միայն երեք հոգի յաջողեցան դիրք չինել արտասահմանի մէջ:

Կ'ակնարկէր, նաեւ, իրեն:

- Անշուշտ չնորհիւ Դաշնակցութեան դրօչ պարզել-նուդ եւ գայն շահագործելուդ - վրայ տուի:

Ցնցուեցաւ, խորապէս ազդուեցաւ, բայց չպատասխանեց:

### «ՊԱՐԱԳԼՈՒԽ» ՇԱՒԱՐՇԸ ԿՐՅԱԿ «ԴԻՐՔ ՇԻՆԵԼ»

Շաւարչին երկրորդ անկումը սկսաւ այն օրէն, երբ «ՅԱՌԱՋ» թերթը հրատարակեց իրը իր սեփականութիւնը եւ շահագործելով Դաշնակցութիւնը:

Հնկերներ, զանազան առիթներով, աշխատեցան որ «ՅԱՌԱՋ» Դաշնակցութեան սեփականութիւնը դառնայ: Անկարելի եղաւ: Վասնդի մեր տղաքը վճռակամութիւն չունէին: Շաւարչն ալ քիչ ճարպիկ չէր, մանաւանդ որ իր ետին կանգնած կը մնար թունաւոր օձը՝ Սոսին՝ իր կինը, որ բացարձակապէս հակադաշնակցական էր: Թէեւ, առ երես, կը գովիէր կազմակերպութիւնը, անշուշտ միշտ աչքի առաջ ունենալով իր եւ ամուսնոյն անձնական շահերը:

Եղած եմ իրենց տունը եւ ականջալուր այր-կին վէճերուն, որոնք սաստիկ կըլլային երբեմն: Սոսին հակակուսակցական տեսակէտ կը պաշտպանէր: Շաւարչ կը ձեւացնէր որ համակարծիք չէ կնոջ ըսածներուն: Սակայն, յաջորդ օր, ժողովի ընթացքին կը կրկնէր կնոջը արտառոց մտքերը, բայց այնպիսի ճկունութեամբ, որ կարենայ դիմափոխ ըլլալ յաջորդ վայրկեանին:

Շնորհիւ բազում էնթրիկներուն, Շաւարչ կրցաւ իրեն սեփականութիւնը պահել «ՅԱԽԱԶ»ը, որ Դաշնակցութիւնը շահագործելու միջոց կը մնայ մինչեւ այսօր:

Օրին մէկը ըստ ինձի.

- Իբր աշխատակից բերել պիտի տամ Կարօ Ղազարուեանը: Ի՞նչ կ'ըսես:

- Շատ աղէկ կընես, շատ ընդունակ տղայ է, մանաւանդ լաւ հռետոր, կուսակցական կազմակերպչական մարզի մէջ ալ կրնայ օգտակար ըլլալ - քաջալերեցի զինք:

Իրապէս ալ Կարոն հրաւիրուեցաւ: Եկաւ երկու ամիս ետք: Կարճ ժամանակին ցոյց տուաւ իր ընդունակութիւնը եւ արդարացուց ինքզինք: Շաւարչի բացակայութեան ինք խմբագրեց թերթը, համով-հոտով խմբագրականներ գրեց: Աշխատակցեցաւ նաեւ ուրիշ հանդէսներու: Ինքզինք դրսեւորեց նաեւ լաւ բանախօս:

Քիչ ժամանակ ետք բերել տուաւ կինն ու տղան, վստահ ըլլալով որ Շաւարչին տուած գործը տեւական է եւ ապահով: Սակայն իր հաշիւները չարդարացան, որուն համար ինք մեղք չունէր բնականաբար:

Արդարեւ, հազիւ մատի վրայ համրուող շաբաթներ անցեր էին, երբ Կարոն եկաւ մօտս չափազանց յուղուած: Գանգատեցաւ որ Շաւարչի վերաբերումը, որ սկիզբը բարեկամական եւ մտերմական էր, հիմա դարձած է ժխտական: Առիթ չի փախցներ իր հետ վիճելու կամ զինք նախատելու:

Ցաջորդ օր եկաւ Շաւարչը, որ իր հերթին դանդատեցաւ Կարոյին դէմ ըսելով, որ շատ շոայլ է, 4-5 ձեռք հագուստ կարել տալու ելած է:

Պատասխանեցի իրեն, թէ իր ինչ գործն է զրադիլ Կարոյին կարել տալ ուզած հագուստներով: Մարդը ազատ է իր ունեցածը, շահածը ծախսելու: Ինք իր պարտաւորութիւնները ունի, Կարոն՝ իրը, եւ այնքան ատեն որ թերացած չէ իր պարտականութեանց մէջ, ենթակային անձնական կարգադրութիւններուն համար ուրիշը մտահոգուելու պէտք չունի, ոչ ալ պէտք է թոյլատրէ ինքզինքին նման միջամտութիւն:

Այսպէս թելադրեցի Շաւարչին, սակայն լաւ գիտնալով, որ «շան գլուխը ուրիշ տեղ» թաղուած էր: Նախանձի ու եսամոլութեան կիրքը սկսեր էր կրծել Շաւարչի հոգին: Երկար չտեւեց վիճակը: Կարոն արձակուեցաւ

պաշտօնէն։ Շաւարչին «Հաց»ը իր ձեռքէն առնող չկար այլեւս...։ Թերթը դարձած էր հաւատարիմ «կթան կով»։ Այն աշխատակիցները, որ նիւթական գոնէ դոյզն փարձատըրութիւն կը պահանջէին - տեսնելով մամուլին ֆինանսական լաւ վիճակը -, չուտով լուսութեան կը դատապարտուէին։ Թերթը կը փակուէր իրենց առջեւ։ Աւելին՝ ըլլալով անկարողի եւ ապիկարի... տիտղոսով կը փարձատըրուէին։ Իսկ անոնք որ Հլու-Հնազանդ կ'աշխատակցէին առանց նուազագոյն նիւթական ակնկալութեան, կը յարդուէին վերին աստիճան, գլխու վրայ տեղ ունէին։



## ՊԻՒՐՈՆ Բ. ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՕՐԵՐՈՒՆ

Վրայ հասաւ Բ. Աշխարհամարտը: 1939-ի սեմին  
էինք: Ամէն ոք ջղագրգիռ վիճակի մատնուած էր: Նոյն  
հոգեվիճակը համակեր էր մեզ:

Գերմանները սկսան իրենց յարձակումներուն: Ամե-  
նուրեք կը տանէին դիւրին յաղթանակներ: Ճակատ չէր  
մնար իրենց առջեւ: Թոյլ ընդդիմութիւններէ ետք կը  
ճեղքուէին ճակատները:

Հերթը եկաւ ֆրանսային, որ միւսներուն բախտին  
արժանացաւ, մանաւանդ գերմանասէր ղեկավարներուն եւ  
տիրող մեծամտութեան պատճառով:

Գերմանները շրջանցեր էին նշանաւոր եւ անառիկ  
նկատուած «Մաժինօ»ն: Սակայն դեռ չէին գրաւած ֆր-  
րանսայի սիրտը՝ Փարիզը:

Այդ օրերուն հրաւէր մը կը ստանամ Շաւարչէն:  
Ուրիշներու կարգին զիս ալ իր բնակարանը կանչած է: Զր-  
մերժեցի, եղայ իր տունը, որոշուած ժամուն:

Օրուան նիւթը ընդհանուր պատերազմն էր, բնա-  
կանաբար: Ամէն ոք իր կարծիքը կը յայտնէր պատերազմի  
բախտին շուրջ: Կոռուող կողմերուն ներկայացուցած ուժե-  
րուն բաղդատականը կ'ընէին, եւ ամէն ոք կը պնդէր իր  
համոզումին վրայ: Ասոնց կարգին էր Շաւարչը որ, ինչ-  
պէս կը թոյլատրէր իր ... բանգէտի եւ ուազմավարի տա-  
ղանդը՝ սկսաւ մեծ-մեծ նետել: Ըստ իրեն, Նացիները  
պիտի կրնային երեք ամիսէն աւարտել պատերազմը,  
ծունկ չոքել տալով, ուրիշներու կարգին, Անգլիոյ եւ Մ.  
Նահանգներուն:

Զկրցի համբերել:

- Շատ առաջ կերթաս, - ըսի - , Գերմանիան այս  
պատերազմը չի կրնար շահիլ: Ունեցածները ժամանակա-

**ւոր յաջողութիւններ են:**

– Դուն ի՞նչ գիտես – դիմադարձեց Շաւարշը, արհամարհուս –, ես օրական 50 թերթ կը կարդամ, քուկին կարդացած երկու լրագրին դիմաց։ Հիմա ալ ելեր անհեթեթ ու երեւակայական բաններ կը խօսիս։

Հակազդեցութիւնը այնքան կոպիտ ու վիրաւորական էր, որ ներկայ հիւրերն անգամ զարմացան եւ իրենց վրդովումը յայտնեցին երկարատեւ լուռթեամբ։

Բայց ես չէի կրնար աւելի համբերել։ Վերարկուս առի եւ դուրս նետուեցայ տունէն, անգամ մըն ալ հոն ոտք չդնելու պայմանով։

### ՓԱՐԻԶԻ ԱՆԿՈՒՄԵՆ ԵՏՔ...

Եկան Գերմանացինները։ Ֆրանսական բոլոր թերթերուն կարգին փակուեցաւ նաեւ «ՅԱՆԱՋ»ը։ Սակայն տեսնելու էր Շաւարշի յուզումն ու գրեթէ խելակորոյս վիճակը։ Գլուխը հազար քարի կը զարնէր թերթը վերահրատարակելու միջոց մը կարենալ գտնելու համար։ Թարաբերութիւններս թէեւ լաւ չէին իր հետ, բայց յանուն հաւաքականութեան մը շահերու ապահովութեան ընդդիմացայ «ամէն գնով» թերթ հրատարակելու իր պատրաստակամութեան։ Պնդեցի որ պէտք չէ հրատարակուի թերթը այդ պայմաններու մէջ։ Ատիկա թշնամիին հետ մեղսակցութիւն կրնայ թարգմանուիլ։ Բայց եկուր խօսք հասկցուր Շաւարշին եթէ կրնաս։ Մարդը իր շահով մտահոգ էր միայն։ Զինք կը հետաքրքրէր նիւթական վաստակը։ Ելաւ մինչեւ Մարսէյ գնաց որ հոն վերահրատարակէ թերթը, կրկին ձախողեցաւ։ Ահագին դրամ հանգանակերէ վիճակը տկար ու անյուսալի ներկայացնելով։ Լացեր է մինչեւ իսկ խօսակիցներուն գութը շարժելու եւ հաւատացնելու որ ծախսելիք դրամ չունի։ Զնայած որ իր հասցէին քոլիններ կը հասնէին որպէսզի կարիքաւոր ընկերներու տրուի։ Կը սեփականացնէր զանոնք, իսկապէս դըժբախտ վիճակի մէջ եղողներու վիճակին ծանրութիւնը կրկնապատկելով։

Գրաւման ժամանակ հրատարակուած ֆրանսական թերթերու տնօրէնները ձերբակալուեցան գերմանական

պարտութենէն յետոյ: Երկար ժամանակ մնացին բանտերու մէջ: Ոմանք նոյն իսկ ծանր պատիժներ կրեցին, իրենց կեանքը տուին մահասիւնին առջեւ, յաճախ գաղափարի մը հաւատքով:

Պարզ էր, որ Շաւարչ պիտի գտնուէր այս . . . բախտաւորներու շարքին: Թերթ հրատարակելու պարագային պիտի ստիպուէր Նացիներու քաղաքականութիւնը արդարացնել ու պաշտպանել, անոնց նախասիրած երգը նուագել, ինչ որ պիտի չհանդուրժուեր գերմանական պարտութենէն ետք, եւ իբր գրաւման իշխանութեանց հետ գործակցող պիտի ստանար վարձատրութեան իր բաժինը . . . :

Շաւարչ հաւանաբար ուշ անդրադարձաւ թէ ինչ-պիտի աղիտարեր անխոհեմութենէ մը ետ կեցուցած եմ զինք, անխոհեմութիւն՝ որ կրնար իր կեանքը արժել:

Օրին մէկը Շաւարչ երկտող մը զրկած էր ինծի ինդրելով որ իրենց տունը երթամ:

- Գրիգոր, եկուր մեր տունը, քու սիրած Ընտանիքիդ (Դաշնակցութեան) մասին ըսելիքներ ունիմ, որոնց-մէ դռւն ալ կ'օգտուիս - կը թախանձէր գրեթէ:

Նամակին պատասխանեցի ըսելով, որ կը մերժէի իրենց տունը գալ: Եթէ շատ կարեւոր էր ըսելիքը՝ զայն իմանալու համար տեղ չէր պակսեր: Առաջարկեցի վայր մը եւ աւելցուցի, որ համաձայն գտնուելու պարագային կրնայ հոն տեսնել զիս որոշուած պահուն:

Բնական է, թանգարանին հասցէն տուած էի: Բայց Շաւարչ հոն չեկաւ: Հասկցաւ, թէ կրկին հարուած մը պիտի իջնէ գլխուն: Իր մէջ կը կրէր բնազդը անհաճոյ վիճակներէ կարենալ իսուսափելու: Ըսենք՝ տեսակ մը հոտառութիւն, որ զինք վերապահ կը դարձնէր անստոյգին ու կասկածելիին առջեւ: Բնածին ընդունակութիւն մը որ իր նկարագրին հիմնաքարը դարձեր էր . . . :

## ՈՐՔԱՆ ԳԵՐՄԱՆԱՍԵՐ, ԱՅՆՔԱՆ ՍՈՎԵՏԱՏԵԱՑ

**Շաւարչ ինքզինք կը կարծէր ամենագէտ, եւ չէր քաշուեր իր մեծամտութիւնը հրապարակաւ, խմբագրականներով յայտնելու:** Զինք լսողն ու կարդացողը այն տրպաւորութիւնը կ'ունենային, որ միակ հայագէտ-քաղաքագէտին դիմաց կը գտնուին: Որքան մեծամիտ, այդքան արհամարհու էր ուրիշին հանդէպ: Ինքն, իր աչքին, աշխարհի լաւագոյն բարեմասնութիւններով, ձիրքերով օժտուած մարդն էր, որուն պէտք է յարգէին ու հետեւէին բոլորը: Իսկական հոգեկան հիւանդ մը:

**Տարօրինակ խորշանք ու այլամերժութիւն ունէր իրեն հաճելի չթուող ամէն բանի հանդէպ: Նկարագրի այս գիծին կարելի էր հանդիպիլ որքան անձնական, նոյնքան հաւաքական կեանքի մէջ:**

**Շատ բնորոշ էր բռնած յարձակողական, գրեթէ ատելավառ թշնամութիւն հանդէպ Հայաստանի ներկայ կառավարութեան:**

**Բոլոր խմբագրականները ուղղուած էին ներկայ Հայ Պետականութեան, նպատակ ունենալով անոր վարկարեկումն ու Սփիւռքի հայութեան մէջ կասկած, վերապահութիւն ու խորշանք առաջացնելը:**

**Ի՞նչ կարելի է կարդալ անոնց մէջ - տարին, կոտորեցին, ջարդեցին, եւ անդուլ ու անհամար հայհոյանք: Բայց որո՞ւ գէմ եւ ո՞ւր հասնելու համար: Ո՞վ կը հաւատայ փշածներուդ երբ իրականութիւնը մէջտեղն է եւ նը-կարագրուածին հակառակը կը փաստէ:**

**Պէտք է հարցնել Շաւարչին, թէ ի՞նչ շահեցաւ տաս-**

նամեակներ ամբողջ հայհոյելով Հայաստանի դէմ, զըրպարտելով անոր ներկայ կառավարութիւնը:

Մարդը կը կարծէր որ իր թուղթէ նիզակներով պետութիւն պիտի տապալէ, վարչակարգ պիտի փոխէ:

Տոն Քիշօթը չէր ուզեր տեսնել անդամ որ այսօրուան Եւրոպան, Ամերիկան ալ մէջը ըլլալով կը դոդան պատերազմելու: Միշտ զգոյշ են Խ. Միութեան հետ որուն մէկ անդամն է Խ. Հայաստանը: Մեծ տէրութիւններ իսկ համոզուած են որ զէնքով եւ սպառնալիքով բան չի փոխուիր: Բայց Շաւարշը կրնար, ի վիճակի էր ըսելու իր թերթով բան մը, որուն առջեւ իրենց անզօրութիւնը կ'ընդունին հզօր տէրութիւնները իրենց բանակներով:

Ընթերցողներն ալ զզուեցան կարդալէ աքսորի ու գնդակահարութեան մասին: Ո՞վ չի գիտեր որ պատմական յեղաշրջումներու, յեղափոխութիւններու, ընկերային հակամարտութիւններու պարագային արիւնահեղութիւնները անխուսափելի կ'ըլլան: Բոլոր յեղափոխական պատմութեանց մէջ կը նշուին հարիւր հազարաւոր զոհեր երկու պայքարող կողմերէն: Այն որ զօրաւոր է, գործին գլուխը կ'անցնի: Պարտուողը կը սկսի դիմացինը վար զարնել, նսեմացնելու աշխատիլ, վերագրել եղած ու չեղած բաներ...

Իրականութիւնը այն է, որ Շաւարշին Պասմա Խալիք խմբագրականներով ներկայացուածին հակառակն է Հայաստանի պատկերը: Իր խելապատիկէն նետուած մըտքերով պիտի տուածնորդուի ժողովուրդը: Եկուր զուսպ, շրջահայեց ու պարկեցու ըլլալ սորվեցուր իմաստունին, եթէ կընաս:

Սա գրած խմբագրականներն ալ գոնէ բանի մը նրանէին կամ, առնուազն, զիրար չհակասէին: Գոնէ բաւարարուէր գրելով բաներու մասին, որոնց քիչ թէ շատ խելքը կը հասնի: Այսօր բան մը կ'ըսէ, շաբաթ մը ետք գրուածով նախկինը կը հերքէ:

Յատկանշական էր 20 Մարտ 1953-ի խմբագրականը, որուն մէջ ելեր է քաղաքագիտութեան մասին դաստալու, եւ առանց խպնելու «Դեռ կը խօսինք այս նիւթին մասին» ըսելով ալ դիմացինները կը կշտամքէ: Քիչ է ուսել՝ Ծօ, դուն ո՛վ, քաղաքագիտութեան մասին խօսողը ո՛վ: Կատարեալ բոպիկ մարդ: Քաղաքականութեան մասին խօսելու, անոր շուրջ պատգամ ու պատուէր տալու

Համար մարդիկ համալսարան կ'աւարտեն, սթած կ'անցը—  
նեն։ Մինչդեռ այս համբակ, նորընծան ինքզինքին կը  
թոյլատրէ աշխարհի քաղաքագէտներուն դաս տալու, ա-  
նոնց սխալները բռնելու, երբեմն ալ … Գրիգորը յիշելով  
իր մաղձը անոր վրայ թափելու։

Ինքզինքին այսքան ազատութիւններ ու հեղինակու-  
թիւն թոյլատրող կամ տուող մարդէն անշուշտ կարելի է  
յուսալ աժան գնահատութիւն եւ անկոչ դատաւորի դեր։  
Բայց միշտ ուրիշները դատելու եւ … սխալը երեսնուն  
զարնելով զանոնք մեղադրելու համար։



## ՈՐՈՇՔ ԵՒ ԻՆՉՈՒ ՊԱՌԱԿՏԵՑԻՆ Հ.Մ.Ը.Մ.Ը

Թիչ մըն ալ պիտի խօսիմ իր քաջագործութեանց մէկ ուրիշ մարզին շուրջ:

Հայ Մարմնամարզական Ընդհ. Միութեան շրջանակէն ներս, պառակտողական ու բարոյալքիչ աշխատանքով նշանաւոր դարձածներէն մէկը հանդիսացաւ Շաւարշը:

Ինք եւ իր նմանները կտոր-կտոր ըրին այս գեղեցիկ Միութիւնը: Որովհետեւ այդպէս ուզած եւ հրահանդած էր Դաշնակցութեան Վերին Մարմինը, որուն նպատակն էր շահագործել այս կազմակերպութիւնը:

Բուն պառակտումին հեղինակը Ռուբէնը եղաւ, իսկ քանդումի ծրագրին գործադրողները՝ քանի մը ապիկարներ:

Կը խոստովանիմ, որ ուշ արթնցայ: Երբ Ռուբէնը ինձմէ խնդրեց Հ. Մ. Ը. Ը. ի անցեալի մասին տոքիւմաններ, ծրագիր-կանոնագիր, իմ անձնական յուշերուս ամփոփումը՝ նկարներով եւ Մարմնամարզաթերթին հաւաքածոն ալ միասին վերցնելով տարի եւ իրեն յանձնեցի: Սակայն, ժամանակ մը ետք, մանաւանդ երբ անդրադարձայ շարունակուող նենգութեան, պահանջեցի որ վերադաբնեն ինչ որ յանձնած էի իրենց: Մարդիկ մերժեցին: Անկարելի եղաւ ետ առնելը: Պնդումիս վրայ ըսաւ.- «Եգիպտոս զրկեցի: Կը գրեմ որ վերադարձնեն»: Այդպէս ալ գնաց ու ... կորսուեցաւ:

Հ. Մ. Ը. Մ. ԳՈՐԾԻՔ Խ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ

Ինչո՞ւ պառակտուեցաւ Հ. Մ. Ը. Մ. Ը.:

AVO

Գիտէի, որ Դաշնակցութիւնը պէտք ունէր երիտասարդական զանգուածային ուժերու, որպէսզի իր հետեւորզներուն եւ կոյր ենթարկուղներուն թիւը աւելցնէ: Ուրիշ մտահգութիւն էր կազմակերպութեան գոյութեան պահպանումը, որ հնարաւոր կ'ըլլար նոր, բարձրացող սերունդներու ներգրաւումով: Սակայն քանդել կազմակերպութիւն մը շինելու համար միւսը՝ այս մէկին խելք հասցնելը անհնարին բան էր:

Բայց Պիւրոյի մարդիկը յաջողեցան գործել այս ոճիրը, վասնզի մամուլ եւ դրամ ունէին: Կաշառեցին շատ մը երիտասարդներ: Գուրգէն Մեծատուրեանը ձեռք անցուցին որ դաւաճանեց սկառատական սկզբունքին, գործիք դառնալով Դաշնակցութեան Վերին Մարմնին ձեռքը: Եւ ահա, այստեղէն սկսաւ բաժանումները: Պատճառ բռնեցին Հ. Մ. Լ. Մ. ի 1918-էն ի վեր ընդունած նշանաբանը – Ա.ԶԳ ԵԽ ՀԱՅԹՐԵՆԻՔ:

Այն օրերուն երբ Հ. Մ. Լ. Մ. վերոյիշեալ նշանաբանը ընդունեց, Հայաստանի մէջ ոչ Պոլշեւիզմ կար եւ ոչ ալ Դաշնակցական Կառավարութիւն: Կազմակերպութիւնը հիմնողներուն մէջ միայն ես Դաշնակցական էի: Ես ալ առաջին առթիւ յայտարարեցի վարչական ժողովին մէջ, թէ ըլլալով հանդերձ Դաշնակցութիւն կուսակցութեան անդամ, բոլորովին հակառակ եմ այս գործին (Հ. Մ. Լ. Մ. ի կազմութեան) կուսակցական գոյն տրուելուն, վասընզի մարմնակրթութիւնը միջազգային է, ինչպէս գեղարուեստը:

Բոլորն ալ համաձայն էին ինձ հետ:

Հ. Մ. Լ. Մ. ին համար վարչաձեւը նշանակութիւն չունէր: Ընդունած էր նշանաբան մը, կը մնար հաւատարիմ անոր առանց հաշուի առնելու ներկայ Հայաստանի մէջ տիրող վարչաձեւը, Պետութեան դրօշին գոյնը: Նպատակը ծառայել էր Ազգին ու Հայրենիքին, որոնք կը մընային, մնացած են եւ, անկասկած, պիտի գոյատեւեն ինչ ալ ըլլան հայրենի պետութեան վարչաձեւն ու դրօշին գոյնը: Կարեւորը այս անխուսափելիութիւնն էր:

Վարչաձեւերն ու դրօչները կրնան փոխուիլ, բայց կը մնայ Ազգը, Հայրենիքը:

Դաշնակցութեան Վերին Մարմնը եւ իր գործակատարները ուրացան այս սկզբունքը, եւ ստիպեցին որ Հ. Մ. Լ. Մ. եւս լքէ իր նշանաբանը, դաւաճանէ անոր: Ակը-

ALO

սաւ գօրաւոր պլայքար մը: Պիւրոն իր տրամադրութեան ներքեւ ունեցած բոլոր միջոցներով սկսաւ ճնշել ու հալածել Հ. Մ. Ա. Մ. ի այն ղեկավարներուն եւ անդամներուն, որոնք կը մերժէին կուսակցական շապիկ հագնիլ: Պայքարը բուռն եղաւ: Հաւատարիմ Հ. Մ. Ա. Մ. ականները չընկրկեցան սպառնալիքներու առջեւ: Եւ սակայն, միջոցներու անբաւարարութիւնը, մեծ գումարներու չգոյութիւնը պատճառ եղաւ, որ ֆրանսայի 2500 Հ. Մ. Ա. Մ. ական մարզիկները անդամալուծուին եւ տակաւ տարտըդնուին:

Եղածը խսկական պլօքիւս էր Հ. Մ. Ա. Մ. ի դէմ: Նոյն խսկ վճարովի ծանուցումները չէին հրատարակեր Դաշնակցութեան մամուլին մէջ, Շաւարչը կը գտնուէր Հ. Մ. Ա. Մ. ի դէմ խաչակրութեան սկսած Պիւրոյին կողքին: Մինչդեռ, ատեն մը առաջ, եկած էր խնդրելու որ ազատամիտ Դաշնակցականներու կողմէ նոյն Պիւրոյին դէմ սկսուած պայքարը գլխաւորեմ:

Կը յիշեմ որ օրին մէկը, Շաւարչին գացի եւ առաջարկեցի որ թերթին մէջ լոյս ընծայէ Հ. Մ. Ա. Մ. ի մէկ յայտարարութիւնը՝ վճարումի փոխան: Խուսափեցաւ, եւ կրկին անգամ իր թուլամորթութիւնը հաստատել տալով ըստւ.՝ «Գացէք Տիրուիին տեսէք»: Ան ալ, իր հերթին, կոնակ դարձուցած է ըսելով իրեն ներկայացողներուն.՝ «Գացէք Շաւարշը տեսէք»: Ի վերջոյ Ս. Տէր Թովմասեանը միջնորդի դէր կը ստանձնէ երթեւեկելով մէկուն եւ միւսին միշեւ: Բայց մենք գործ ունէինք Պիւրոյի լարախաղացներուն հետ: Ի վերջոյ չտպուեցաւ յայտարարութիւնը եւ ձեռնարկն ալ սապոթաժի ենթարկուեցաւ:

Օր մըն ալ երեք էնսթէքթորներ եկան խանութս եւ զիս հարցաքննեցին: Առաջին հարցումը եղաւ, թէ ո՞ր գաղափարախօսութեան կը համակրիմ, ո՞ր կազմակերպութեան յարած եմ: Պարզապէս պատասխանեցի, որ ատեն մը Դաշնակցութեան շարքերուն մէջ կը գտնուէի, բայց հիմա հեռացած եմ ու անձնական գործերով կը զբաղիմ:

Յետոյ իմացայ որ մօտս գալէ առաջ գացած են տանտիրոջս ու դրացիներուն մօտ եւ հարցուցած ինքնութեանս, ընկերային համոզումներուս եւ քաղաքական նախասիրութիւններուս շուրջ: Բոլորն ալ նպաստաւոր խօսած են իմ մասին:

Զիս հարցապնդումի ենթարկելու պահուն ըսին.

- Մեր ստացած տեղեկութեանց համաձայն, դուք  
իիկլ.-յի նախագահն էք:

- Այո, զիս նախագահ նշանակեցին հաշուի առնելով  
հիմնադիրի հանգամանքս - պատասխանեցի, աւելցնելով  
- բայց գործոն դեր չունիմ հիմա:

- Իսկ ի՞նչ է ձեր աշխարհահայեացքը, ո՞ր գաղա-  
փարին կը հետեւիք:

- Իմ միակ զբաղումը եւ նախասիրութիւնը ըս-  
տուն է:

- Ձեր նախագահութեան տակ եղող կազմակերպու-  
թիւնն ալ լոկ մարզակա՞ն է:

- Այո, կրնաք հաստատել:

- Հապա ինչո՞ւ կ'ըսեն, թէ պոլչեւիկեան ուղղու-  
թիւն ունի ձեր մարզական միութիւնը:

Ակամայ ժամանեցայ: Հ. Մ. Ը. պատկերացուցի  
պոլչեւիկեան տարագի ներքեւ: Ինչե՞ր ընելու ատակ չէին  
այս զրպարտիչները: Բայց մարդիկ պատասխանիս կը ըս-  
պասէին: Շուտով յարեցի, վերջ տալով տարուած վիճա-  
կիս.

- Այդ բոլորը սուտ բաներ են, յարգելի պարոններ: Անպարկեցտ մարդիկ ձեզ մոլորեցուցած են զրպարտու-  
թիւններ հիւսելով մեր Միութեան չուրդ:

- Եթէ պոլչեւիկեան ուղղութիւն չունի Ձեր կազմա-  
կերպութիւնը, ուրեմն ինչո՞ւ Հայաստան այցելութեան  
պիտի երթայիք - վրայ տուաւ մարդը, որ պէտք եղածէն  
աւելի լուսաբանուած կ'երեւէր...

- Կարծեմ թէ իր Մայր Հայրենիքը այցելելը յան-  
ցանք չէ, ոչ ալ Պոլչեւիկի յատուկ բան մըն է - պատաս-  
խանեցի, քիչ մը հեգնանք ու սառնութիւն խառնելով բա-  
ռերուս: Իրականութիւն է որ ծրագրած էինք 40 սկառտ-  
ներով եւ իմ զեկավարութեամբ Հայաստան այցելել իրը  
զբոսաշրջիկներու խումբ: Առիթէն օգտուելով կրնայինք  
մրցումներ ալ ունենալ:

- Ինչո՞ւ չգացիք:

- Ինձի համար ալ մութ է այդ պարագան: Հակա-  
ռակ մինչեւ իսկ անցագիր հանած ըլլալնուս, վերջին պա-  
հուն արգելքներ դրուեցան: Իբր թէ մեկնումի հրամանը  
ուշացեր է, կարելի չէ ժամանակին հասնիլ շոգենաւին:

Զեմ գիտեր թէ խօսակիցներս ինչ հետեւցուցին  
մտքերնուն մէջ: Ի՞նչ հասկցան այս պատմութենէն: Բայց

ինծի համար յստակ էր հարուածին ուրկէ գալը։ Թող այդ ապուշներն ալ գիտնային, երանի՛ թէ, որ Գրիգորը ատանկ բաներէ չազդուիր։

Ասոր վրայ զզուանքս կրկնապատկուեցաւ այդ վատասերած մարդոց եւ զիրենք հովանաւորողներուն հանդէպ, որոնք ի՞նչ ստոր միջոցներու կը դիմէին հայ մարդուն ճշմարիտ հայրենասիրութիւնը, ազգասիրութիւնը խաթարելու։ Շրթներս մրմնջեցին ինքնաբերաբար։

- Վայ քեզի Դաշնակցութիւն, ինչպիսի մարդոց ձեռքը մնացիր . . . :

## «ՊՈԼԵՏԵԻՒԿ» ՃԵՄԱՐՏԱԽՕՍՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Մէկ կողմէ Հ. Մ. Բ. Մ. քայքայելու, զինք իր հիմնական առաքելութենէն չեղեցնելու աղտոտ պայքարին, իսկ միւս կողմէ Կազմակերպութիւնը շահագործելու ստոր մարզանքներու ետին՝ միշտ կը յայտնուէր Շաւարչին լարախաղացի կերպարը։ Տեղ մը Հ. Մ. Բ. ին եւ անոր զեկավարութեան դէմ նիզակ ճօճողներուն - հոգ չէ թէ երկրորդական - շարքին կը գտնուէր։ Ուրիշ տեղ մըն ալ Կազմակերպութեան ջերմ պաշտպան, անոր վերելքին մտահոգ, մարմնամարզի կարեւորութիւնը փրովականտող երկերեսանիներու երգչախումբին մէջ կը յայտնուէր։

Իր դիմաշընութիւններէն միայն մէկը վկայաբերելու համար առնենք «ՅԱ.ՌԱ.Զ»ի 7 Մայիս 1953 թուակիր համարը, որուն խմբագրականը յատկացուած է Հ. Մ. Բ. Մ. ին եւ անոր մէկ ձեռնարկի քաջալերման։ Բառած է անոր մէջ, թէ Փարիզի Հայ Մարմնամարզական Ընդհ. Միութիւնը ժապաւինեալ տոմար կը հանէ հանգանակութիւն ընելու... եւ հարց կուտայ հանրութեան, թէ որո՞ւ սրտին չի խօսիր մարզական շարժումը ... հակառակ զանազան թիւրիմացութեանց եւ պառակտումներու առկայութեան։

Ուշադրութիւն՝ վերջին տողերուն։ Այս մեծ ու գեղեցիկ Կազմակերպութիւնը պառակտելի ու քայքայումի տանելի ետք, ելեր կոկորդիլոսի (կեղծ) արցունք կը թափէ, իբր թէ իր կեղտոտ մատը իսառնուած չըլլար այդ «ցաւալի պառակտումներ»ուն մէջ։

Ամօթ այսքան խարեբայութեան համար։ Ասոր պատճառով ալ, եւ չկընալով հանդուրժել կեղծիքը, օրին մէկը գրեցի իրեն ազդարարելով, որ խելքը գլուխը ժողվէ, եւ չստիպէ ինծի որ դարակս բանամ եւ հանեմ իր կեղտոտ ու վատահամբաւ կենցաղին պատմութիւնը կազմող թըղ-

թածրարը: Հսի նաեւ, թէ պիտի չյանձնեմ իրեն յուշերուս ձեռագիրները: Ինձմէ կը խնդրէր զանոնք խոստանալով որ թերթին մէջ պիտի հրատարակէ յուշերս: Նպատակը ուրիշ էր, այս մէկը գիտէի: Նախ կ'ուղէր իմանալ իր մասին գրածներս, որոշ մասեր ջնջել եթէ կարելի է, նաեւ՝ շահագործել իմ յուշագրութիւնը:

Երբ լսեց որ տրամադիր էի բանալու յուշերուս տետրակը՝ դող ելաւ, մէջտեղը իրար անցուց, ովահանջեց կեդրոնական կոմիտէին որ զիս հաշուետութեան կանչէ: Գացի Մոնմորանսի, Շաւարչը եւ հինգ կ. կ. ի անդամներ նստած էին:

**Չսպասեցի որ առաջին խօսքը իրենք ըսեն:**

– Ի՞նչ է Զեր ուղածը, ինչո՞ւ ուղած էք զիս տեսնել  
– Հարց տուի չոր եղանակով:

Անմիջապէս չպատասխանեցին: Տիրեց լուռթիւն: Առաջին ընդմիջողը եղաւ Շաւարչը, որ կէս աղաչական շեշտով դիմեց ինձի:

– Ինչո՞ւ ետեւէս ինկած զիս կը հետապնդես: Հանգիստ ձգէ զիս որ գործս չարունակեմ: Արդէն ահագին դժուարութեան մատնուած եմ: Հազիւ երեք ամիս եւս կրնամ թերթին հրատարակութիւնը ապահովել:

Պատասխանեցի, թէ իր անձը զիս չէր հետաքրքրեր այնքան ատեն որ ան աղերո չունէր կուսակցութեան հետ: Խնդիրը կը տարբերի երբ իր պատճառով ամբողջ կազմակերպութիւնը կը տուժէ: Իսկ կուսակցութեան արժանապատութեան պաշտպանութիւնը իւրաքանչիւր գաղափարանուէր մարդու պարտականութիւնն է:

Յետոյ երեսին տուի ըսելով, որ իր լալկանութիւնը քող է միայն ծածկելու իր շահատակութիւնները:

– Շատ տեսած եմ նման երեք ամիսներ: Դուն քեզ եւ չուրջիններդ կրնաս համոզել այդպիսի դերասանութեամբ – պատասխանեցի իրեն:

Կրկին ես եղայ ճշմարտախօսը: Անցան երեք անգամ 30 ամիսներ, եւ թերթը շարունակեց լոյս տեսնել:

Այդ օր երբ տեսաւ, որ շատ վճռական էի եւ իր համոզիչ խօսքերը դոյզն տպաւորութիւն չէին ձգեր վրաս, ապաւինեցաւ իր գլխաւոր գէնքին որ զրպարտութիւնն էր:

– Պէտք է ըրածդ լաւ գիտնաս: Յիսուն տարուան աշխատանքիդ վրայէն դիծ կը քաշես – ըսաւ, փորձելով

զգացումներս գրգռել։ Բայց կ'ուզէր որ Դաշնակցութեան դաւաճանած եմ եւ դարձած Պոլշեւիկ։

Զիղերս թունդ ելան։ Բայց զսպեցի ինքզինքս, պատասխանեցի որքան կարելի է արհամարհուտ։

- Ես շատ լաւ գիտեմ ըրածս։ Քու եւ նմաններուդ խառնուելիք բանը չէ։ Զեզի հաշիւ տալու պարտաւոր չեմ, եւ շատ լաւ գիտեմ թէ ո՞վ իր սկզբունքներուն հաւատարիմ է եւ ո՞վ ուրացած։

Դէմս նստողներուն մէջ էր Ս. Տէր Թովմասեանը, որ օրն ի բուն մունետիկի դեր կը կատարէր «Մերձանօֆը Պոլշեւիկ է» ըսելով, խորհելով որ զիս անարդած կ'ըլլայ նման պիտակ մը փակցնելով ճակտիս։

Մարդիկ այնքան վատասերած էին, որ ատակ էին ամէն ստորնութեան իրենց մեղքը ծածկելու եւ պարկեշտու հայրենասէր մարդիկը վարկաբեկել փորձելու համար։ Զիս եւ նմաններս «Պոլշեւիկ» կը կոչէին, որովհետեւ իրենց խաչագողութիւնը երեւան կը հանէինք, քանի կը պնդէինք որ Դաշնակցութիւնը չի կրնար Հայրենիքին ու Ազգին դէմ ըլլալ անձնական ու հատուածական նախասիրութիւններու համար։

Բայց իմ դէմ կայիին կազմակերպութիւն եւ անուն շահագործող մարդիկ, անոնցմով ապրող մարդիկ։ Ինչպէս սա Տէր Թովմասեանը, որ անձնական կեանքի մէջ բրնաւ յաջողութիւն չգտած մարդ է, որ պարզապէս բեռ եղած է Կուսակցութեան վրայ, իր կենսամիջոցը ապահոված է անդույ խնկարկելով Նաւասարդեանն ու Վրացեանը։ Այսպիսիններն եղան իմ մասին ծուռնալ տուողը ընդհանուր ժողովին։ «Գրիգորը Պոլշեւիկ դարձեր է»։ Ինչո՞ւ։ Որովհետեւ ամէն բանէ վեր կը դասէր հայութեան եւ անոր հայրենիքին շահերը, եւ չի թողուր որ գաղափարական հակառակութեան պատրուակի ներքեւ մարդիկ ինքզինքնին պարարտացնեն։

Այս ողորմելինները կը յուսային որ նման տարածայնութիւններով Գրիգորը բարոյապէս կը մեռցնեն։ Մինչդեռ իրենց մէջ դեռ չէր ծնած անձը որ կրնար արատաւորել Մերձանօֆի ճակատը։ Անոր մարմնին վրայ կային սպինները 30 վէրքերու, որոնք կը կազմէին վկայութիւնը իր անժխտելի արժանիքներուն, հայրենիքին եւ ժողովուրդին մատուցած ծառայութեանց։ Այդ երեսուն վէրքերը երեսուն չքանչաններ էին, ստացուած պարտականու-

թեան ճամբուն վրայ: Իսկ իրե՞նք ... կակուղ բարձի յեղափոխականներ եղած էին միայն: Կուսակցութեան վրայ բեռ ըլլալէ, զայն շահագործելէ բացի ուրիշ ի՞նչ ըրած էին:

Այդ վէրքերը, անոնց սպիները կը կազմեն իմ վարձատրութիւնը, իմ հպարտութիւնը եւ պատիւը: Անոնք իմ փառքն են, շահուած ոչ թէ կեղծ ու պատիր միջոցներով, ուրացումով եւ մորթապաշտութեամբ, ուրիշներուն վաստակը մաքսանենգելով, այլ պարտքի ու պարտականութեան ճակատին վրայ, Հայրենիքին ու Ազգին փրկութեան վերելքին համար մղուած անձնազոհ պայքարին մէջ:



## ԴԱՅՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԻՒՐՈՅԻ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՆԱՑԻ ԳԵՐՄԱՆԻՈՑ ՀԵՏ

Դաշնակցութեան Պիւրոյին հետ իմ ունեցած սկզբ-  
բունքային գլխաւոր տարակարծութիւններէս մէկը եղաւ  
կուսակցութեան գործակցութիւնը նացի Գերմանիոյ հետ,  
Բ. Աշխարհամարտի օրերուն:

Զէի կրնար հաշտուիլ այն մտքի հետ որ կազմակեր-  
պութիւնը, իր սեփական հատուածական նպատակներէն  
տարուած, կրնայ ու պէտք է գործակցի ցեղային խտրու-  
թիւնը եւ աշխարհակալութիւնը նշանաբան դարձուցած  
այս տէրութեան հետ:

Պիւրոն իր դիրքորոշումը կը փորձէր արդարացնել  
Հայաստանի վարչաձեւին տիրանալու միտումով: Խ. Մի-  
ութիւնը կրնար պարտուիլ եւ այս պարագային, Դաշնակ-  
ցական զինեալ խորհրդանշական ոյժի մը գոյութիւնը նա-  
ցի Բանակին մէջ, կրնար պարտեալ ժողովուրդի մը են-  
թակայութենէն ու վնասներէն փրկել Հայաստանի ժողո-  
վուրդը:

Պիւրոյի մարդիկը կը պնդէին նաեւ, թէ Հիթիեր  
խոստացած է Հայաստանը Դաշնակցութեան յանձնել Խ.  
Միութեան դէմ յաղթանակ տանելու պարագային:

**ԱՆԿԱՐԵԼԻ ՈՒ ՍԻՆ ԵՐԱԶՆԵՐ  
ՈՐՈՆՔ ԲՆԱԻ ՊԻՏԻ ԶԻՐԱԿԱՆԱՑԻՆ**

Ինձի համար անհեթեթ ու երազային բաներ էին ա-  
սոնք: Նախ հաւատք չունէի որ Գերմանիա յաղթական

դուրս կու գայ: Երկրորդ՝ չէի հաւատար որ Նացիզմը կրնայ ազատութիւն ու խաղաղութիւն բերել Հայաստանին:

«Նոր կարգ»ի ներկայացուցիչներուն ցեղատեացութիւնն ու բռնատիրական փիլիսոփայութիւնը չէին միայն զիս տարակոյսի մատնողը: Նացի Գերմանիոյ դաշնակից դարձեր էր Թուրքիան, որ իմ աչքին կը պատկերացնէր Գայզերական Գերմանիոյ ու Իթթիհասական Թուրքիոյ միջեւ կնքուած զինակցութիւնը, որուն աւանդութեան շարունակութիւնն էր այս մէկը: Գոնէ այսպէս կը նկատէի ես: Որով, Գերմանական յաղթանակի մը պարագային, Հայաստանի բախտով մտահոգուելու պէտք չունէին ուրիշները: Թուրքիան կը բաւէր, որուն Բանակները տարիներ ամբղջ շարուած մնացին Արաքսի արեւմտեան եզերքին վրայ, անհամբեր սպասելով Աթալինկրատի անկումին: Դիտեցին արեւելեան ափը եւ յուսացին, եւ քանի յուսացին այնքան այրեցան Երեւանին կարօտէն:

Բարեբախտաբար գիմադրեց Աթալինկրատը: Գերմանիան պարտուեցաւ: Իմ համոզումս էր, որ անով վերապրեցաւ նաեւ Հայութիւնը: Այլապէս Թուրքերը, իրենց հին բարեկամ Գերմաններուն հետ, Մեծ Եղեռնէն ճողոպրած հայութեան վերջին կտորին հաշիւը մաքրած պիտի ըլլային այսօր:

Եւ ըսել, թէ Դաշնակցութիւնը նպաստած պիտի ըլլար այս բնաջնջումին, իր կամաւորներուն հրացանները Խորհրդային Բանակին մէջ կոռուզ հայ դինուորներուն կուրքքին ուղղելով:

Դաշնակցութեան կողմէ Նացիներուն հետ յարաբերութիւն հաստատողները եղան Դրօն եւ Արարատեանը:

Փարիզի Կեղրոնական կոմիտէի ժողովներուն մէջ ես գլխովին Հակառակեցայ այս ծրագրին որ աղէտալի էր պարզապէս: Վնասակար՝ մեր ժողովուրդին, իսկ աններելի՝ կուսակցութեան համար:

Կեղրոնական կոմիտէի մնացեալ անդամները կողմնակից գտնուեցան, Հակառակ այն պնդումիս, թէ Գերմանացիները պիտի չկրնան շահիլ այս պատերազմը եւ թէ իրենց ժամանակաւոր յաջողութիւնները պէտք չէ տպաւորեն մեզ:

## ՆԱՄԱԿ ՄԸ ՈՐ ԱՌԵՂԾՈՒԱՆ ՄՆԱՑ...

Կ. Կ.ի նիստերը կ'անցնէին փոթորկալի: Օրին մէկն ալ ցոյց տուին նամակ մը որ, իր թէ, Եղիպառոսէն ստացած են եւ որուն մէջ Պիւրոն, որպէս թէ, իր հաւանութիւնը կու տայ Դրոյի եւ Արարատեանի ծրագրին:

Հարցուցի, թէ որո՞ւն միջոցաւ ստացուած է այս նամակը: Տուին մարդու մը անունը զոր առաջին անգամ կը լսէի: Նայեցայ նամակին որ ո՛չ կնիք եւ ո՛չ ալ ստորագրութիւն կը կրէր: Հետեւցուցի որ կրնար կեղծ ըլլալ, զուցէ եւ ճիշդ էր իմ ենթագրութիւնս: Ամէն պարագային հաշուի չառնուեցաւ իմ օրինական բողոքս: Մեծամասնութիւնը հաւանութիւն տուաւ գործակցութեան թէզին եւ որշումը վաւերացուեցաւ:

### ... ՃԱՇԿԵՐՈՅԹ Ի ՊԱՏԻՒ ՆԱՑԻ ՍՊԱՆԵՐՈՒԻՆ

Ասոր վրայ Կ. Կ.ը ճաշկերոյթ մը սարքեց ի պատիւ նացի սպաներուն: Քսանէն-երեսուն հազար Փրանք ծախսուեցաւ: Բողոքեցի նաեւ իրենց այս քայլին ու կրկնապէս վնասակար մսխումներուն դէմ: Կրկին անգամ իմ դէմ ցցուած գտայ մեծամասնութիւնը Կ. Կ.ի անդամներուն: Մերժեցի մասնակիլ մեր եւ Փրանսացի ժողովուրդի գահիներուն ի պատիւ սարքուած ճաշկերոյթին, պնդելով, որ սխալ է նման հրապարակային ցոյցեր կատարել: Բայց մարդիկ չունեցան տարրական հեռատեսութիւնը:

Հոս եւս Շաւարչը իր պատեհապաշտի եւ անսկրդրունքայնականի դէմքը ցոյց տուաւ: Ընդդիմացայ «ՅԱ-ԲԱՁ»ի վերահրատարակման: Խնք գնաց մինչեւ Պերլին, որպէսզի համոզէ Գիւլիանդանեանը եւ տիրանայ «ՀԱՅ-ԲԵՆԻՔ»ին: Հոս ալ ճախողեցաւ: Յետոյ վազեց մինչեւ Մարսէյ: Նոր յուսախաբութիւն: Անմիտը չէր տրամարաներ, թէ նացի իշխանութեան ներքեւ հրատարակուած թերթ մը պարտաւոր պիտի ըլլար, կամայ-ակամայ, Գերմանացիներուն տիրտիւկը փչել: Թէեւ իր մէջ կար գերմանօֆիլ գիծ մը: Շատ ուշ անդրադարձաւ գործելիք անխոհեմութեան: Նամակ գրեց ինձի նախ չնորհակալութիւն

յայտնելու եւ ապա ներողութիւն խնդրելու համար։ Նա-  
մակը կը պահեմ մինչեւ այսօր։ Բայց աւելորդ է հրատա-  
րակութեան տալ։ Եղածն ալ բաւարար է ճշմարտութիւնը  
կարենալ հաստատելու համաց։

Տարօրինակ եւ ցաւալի է միայն այն, թէ ինչպէս,  
մարդիկ, որոնք հետեւողական սկզբունքայնականի հովեր  
կառնէին, պայմաններու եւ կացութեան փոփոխութեան  
հետ դիրք ու համոզում կը փոխէին։ Մէկ շապիկը հանե-  
լով միւսը կը հագնէին։

## ԹԻՒՐՈՅԻՆ ՍԽԱԼ ԿԵՑՈՒԱԾՔԸ Խ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԴԵՊ

Դաշնակցութեան Պիւրոյին կեցուածքը, որ թշնամական է Խ. Հայաստանի հանդէպ, կը գտնեմ սխալ։ Վ. բատահ եմ որ ինձի պէս կը խորհին շատ Դաշնակցականներ, Հ. Մ. Լ. Մ. ի անդամներ որոնք կը պահեն իսկական յեղափոխականի ու գաղափարական մարդու գիտակցութիւնը որ չէ թունաւորուած փառատենչութեամբ ու անձնական կեանքով։

Կարելի է ունենալ գաղափարական նախասիրութիւններ, բայց անկէ առաջ պէտք է ունենալ հայրենիքին ապահովութեան մատահոգութիւնը, ազգին սէրը եւ անոր վերելքին տենչը, որ անկեղծութեան ու հոգեկան մաքրութեան ապացոյց մըն է։

Հայրենիքին մէջ տիրող վարչաձեւը փոխելու հոգէն առաջ Դաշնակցականը, ինչպէս ոեւէ հայ, որ կողմի ու գոյնի ալ պատկանի, ունի ուրիշ, աւելի հիմնական եւ կարեւոր ընելիք – Հայը պահել հայ, արդարօրէն լուծել տալ իր հողային դատը, իրականացնել հայութեան միութիւնը պատմական Հայաստանի մէջ։

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԸ  
ՊԻԾԻ ԶՈՒԴՈՒՆԵՒՆ

Նոյն իսկ կարելի է օրինապահ ընդդիմագերի կեցուածք ունենալ Խ. Հայաստանի հանդէպ, բայց քաղաքական եւ ընկերային պատճառներով հայրենիքին դոյութիւ-

նը ուրանալ, անոր դէմ պայքարիլ, հայութիւնը բաժան-  
բաժան ընել եւ հիւծել - ասիկա մեծ յանցագործութիւն  
է: Դաշնակցութեան հիմնադիրները պիտի չընդունէին ի-  
րենց կերտած Կուսակցութեան այսօրուան ուղղութիւնը,  
որ սկիզբի Ծրագրին ու նպատակներուն հակառակ պատ-  
կերը կը ներկայացնէ: Այնքան որ անձանաչելի դարձած է:  
Հայրենիքն ու Ազգը սրբութիւն էին իրենց համար: Անոնց  
սիրոյն չէ՞ր որ մահուան կամաւոր դարձած էին:

Դեռ տասնամեակներ առաջ դիմած եմ Պիւրոյին եւ  
պահանջած, որ Կուսակցութիւնը համաձայնութեան գայ  
Հայաստանի Կառավարութեան հետ եւ լքէ իր ներկայի  
ժխտական, նոյն իսկ թշնամական կեցուածքը, որ զինք կը  
հակադրէ նոյն իսկ սեփական սկզբունքներուն՝ Ազգի ու  
Հայրենիքի հանդէպ:

Մինչեւ այսօր պատասխանի կը սպասեմ: Կը թուի  
որ նոյն իսկ հաշուի չէ առնուած դիմում: Այնքան որ ան-  
կարեւոր եւ անընդունելի գտած են առաջարկս: Անձս ալ  
կ'երեւի արծէք չէր ներկայացներ իրենց համար: Իրենց  
յարգելիք մարդը իրենք գիտէին:

Վերջին հաշուով ինչ է Դաշնակցութեան ձգտումը  
եթէ ոչ Ազգին ու Հայրենիքին ապահովութիւնն ու յաւեր-  
ժացումը: Երբ այս երկու նպատակները գրեթէ իրականա-  
ցած են այսօր, պէ՞տք է Կուսակցութիւնը, քաղաքական  
կամ իշխանութիւնը խլելու նպատակով, դէմ գայ ներկայ  
իրականութեան եւ հակադրուի բաներու որոնց առաջին  
ցանկացողը եւ պաշտպանը եղած է: Կուսակցական շահե-  
րէ տարուած պէ՞տք է վտանգէ մեր ժողովուրդը եւ անոր  
գոյութիւնը Հայրենիքին մէջ, երբեմն գերազանցելով  
բուն թշնամին Հայաստանը վատարանելու մէջ:

Տակաւին 1922-ին, Հ. Յ. Եղիպատոսի մէջ գու-  
մարուած Ընդհ. Ժողովին, հարց ներկայացուցի Կուսակ-  
ցութեան կապերը Հայաստանի իշխանութեանց հետ բնա-  
կան դարձնելու մասին: Պահանջեցի որ վերաքննուի ան-  
վերապահօրէն կազմակերպութեան քաղաքականութիւնը,  
քանի որ մեր ընթացքը վնասակար էր նախ սփիւռքահա-  
յութեան եւ յետոյ Կուսակցութեան համար:

## ՔԱՆԻ ՈՐ ՏԱՊԱԼՈՒՄԸ ԱՄԻՍՆԵՐՈՒ ՀԱՐՑ ԷՐ...

Ընդդիմացան առաջարկիս: Մեծամասնութիւնը կողմնակից եղած է որ պայքարը շարունակուի, նոյն իսկ աւելի բուռն թափով: Մարդիկ ամիսներու հարց կը նկատէին խորհրդային ռէժիմի տապալումը:

Ուրիշ առիթներով ալ դիմեցի Պիւրոյին եւ ըսի, թէ Պոլշեւիկեան հասցէին հայհոյանք թափելէ զատ ուրիշ բան ըրած չունիք: Ի՞նչ կը շահիք: Աւելի լաւ կ'ըլլայ որ համաձայնութեան եզր մը գտնելու մասին խորհրդիք: Մարդիկ չպատասխանեցին: Հաւանաբար չկարդացին ալ նամակներս: Կը ցաւիմ որ անոնց քօփիները պահած չեմ քովը: Ահա պատճառներէն մէկը որ մեկուսանամ եւ գործ չունենամ ապիկարներուն հետ:

Իմ տեսակէտս այն է, որ Դաշնակցութիւնը պէտք է լեզու գտնէ հիմակուան Հայաստանի կառավարութեան հետ: Նախ որովհետեւ մեր հայրենիքին աշխարհագրական դիրքը այդպէս ընել կը պահանջէ: Մեր ժողովուրդը պէտք է յարմարի իր Պետութեան ներկայ վարչածեւին եւ ապրի խաղաղ ու ամփոփ, քանի որ շրջապատուած է ազգային եւ ցեղային այնպիսի հաւաքականութիւններէ ուրոնք նպաստաւոր կեցուածք չունին իրեն հանդէպ:

**Օրինակը մէջտեղն է:**

Պէտք է լնդունիլ որ ներկայ վարչածեւին չնորհիւ կրցանք փրկել միլիոնաւոր ժողովուրդ որ այսօր կ'ապրի Հայաստանի մէջ, ապահով պայմաններով: Դարձեալ շրջնորհիւ ներկայ սիստեմին կրցանք վերականգնիլ իբր Աղդ եւ Պետութիւն եւ հասնիլ բարգաւաճութեան այն աստիճան, որ սկսանք արտածել մեր արտադրութիւնները:

Պէտք է լեզու գտնել՝ նաեւ անոր համար որ ներկայ ընկերային ու քաղաքական դրութիւնը կայուն եւ ամուր է: Ժամանակը ցոյց տուաւ որ յարմարագոյնն է մեր գործութեան ամրացումին եւ վերելքին համար:

Ես համոզուած եմ որ այսօրուան դրութիւնը երբեք չփլիր, եւ օրէ օր պիտի յառաջդիմէ:

Մեր ժողովուրդը այլեւս չի կրնար վստահիլ Եւրոպայի իր երէկի կարծեցեալ բարեկամներուն վրայ: Իսկ յոյս կապել Մեւրի դաշնագրին՝ բացարձակապէս սիսալ է: Ապացոյցը մէջտեղն է: Դաշնագիրը ստորագրեցին եւ պահ

մը ետք ստորնաբար լիզեցին, ուրացան իրենց ստորագրութիւնը։ Անոնք ստորագրեցին՝ վստահ ըլլալով որ պիտի չգործադրեն ինչ որ կը խոստանային եւ ընդունիլ կը ձեւանային։ Այդ տէրութիւններուն համար կար ոռւսական վտանգը որ կը ստիպէր իրենց դաշնակցիլ թուրքիոյ հետ, զայն զօրացնել։ Ամէն ազգ նախ իր շահերով մտահոգ կ'ըլլայ, յետոյ միայն կը մտածէ բարեկամին, դրացին կամ ուրիշին մասին։

Պիւրոյի աթոռներուն բազմած մարդիկը սիսալ ընթացքի մէջ են։ Իրենց մտքէն ու հոգիէն անցածը իրականութեան տեղ կ'առնեն։ Զեն ուզեր կեանքի իրականութիւնը տեսնել իրապաշտութեան աչքով եւ հաստատել, որ կեանքին անիւը իրենց ցանկութեան եւ յուսացածին հակառակ ուղղութեամբ կ'երթայ։ Վա՛յ անոր որ ետ կը մընայ կամ կը փորձէ կանգնիլ անոր առաջընթացին դէմ։



## ...ԴԵՊԻ ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ

Կեանքը դէպի Ընկերվարութիւն կ'երթայ: Այդ է օրուան պահանջը: Հեռու չէ այն օրը երբ Ընկերվարութիւնը ամբողջութեամբ պիտի տիրէ աշխարհին: Այդ Ընկերվարութիւնը ներկայիս Ռուսիոյ կամ Հայաստանի մէջ գոյութիւն ունեցածէն կրնայ տարբեր ըլլալ, ուրիշ ձեւ ունենալ, բայց մէկ բան անխուսափելի է որ Ընկերվարութիւնը պիտի յաղթանակէ եւ տիրէ աշխարհին:

Դաշնակցութեան Պիւրոն երազներէ տարուած է: Սակայն արդէն այսօր կը զգայ իր անզօրութիւնը: Կը տեսնէ որ կեանքը ուզածին հակառակ ուղղութեամբ կ'երթայ: Ուշ կամ կանուխ ստիպուած պիտի ըլլայ հաշտուելու կեանքի իրականութեան հետ, զիջելու, որովհետեւ որեւէ յենակէտ չունի, եւ պարտաւոր է զիջելու ի շահ հայութեան:

Իմ մաղթանքը, կրնամ ըսել կտակս է նաեւ որ Հ. Մ. Լ. Մ. ը վերադառնայ իր ազգային եւ հայրենասիրական բուն ուղղութեան որ իրը եղած էր հիմնադրութեան առաջին օրէն:

Հ. Մ. Լ. Մ. ականները պէտք չէ որ քաղաքական եւ գաղափարական աշխատանքը իրենց համար նպատակ դարձնեն: Սփոռու միջազգային շարժում ըլլալով պիտք չէ գաղափարական, ցեղային եւ նոյն իսկ ազգային խտիր ու զանազանութիւն ճանչնայ:

Եղած եմ Հ. Մ. Լ. Մ. ի հիմնադիրներէն: Կազմակերպութեան հիմը դնելու պահուն, հակառակ կուսակցական գործօն անդամ ըլլալու, պնդեցի ժողովին մէջ որ մարդական այս կազմակերպութեան անդամները կուսակցական տարագ պէտք չէ հագնին, կամ ենթակայ ըլլան այս կամ այն կուսակցութեան: Պահանջս, իրը պայման,

ընդունեցին բոլոր ժողովականները։ Սակայն չուտով սկրսաւ անջատողական շարժում մը։ Պէյրութի Մասնաճիւղը, մանաւանդ անոր ղեկավարները, ենթարկուեցան Դաշնակցութեան հրահանգին, մերժեցին Հ. Մ. Լ. Մ.ի Կեդրոնին որոշումները, չենթարկուեցան մեր հեղինակութեան եւ հրահանգներուն, եւ մինչեւ այսօր ալ կը մնան Դաշնակցութեան ազդեցութեան տակ, ուղղակիօրէն տեղական Կեդրոնական Կոմիտէին միջոցաւ ղեկավարուիլ։

Դաշնակցութեան Պիւրոն երազներէ տարուած է։ առաջարկներէս մէկը եղաւ Եղեռնի Յիսնամեակի եւ ուրիշ համազգային տարողութիւն ունեցող տարեղարձներու միացեալ տօնակատարութիւնը Հայաստանի եւ Սփիւռքի մէջ։ Անձամբ դիմեցին Հրանդ Սամուէլին որ Յիսնամեակը միատեղ նշուի ե'ւ Երեւանի ե'ւ Սփիւռքի գլխաւոր Կեդրոններուն մէջ։ Պատասխանը Ժխտական եղաւ։ Որպէս թէ Երեւանի Կառավարութիւնը մերժած է իրենց կողմէ ներկայացուած առաջարկութիւնը։

## ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԻՆ ՊԱՏՃԱՌԸ

Վերջին տասնամեակի ընթացքին չեմ դադրած քըննադատելէ Պիւրոյին ազգային-եկեղեցական քաղաքականութիւնը։ Թէեւ ես եկեղեցական գործերով բնաւ չեմ րդբաղած, սակայն այդ պիտի չնշանակէ հետաքրքրութիւն չունենալ տագնապի մը հանդէպ որ մեր ազգային ընդհանուր կեանքը ինդրոյ առարկայ կ'ընէ։

Ներկայ ազգային-եկեղեցական տագնապը հետեւանք է այն իրողութեան, որ Խորէն Կաթողիկոս Դաշնակցութեան ուղղութեան կը հետեւի։ Կուսակցութիւնը իր գիծը կը պարտադրէ Կիլիկեան Աթոռին երբ Անթիլիասի եկեղեցին պարտի ներկայացնել ամբողջ համայնքը եւ անոր շահերուն համաձայն գործել։

## ՅԱՐԳԱՆՔ... ԱՆԾԱՆՈԹ ԶԻՆՈՒՈՐԻՆ

Իմ յուշագրութիւնս կրնար երկար ըլլալ եթէ ուզէի մէկ առ մէկ թուել ամէնը եւ ծանրանալ նոյն իսկ մանրամասնութիւններու վրայ: Սակայն նախընտրեցի բաւարարուիլ հիմնականով եւ կարեւորով: Չեմ ուզեր ընթերցողն ու հանրութիւնը զբաղեցնել առանձին խնդիրներով, որոնք օգուտ չեն կրնար բերել ոչ Պատմութեան, ոչ յուշագրողին եւ ոչ ալ անձերուն որոնց մասին կը խօսուի: Մանաւանդ որ յուշերս կամ անոնց կարեւոր մասերը զրի առի ոչ թէ անձս փառաւորելու համար, այլ որոշ ճշմարտութիւններ կորուստէ փրկելու եւ նոր սերունդներուն օգտակար խորհուրդներ տալու համար:

Սակայն կրնայ ըլլալ որ ակամայ յիշողութենէս վըրիպին պարագաներ որոնց յիշատակումը իրապէս որ պակաս մը կրնայ նկատուիլ: Հաւանաբար ալ կան այդպիսի եղելութիւններ, որոնց մտաբերումը այլեւս շատ դժուար է հիմա: Տարիքս առած եմ եւ կը գտնուիմ կեանքիս վերջին հանգրուանը: Քաշուած եմ ազգայինհասարակական կեանքէ քանի այլեւս չունիմ տալիք բան մը: Ունեցածս, իր լաւագոյնով, արդէն յանձնած եմ ազգիս: Աւելի լաւ չէ<sup>o</sup> որ մարդ ինք գիտակցի որ հասած է ինքզինք հանգըտեան կոչելու ժամանակը: Փոխանակ իր այլեւս ոչ-պիտանի գոյութիւնը ուշագրութեան առարկայ պահել փորձելու, կամ պարտադրելու որ մարդիկ իրմով զբաղին: Ես անոնցմէ չեմ, եւ գիտեմ որ կան փառքի հետամուտներ որոնք տարրական իմաստութիւնը չունին ընդունելու որ ամէն մարդ, ամենէն օգտակար եւ տաղանդաւորն իսկ, պարուի ինքզինք պահել գիտնալ: Քիչ մը մեկուսի կենալ որ նորերը, յաջորդները գան եւ ստանձնեն իրենց գործը, շարունակեն իրենց վստահուած պարտականութիւնը:

ինծի համար աւելի մեծ ցաւ պիտի ըլլայ սակայն, ներկայ համեստ յուշագրքի հրատարակութենէն ետք հաստատելը, անդրադառնալը, որ յիշատակութեան արժանի այս կամ այն եղելութեան կողքին մոռցուած է յարգարժան դէմք մը, գովելի անձ մը որ իր գերով ու գործունէութեամբ արժանի է երախտագիտութեան: Գոնէ պիտի ուղիւ անձամբ վարձահատոյց ըլլալ, չմեկնած ըսել չնորհակալութեան խօսքս, եւ ինքզինքս, հոգիս զգալ աւելի թեթեւ այնուհետեւ...:

Անոնք կրնան ըլլալ մարտընկերներ, գործակիցներ, մեծ պարտականութեան ճամբու վրայ հանդիպած, նոյն ճակատագիրը, բախտը կրած նուիրեալներ, որոնց կրնաս հանդիպած չըլլալ առաքելութեան գլուխ հանուելէն ետք, բայց որոնց դէմքը, յիշատակը կը մնան մէջդ վառ, անմոռաց:

Եթէ կան այնպիսիներ որոնց անունն ու գործը չյիշելու անբախտութիւնը ունիմ այս պահուս, պիտի խնդրէի անոնց անծայր ներողամտութիւնը: Թող խնայեն ինծի, հաշուի ունենան ժամանակը եւ տարիքը: Բայց մնան համոզուած որ եղած եմ անկեղծ, յարգանքով ու գորովով լեցուն հանդէպ զինակիցներուս եւ ճակատագրի ընկերներուս:

## ԱՐԺԱՆԻ ՑԱՐԳԱՆՔ ՄԸ ... ԴԵՌ ԶՄՈՒՑԱԾ

Առիթէն օգտուելով պիտի շտապեմ – քանի դեռ վառ է յիշողութեանս մէջ – արժանի յարգանքը ընծայել գաղափարանուէր ընտանիքի մը: Քէչեան իզրայէլն եւ իր ընտանիքն է ան: Հրաշալի մարդ մը որ իր կողակիցով եւ զաւակներով նուիրուած էր ազատագրական շարժումին, իրենց բովանդակ կարելին ըրին յեղափոխական գործի յաջողութեան սատարելու համար:

Իմ առաջին տեռորը որ կատարուեցաւ այնքան մեծ յաջողութեամբ, կարեւոր չափով կը պարտիմ այս ընտանիքին աջակցութեան: Իմ զեկավարութեան ներքեւ գործող տղոց ընծայած են անհրաժեշտ ամէն օգնութիւն, դիւրացնելով Գործի կատարումը:

Իզրայէլ Քէչեանը ծնած է 1909 թուին, Կեսարացի

**ընտանիքէ:** Ունեցած է երկու զաւակ՝ Յարութիւնն ու Սոնան, որոնք մասնագիտութեանց տէր, դիրքի տիրացած պատուաբեր հայորդիներ են: Հայր Քէչեանը, որ մահացաւ 80 տարեկանին Փարիզի մէջ, սրտի կաթուածէ, իր Անգլիական Բանակի գինուոր հարիւրաւոր հայ որբեր փրկած է Թուրքերու ձեռքէն, բացի մղած փրկարար պայքարներէն՝ Մուշեղի խումբին մէջ, ուր աչքի զարկած է յանդզնութեամբ եւ զոհողութեան ոգիով: Յարգանք իր յիշատակին:



## Ի Ն Զ Ո Ւ Ի ՞ . . .

Ինչո՞ւ համար կտակ մը կը նկատեմ այս գիրքս:

Դեռ պատանի տարիքէս հայրենիքին ու ազգին նը-  
ւիրումի գաղափարը, մեր ժողովուրդին աղատագրութեան  
խէջալը զիս մղեց որ կեանքիս նպատակը դարձնեմ ծառա-  
յութիւնը եւ մտնեմ Դաշնակցութեան շարքերը:

Աւելի քան քառորդ դար, լուռ եւ յամառ, հետեւո-  
ղական եւ անսակարկ նուիրումով կատարեցի ինչ որ հայ-  
րենասիրութիւնս եւ ազգասիրութիւնս կը թելադրէին ին-  
ծի: Գործադրեցի զեկավար Վերին Մարմնին որոշումները  
որոնք ճիշդ էին եւ անհրաժեշտ, եւ ուգեցի գոնէ մասամբ  
նպաստած ըլլալ մեր ժողովուրդի գերազոյն իզձերուն ի-  
րականացման:

Այսօր, երբ թեւակոխած եմ արդէն 92 տարիքս,  
Հարկ կը սեպեմ շեշտելու որ ես հրաժարած չեմ Հ. Յ. Դաշ-  
նակցութենէն, այլ՝ ինքոյինքս մեկուսացուցած նկատելով,  
որ Կուսակցութեան ղեկավարութիւնը կը գտնուի ապիկար  
մարդոց ձեռքը եւ անկարելի է այլեւս օգտակար ու շինիչ  
աշխատանք տանիլ անկէ ներս: Կը մնամ գաղափարական  
մարդ, այլապէս գիծ քաշած պիտի ըլլայի իմ 25 տարուան  
հասարակական վաստակիս վրայ: Բայց իմ ըմբռնած Դաշ-  
նակցութիւնը այն չէ ինչ կը ներկայացուի այսօր, կամ կը  
դրսեւորուի Պիւրոյի գործունէութենէն:

## ՔԱՇՈՒԱԾ ԱՆՇԱՆ ԳԻՒՂ ՄԸ . . .

Հիմա քաշուած եմ անշան գիւղ մը եւ կը սպասեմ  
վերջին հանգրուանիս որ հեռու պէտք չէ ըլլայ:

Բոի, թէ ինչո՞ւ կտակ մըն է ասիկա:

Մարդը անցաւոր է: Ամէն ոք այցելու է կեանքի

մէջ, եկուոր մը որ, կարճ դադարէ ետք, պիտի մեկնի իրմէ ետք դալիքներուն ձգելով աւանդ մը, որ կրնայ պիտանի կամ անպէտ, լաւ կամ գէշ, գեղեցիկ կամ տգեղ ըլլայ:

Մեկնումի նախօրեակիս կը տեսնեմ որ նիւթական հարստութիւն չունիմ ձգելիք, ոչ ալ անձնական կեանքս, իր մանրամասնութիւններով, կրնայ հետաքրքրել ուրիշը կամ կրնայ ուշադրութեան արժանի նկատուիլ:

Ինչ որ ունիմ եւ ինչ որ պիտի կրնամ թողուլ եկող սերունդներուն եւ Պատմութեան, ատիկա պարզ ու համեստ կեանքի մը պատմութիւնն է:

Իմ միակ ժառանգս կը կազմէ մաքուր խիղճ մը, անսակարկ ծառայութիւն եւ ամբողջական նուիրում մը Հայրենիքիս եւ ժողովուրդիս:

Նուիրուեցայ եւ պայքարեցայ մոռնալով անձնականը եւ ամբողջ ունեցածս՝ իմացական կամ Փիղիքական յատկութիւն որպէս, տրամադրելով հաւաքականին: Միշտ համոզում ունեցայ որ մարդ-անհատէն կը մնայ ինչ որ անանձնական է, ինչ որ տուած է ուրիշին, ընդհանուրին, մեկնակէտ ունենալով Ազգն ու Հայրենիքը:

Ամենէն դժնդակ պահերուս չունեցայ զղջումը կատարածիս, գիտնալով որ պարտաւոր էի զայն կատարել, տալ իրը մարդ ու հայրենասէր:

## ՀԵՌՈՒԻ ԻՆՉՄԵ ՊԱՇՏՕՆԻ ԱՄԷՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ

Ամենէն պայծառ օրերուն կամ յաջողութիւններու պարագային իսկ մեծագոյն վարձատրութիւնս կազմեց Հայրենիքիս օգտակար եղած ըլլալու հանգամանքը: Ինձմէ միշտ հեռու մնաց դիրքի ու պաշտօնի շահագործումը յօդուտ անձնականին, եւ միշտ խորշած եմ եւ ունեցած աններող վերաբերում կեղծ ազգասէրներուն եւ պայմաններու համապատասխան դիրք եւ գոյն փոխողներուն նկատմամբ:

Կրնայի աւելին տալ եւ բնել: Համեստ կարողութիւններս աւելի երկար կրնայի տրամադրել ազգային նրապատակներու իրականացումին, ժողովուրդիս պայքարին եւ նոյն իսկ պատկանածս կուսակցութեան հատուածական շահերուն: Ես չեմ պատասխանատուն եթէ չկրցի: Թոյլ

չտրուեցաւ։ Կը ցաւիմ միայն որ կրնայի դեռ ծառայել,  
բայց միջոցը պակսեցաւ նեղմիտ ու այլասերած մարդոց  
խափանող միջամտութիւններուն հետեւանքով։

Կը մեկնիմ գալիք սերունդներուն ձգելով կեանքիս  
պատմութիւնը, բնութագիրս, վաստակս եւ դեռ՝ ձըգ-  
տումներս որոնք երազ մնացին։ Ինչպէ՞ս կը գնահատեն իմ  
ազգիս վաղուան զաւակները։ Օրինակելի բան կամ յար-  
գանքի արժանի գործ կը նկատե՞ն։ Եթէ գտնեն յիշարժան  
ու օգտակար գործ մը, ասկէ տպաւորուին ու ներշնչուին  
գէթ դոյզն չափով, ինքզինքս պիտի գտնեմ անհունօրէն  
վարձատրուած։ Ասիկա պիտի կազմէ իմ միակ եւ թանկա-  
գին ժառանգը՝ ձգուած յաջորդներու։

## ԻՆՉ ՈՐ Կ'ՈՒԶԵՄ ՃՈՂՈՎՈՒՐԴԻՄ ԶԱԻԱԿՆԵՐԵՆ...

**Պիտի ուզէի նաեւ որ իմ գաղափարի ազնիւ ընկերս,**  
**ժողովուրդիս զաւակը, իւրաքանչիւր հայ մարդ, դաս**  
**վերցնելով մեր պատմական անցեալի մոայլ ու լուսաւոր**  
**անցքերէն, գիտնար ճիշդ կողմնորոշուիլ, քայէ՛ր գործնա-**  
**կան եւ ճշմարիտ հայրենասիրութեան ճամբէն, հանրու-**  
**թեան դատաստանին յանձնէր կեղծ ժողովրդասէ՛ր ու գա-**  
**ղափարական ղեկավարներն ու մարդիկը, հաւատարիմ**  
**մնար իրաւ հերոսներու, խոնարհ և նուիրեալ մարտիկներու**  
**բարոյական աւանդներուն, եւ աւելի քան համոզում դար-**  
**ձրնէր այն իրողութիւնը, որ սիրել՝ իր անձը ընծայարե-**  
**րել կը նշանակէ, իսկ առանց մոռնալու իր անձը, սեփա-**  
**կան ու ժամակակաւորը, առանց յանձնառու ըլլալու զո-**  
**հողութիւններու գերագոյնին, կարելի չէ ճշմարիտ սկզբ-**  
**բւնքայնական եւ գաղափարական մարդ նկատուիլ:**

**Այս է իմ կտակը:**

## Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Ծ

Վատերու հաշուեյարդարի բաժինը աւելի յստակ պատկերացուցած ըլլալու նպատակով, պիտի ուզէի իմ կողմէ կատարուած զործերը ներկայացնել մասնաւոր կարգով եւ յիշատակութեամբ:

Նպատակս կրկնութիւն մը ընել չէ, այլ դիւրացնել դործը ապագայ պատմաբանին, եւ կանխել թիւրիմացութիւններն ու ցաւալի վրէպները:

Ստորեւ շարքը մաքրագործումներուն.

Ա.- Առաջին հաշուեյարդարը «Բոլիս» կարապետի վրայ: Ասիկա կ'ապրէր Գում-Գափու: Հետապնդումներէն խուսափելով փախաւ եւ հաստատուեցաւ Թոփի Գափու: Սակայն արդարութեան ձեռքը հասաւ մինչեւ իր թաքըստոցը: Իր հաշիւը մաքրողները եղան Զինկիլերցի Վարդանը եւ Թոփի Գափու բնակող իզրաէլ Քէչեանը:

Բ.- Վահէ Եսայեանը, որ իր արդար պատիժը ստացաւ: Շատ վտանգաւոր լրտես մըն էր: Ճամբան քալած միջոցին ստէպ ետին կը դառնար որ հետեւող չըլլայ իրեն: Զեռքը ամէն վայրկեան ատրճանակին վրայ կը պահէր: Ասոր հաշիւը մաքրողը եղաւ Արշաւիրը, որ ինամբ քիս ներքեւ մեծցած էր սկսեալ 12 տարեկանէն:

Գ.- Ալի Ռիզա ոստիկանապետը, որ զիս ճերբակալած էր, եւ իր հետ Յարութիւն Մկրտիչեանը միասին մաքրողը եղաւ Յովհաննէսը:

Դ.- Արամեանց, որ Հնչակեան մըն էր եւ կը նկատուէր մեղսակից Քսաններու խնդրին մէջ: Հաշուեյարդարի ենթարկուեցաւ իր Գում-Գափուի տան առջեւ: «Վերջացած» ըլլալը հաստատելու համար իսկոյն գացի եւ երկու ուսերէն վերցուցի, համոզուած ըլլալու համար որ անշընչացած է:

Ե.- Պուլկար Մակեղոնացին, որ Շաւարչ Միսաք-

**եանը ձերբակալած էր:** Զինք մաքրողը եղաւ Արշակը որ  
երկու «գործ» կատարած է:

**Զ.- Սայիտ Հալիմի հաշուեյարդարը Հոռվմի մէջ,**  
**Արշաւիրի միջոցաւ:**

**Ասոնցմէ դուրս գլուխ հանած եմ երեք տէռորներ**  
**Պուլկարիոյ մէջ:**

**Ա.- Վառնայի մէջ, Դաշնակցական խմբագիր մը,**  
որ քսան հազար քրոն իւրացուց: Ըմբոստացած էր Դաշ-  
նակցութեան դէմ: Ռոստոմի որոշումով կազմակերպեցի  
տէռորը, որուն գործադրողը Վարդօն եղաւ:

**Բ.- Լրտես Պետօ Սիրեճեանի քրոջ փեսան՝ Զերչի-**  
**եան Յակոբը:**

**Գ.- Քրիս Ֆեներճեանը, այլ անունով՝ Սիլվիօ Ռի-**  
չի, որ մասնակցած էր Սուլթանի մահափորձին, բայց չե-  
ղած իր ճամբէն հետագային: Պալքանեան Կեղը. Կոմիտէի  
որոշումով եւ Ռոստոմի հրահանգով մահուան դատապար-  
տուած էր:

## ԿԱՐԵՒՈՐ ՎՐԻՊԱԿ

Որպէս կարեւոր վրիպակ կը խնդրուի ուղղել 14-րդ էջին մէջ  
թոյլատրուած սխալը: Այնտեղ նկարագրուած է Ղարաբաղի ժողո-  
վուրդին կրած վնասը որ 24.000 հազար գնահատուած է, բարերախ-  
տաքար միայն 4000 եղած է:

Գիւն  
Ֆրանսա՞ 10 Ֆրանֆ  
Ամերիկաներ՝ 2 Տոնար  
Մ. Արեւելք՝ 200 Լ. Դ.